ՄԵԴԻԱ

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

[ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՇԱՐՔ]



[ԱՄՆ ՊԵՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ]

[ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՐՈ]

ՄԵԴԻԱ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

[ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՇԱՐՔ]

[ԱՄՆ ՊԵՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ]

[ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՐՈ]

[http://www.america.gov/publications/books/media_law.html]

[handbooks@state.gov]

Մեդիա օրենսդրություն ձեռնարկ
«Ձեռնարկների շարք» հրատարակություն

Հրատարակվել է 2010թ. ԱՄՆ պետքարտուղարության Միջազգային տեղեկատվական ծրագրերի բյուրոյի կողմից:
http://www.america.gov/publications/books/media-law.html
email: medialaw@state.gov

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ.
Համակարգող՝..... Դոն Մաքքոլ
Գործադիր խմբագիր՝..... Ջոնաթան Մարգոլիս
Հրապարակումների գրասենյակի տնօրեն՝..... Մայքլ Ջեյ Ֆրիդման
Գլխավոր խմբագիր՝..... Լինն Դի Շայբ
Կառավարող խմբագիր՝..... Անիտա Գրին
Գեղարվեստական տնօրեն/դիզայներ՝..... Դեյվիդ Հեմիլ
Հեղինակ՝..... Ջեյն Քըրթլի
Լուսանկարների որոնման պատասխանատու՝ Մեգի Սլայքեր

Ջեյն Քըրթլին 1999թ. օգոստոսից Մինիսոտայի համալսարանում «Լրագրության և զանգվածային հաղորդակցության» դպրոցի «Մեդիա էթիկայի և իրավունքի» Սիլիա կենտրոնի դասախոս է: Սիլիա կենտրոնի տնօրեն նա նշանակվել է 2000թ. մայիսին: Մինչ այդ, նա 14 տարի զբաղեցնում էր «Հանուն մամուլի ազատության լրագրողների կոմիտե» կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնն Առլինգտոնում, Վիրջինիա նահանգում: Նախքան Լրագրողների կոմիտեի աշխատակազմի անդամ դառնալը, Քըրթլին հինգ տարի իրավաբան էր աշխատում «Նիքսոն, Հարգրեյվ, Դիվանս և Դոյլ» իրավաբանական ընկերությունում, Նյու Յորքում և Վաշինգտոնում՝ Կոլումբիայի շրջան: Նա Նյու Յորքի, Կոլումբիայի շրջանի և Վիրջինիայի իրավաբանների կոլեգիայի անդամ է: Քըրթլին նաև լրագրող է աշխատում «Իվանսվիլ փրեսում»՝ նահանգ Ինդիանա, և «Օուք Ռիջեր ընդ Նեշվիլ Բենըրում»՝ Թենեսի նահանգ:

Դիմացի կազմ. Նկարազարդումները՝ © Shutterstock/-cuba- և © Shutterstock/Colorlife-ի

Պատկերները՝ **էջ 4.** Նկարազարդում՝ © Ադամ Նիկլվից/www.illustratorusa.com: **7.** Շնորհակալություն Մամուլի և լուսանկարների բաժնին, Կոնգրեսի գրադարան: **9.** © ԱՓ-ի նկարներ՝ Հարազ Գանբարի: **12.** Նկարազարդում՝ © Ջոդի Հյուգիլ: **15.** Շնորհակալություն Ազգային արխիվների և գրանցումների վարչությանը (ԱԱԳՎ): **17.** © ԱՓ-ի նկարներ՝ Հարազ Գանբարի: **19.** © ԱՓ-ի նկարներ/Թոմաս Կինզլ. **24.** Նկարազարդում՝ © Վիկտոր Սադովսկի: **27.** © ԱՓ-ի նկարներ/Ջոն Լենթ: **38.** © ԱՓ-ի նկարներ՝ Ռոն Էդմոնդս: **40.** © ԱՓ-ի նկարներ: **49.** © ԱՓ-ի նկարներ՝ Ռիչմոնդ Թայմզ-Դիսպեչ, Ջո Մահոնի: **60.** Նկարազարդում՝ © Դուգլաս Ֆրեյզեր/Լինդգրեն ընդ Սմիթ: **64.** Նկարազարդում՝ © Ռաֆայել Օլբինսկի: **67.** ԱՓ-ի նկարներ Ֆաբրիցիո Ջիովանոցցի: **68.** ԱՓ-ի նկարներ՝ Ջիմ Ուելզ: **77.** ԱՓ-ի նկարներ՝ Մարսիո Խոսե Սանչես: **80.** Նկարազարդում՝ © Բրեդ Հոլանդ: **84.** ԱՓ-ի նկարներ՝ Քեյթի Ուիլենզ, Ֆոնդ: **88.** Նկարազարդում՝ © Ռոբ Կոլվին/Images.com:

Հայերեն թարգմանությունն իրականացրել է Մամուլի աջակցության «**Ինտերնյուս**» հասարակական կազմակերպությունը: Գիրքը պատրաստվել է **Երևանում ԱՄՆ դեսպանության** Հասարակության հետ կապերի գրասենյակի Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագրի շրջանակներում: Դրամաշնորհ՝ N S-AM100-11-GR-122:

Թարգմանիչ՝..... Քրիստինե Սողիկյան
Խորհրդատու՝..... Մովսես Հակոբյան
Էջադրող՝..... Նատալի Հարությունյան
Խմբագիր՝..... Հարություն Մանսուրյան

Բովանդակություն

Ներածություն 5

Գիտակները չեն համաձայնում, որ լրատվամիջոցների դերը յուրահատուկ է: Եվ չնայած առկա տարաձայնություններին, ազատ հասարակությունում կան ազատ մամուլի՝ արտոնությունների և պատասխանատվությունների սահմանված չափորոշիչներ:

Լրագրողներին աջակցելու բարենպաստ միջավայր 13

Ազգային իրավական համակարգերը տարբեր են: Դրանց մի մասը մանրակրկիտ և հստակ, օրենքով նախատեսված համակարգեր են, մյուս մասն օրենքների, կանոնակարգերի և նախադեպային իրավունքի համակցություն է:

Հենք ազատ մամուլի համար 25

Ազատ մամուլի համար անհրաժեշտ հենքի ստեղծման օգտակար մեկնակետն այն իրավունքների որոշումն է, որոնք անհրաժեշտ են լրագրողական գործունեություն իրականացնելու համար:

Ինքնակարգավորում դատավարության փոխարեն 61

Լրագրողները և լրատվական ընկերությունները կարող են և սխալներ թույլ տալ: Տուժածներին դատարանները փոխհատուցում են առաջարկում: Իսկ ինքնակարգավորման մեխանիզմներն առաջարկում են արժեքավոր այլընտրանք:

Լրագրողների պատասխանատվությունը 65

Բազմաթիվ ինքնուրույն գործող ԶԼՄ կազմակերպություններ և լրագրողական միություններ ինքնակամ ընդունում են գործունեության կոդեքսներ կամ չափորոշիչներ, որոնք ուղենիշներ են դառնում և օգնում լրագրողներին որոշել իրենց գործն անելու լավագույն եղանակը:

Նոր մեդիա, քաղաքացի լրագրողներ և բլոգերներ 81

Թվում է՝ բլոգոսֆերայի ազատ աշխարհն, իսկապես, ազատ խոսքի վերջին բաստիոնն է: Բլոգերները հենց իրենք են իրենց օրենքը: Սակայն իրականում այդպե՞ս է արդյոք:

Տեղեկատվության ազատ փոխանակում և քաղաքացիական հասարակության զարգացում 89

Լրագրությունն առավելագույնս արդյունավետ է այն երկրներում, որտեղ հարգվում է օրենքի գերակայությունը: Ազատ մամուլը լավագույնս պաշտպանված է ազգային սահմանադրությամբ կամ կանոնադրական, կամ ընդհանուր/նախադեպային իրավունքով:

«Եվ սակայն, կարծիքի արդարահայտումը լռեցնելն առանձնահատուկ չարիք է, քանզի այս կերպ թալանվում է ողջ մարդկային ցեղը, թե՛ ներկա, թե՛ գալիք սերունդները, և հատկապես ու ավելի շատ թալանվում են նրանք, ովքեր դեմ են այդ կարծիքին, քան նրանք, ովքեր հարում են դրան»:

Ջոն Ստյուարտ Միլ
Անգլիայի փիլիսոփա և տնտեսագետ
1806–1873

Ներածություն

Գիտակները համաձայն չեն, որ լրատվական միջոցներն ունեն կոնկրետ դերակատարություն: Մի մասը կարծում է, որ լրագրողները պետք է սատարեն կառավարությանը և հանրությանը տրամադրեն միայն այն տեղեկատվությունը, որը կառավարությունը հարմար և անհրաժեշտ է համարում: Մի մասը կարծում է, որ մամուլը պետք է դառնա կառավարության հսկիչը՝ ձգտելով բացահայտել և հաղորդել իշխանության չարաշահման դեպքերի մասին:

Ոմանք կամենում են, որ մամուլը լինի պաշտպան, պայքարի հանուն արդարության և քաղաքական դիրքորոշում ստանձնի: Այլոք կարծում են, որ մամուլը պետք է լինի օբյեկտիվ և անկողմնակալ:

Ոմանք կարծում են, որ մամուլը պետք է հարգի և արտացոլի սոցիալական հաստատությունները և ավանդույթները: Այլոք համարում են, որ մամուլը պետք է դրանք կասկածի տակ առնի և մարտահրավեր նետի դրանց:

Այս գիրքն առաջ է քաշում այն տեսակետը, որ չնայած այս տարաձայնություններին, կան չափորոշիչներ, որոնք նկարագրում են ազատ հասարակությունում ազատ մամուլի արտոնությունները և պատասխանատվությունը:

1 **Ազատ և անկախ մամուլը էական է ցանկացած ազատ հասարակության համար:** Բայց ի՞նչ նկատի ունենք՝ ազատ մամուլ ասելով: Այս գրքում մենք նկատի ունենք մամուլ, որը չի ենթարկվում կառավարության անհարկի հսկողությանը և կարգավորմանը, մամուլ, որը ազատ է մասնավոր հատվածի, այդ թվում՝ գովազդատուների թելադրող ֆինանսական ազդեցությունից և չի ենթարկվում տնտեսական ճնշումների մասնավոր բիզնեսներից: Ազատ և անկախ մամուլն իր ընթերցողներին, դիտողներին և ունկնդիրներին տրամադրում է տեղեկատվություն, որն անհրաժեշտ է նրանց՝ ազատ հասարակության գործառություններին որպես լիարժեք քաղաքացիներ մասնակցելու համար:

2 **Ազատ մամուլը խիզախ է և հետևողականորեն շարունակում է լուսաբանել այն խնդիրները, որոնք կարևոր են իր սպառողների համար՝ առանց վախի կամ կանխակալության:** Այն մարտահրավեր կնետի ենթադրություններին, կասկածի տակ կառնի հեղինակություններին, և կորոնի ճշմարտությունը, անկախ նրանից, թե ուր կարող է տանել այդ որոնումը՝ դեպի իշխանության բարձրագույն շրջանակներ, լրատվական կազմակերպությունների սեփականատերեր: Կամ նույնիսկ

կարող է հանգեցնել վախճանի, ինչպես եղավ ռուս հետաքննող լրագրող Աննա Պոլիտկովսկայայի հետ, ում վրա վարձու մարդասպանը կրակեց Մոսկվայում 2006թ.:

3 Ազատ մամուլը պատասխանատու է:

Պատասխանատվության վերաբերյալ պատկերացումները փոխվում են երկրից երկիր և նույնիսկ տարեցտարի: Շատերի համար խաղաղության և կայունության ժամանակաշրջանում կիրառվող չափորոշիչները խիստ տարբերվում են պատերազմի կամ պետության համար արտակարգ իրավիճակների ժամանակաշրջանում կիրառվող չափորոշիչներից: Օրինակ՝ 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի վրա հարձակումներից մի քանի ամիս անց, Ֆրիդոմ ֆորումի՝ Առաջին փոփոխության կենտրոնի կողմից անցկացված հարցման արդյունքում պարզվեց, որ հարցված ամերիկացիների 46 տոկոսը կարծում էր, որ մամուլն ունի «չափազանց շատ» ազատություն: Այդ թիվն, անշուշտ, ավելի բարձր էր, քան հարձակումներից առաջ կամ 2009թ.՝ 39 տոկոս:

Այնուամենայնիվ, որոշ էական սկզբունքներ հաստատուն են մնում: Ազատ մամուլը պետք է որոնի ճշմարտությունը և հաղորդի այն: Այն պետք է անդադար ձգտի և հասնի ճշգրտության: Մամուլը երբեք չպետք է գիտակցաբար կեղծիք տպագրի:

Շատերը կհամաձայնեն, որ նույնիսկ ամենաազատ մամուլը պետք է իրացնի իր ազատությունն այն հստակ գիտակցմամբ, որ գործողությունները և խմբագրական որոշումներն ունենում են հետևանքներ, որոնց մի մասը խիստ էական են:

Մամուլը հսկայական իշխանություն ունի և իր ազդեցությունն է թողնում միլիոնավոր մարդկանց կյանքի վրա: Ինչպես ցանկացած այլ ազդեցիկ հաստատություն, այն պետք է պատրաստ լինի լսել բողոքներ, բացատրել իր որոշումները ընթերցողներին և դիտողներին, ինչպես նաև ընդունել և ուղղել սխալները: Սակայն այն պետք է նաև պատրաստ լինի ընդունել ոչ պոպուլիստական որոշումներ և խիզախորեն դիմակայել քննադատներին, երբ կարևոր սկզբունքներ են դրվում խաղաքարտին: Ոմանք կարող են սա մեծամտություն անվանել: Ես սա խիզախությունն եմ անվանում:

Խոսքի ազատություն և ազատ մամուլ

Միացյալ Նահանգներում, որտեղ ես ապրում եմ և որտեղ կատարում եմ իմ հետազոտական աշխատանքների մեծ մասը և որտեղ հիմնականում դասավանդում եմ, մամուլը մեծ մասամբ զերծ է կառավարության հսկողությունից, ինչը սահմանված է օրենքով: ԱՄՆ սահմանադրության Առաջին փոփոխությունը արգելում է Կոնգրեսին կամ նահանգների օրենսդիր մարմիններին այնպիսի իրավական ակտ ընդունել, որը կսահմանափակի խոսքի ազատությունը կամ մամուլի ազատությունը:

Այս բացարձակ և անվերապահ արգելքը ձևակերպվեց հեղափոխականների կողմից Ամերիկայի անկախության համար մղված պատերազմից (1775-1783) քիչ անց, մեծ լավատեսության, բայց և մեծ անորոշության ժամանակաշրջանում: Հետագա երկու հարյուր և ավելի տարիների ընթացքում երկրի դատարանները Առաջին փոփոխությունը մեկնաբանել են որպես ազդեցիկ, սակայն ոչ բացարձակ:

Միացյալ Նահանգների Գերագույն

դատարանը հստակեցրել է, որ խոսքի որոշ տեսակներ չեն պաշտպանվում Առաջին փոփոխությամբ, այդ թվում, օրինակ, պատերազմական պայմաններում զորքերի տեղաշարժերի մասին մանրամասների հրապարակումը: Այլ բացառությունների թվում են անպարկեշտ խոսքի կամ, այսպես կոչված, սադրիչ արտահայտությունների նկատմամբ կիրառվող սահմանափակումները, որոնք կանխատեսելիորեն կարող են բռնություն կամ քրեորեն դատապարտելի գործողություններ առաջացնել: Իսկ լրատվական միջոցները գրեթե միշտ ենթարկվում են ընդհանուր կիրառության օրենքներին, այսինքն՝ օրենքների, որոնք կիրառելի են յուրաքանչյուրի նկատմամբ, որոնք, սակայն չեն առանձնացնում մամուլի համար հատուկ պարտավորություններ կամ պատիժներ: Օրինակ՝ առանց թույլտվության հեռախոսային զրույցների գաղտնալսումը լրագրողների նկատմամբ կիրառելի են այնքանով, որքանով, ասենք՝ կորպորացիաների նկատմամբ:

Բայց նույնիսկ այս բացառությունները մեղմանում են այն արմատացած կանխավարկածի պատճառով, որ ցանկացած կառավարություն փորձելու է խեղդել ազատ մամուլը: Ինչպես ժամանակին գրել էր ամերիկացի մի դատավոր, մամուլի սկզբնական դիրքորոշումը հրապարակելն է: Կառավարությունը պետք է կրի ցանկացած սահմանափակումների արդարացման

Վերևում՝ Էնդրյու Հեմիլթոնը պաշտպանում էր Ջոն Պիտեր Զենգերին, *«Նյու Յորք Ուիքլի Ջորնալի»* հրատարակչին, ով մեղադրվում էր 1735թ. հրահրող զրպարտությամբ թագավորական նահանգապետին քննադատելու համար: Հեմիլթոնը պնդում էր, որ Զենգերի հրատարակածի ճշմարտությունն է իրական պաշտպանությունը զրպարտությունից: Ստենակալներն արդարացրին Զենգերին, մի գործողություն, որը Հեմիլթոնը գովաբանեց. «Դուք ազնիվ հիմք եք ստեղծել՝ երաշխավորելու բնության կողմից և մեր երկրի օրենքներով մեզ տրված իրավունքը՝ բացահայտելու իշխանության կամայականությունը և դիմակայելու դրան՝ ասելով և գրելով ճշմարտությունը»:

բեռը: Այս բանաձևը պահպանում է մամուլի՝ հսկիչի դերակատարությունը և հեշտացնում է կառավարության հաշվետվողականությունը:

Մամուլի հաշվետվողականությունը

Սակայն ո՞վ է հսկում հսկիչին: Ո՞վ է ապահովում, որ մամուլը հաշվետու լինի: Որոշ երկրներում այս հարցի պատասխանն է՝ կառավարությունը: Օրենքները, իրավական ակտերը և օրենսգրքերը մանրամասնորեն նկարագրում են լրատվական կազմակերպությունների ակնկալվող վարքագիծը: Այդ երկրներում լրագրողների իրավունքները հաճախ կախված են լինում պատասխանատվության իրագործումից: Խնդիրն այն է, որ կառավարության կողմից պատասխանատվության սահմանումը կարող է մեծապես տարբերվել հենց մամուլի կամ նույնիսկ հասարակության կողմից տրված սահմանումներից:

Այլ երկրներում հարցի պատասխանը կլինի՝ հենց մամուլն ինքը, ինչպես նաև սպառողը՝ ընթերցողն ու դիտողը:

Աշխարհի որոշ հատվածներում լրատվական կազմակերպությունները կամ անհատ լրագրողներն ընդունում են մասնագիտական էթիկայի կոդեքսներ: Օրինակ՝ Միացյալ Թագավորության Լրագրողների ազգային միության կոդեքսը: Այլ երկրներ էթիկական չափորոշիչները պարտադրում են որպես գրված օրենք: Միացյալ Նահանգներում առանձին լրատվական կազմակերպություններ ընդունել են իրենց սեփական էթիկական ուղեցույցները: Տիպականորեն այս կոդեքսները կամ ուղեցույցները սահմանում են հաստատության կանոնները, որոնք կառավարում են շահերի, ֆինանսական և այլ բնույթի բախումները:

Օրինակ՝ էթիկական ուղեցույցը կարող է խանգարել լրագրողին լուսաբանել այն ընկերության գործունեությունը, որտեղ աշխատում է նրա կինը կամ ամուսինը: Այն կարող է արգելել լրագրողին մասնակցել բողոքի երթի, կամ՝ քաղաքական բովանդակությամբ թռուցիկ փակցնել իր մեքենայի վրա, կամ՝ այդպիսի ազդագիր դնել տան դիմացի այգում, կամ՝ կրել ազգային դրոշը պիջակի օձիքին, երբ հաղորդում է լուրերը լրատվական ծրագրում: Կամ այն կարող է արգելել լրագրողին ընդունել նույնիսկ անվանական նվեր տեղեկատվության աղբյուրից: Այսպիսի ուղեցույցների նպատակն է պահպանել լրագրողական անկախությունը թե՛ արտաքնապես, թե՛ իրականում:

Թվում է, հարկ չկա, որ էթիկական ուղեցույցները բարձրացնեն ճշգրտության և ճշմարտախոսության հարցերը: Սակայն այն բանից հետո, երբ «Նյու Յորք թայմզում» աշխատող Ջեյսոն Բլերի նման լրագրողները կա՛մ հնարում էին, կա՛մ գողանում էին նորությունների պատմությունները և ներկայացնում իրենց խմբագիրներին, բազմաթիվ կազմակերպություններ վերանայեցին իրենց էթիկական ուղեցույցները՝ հստակեցնելու, որ պատասխանատու լրատվական կազմակերպությունը չի կարող երբևէ հաշտվել նմանատիպ քայլի հետ:

Երբեմն էթիկան և օրենքը հակադրվում են: Հյուսիսային Իռլանդիայում, օրինակ, Սյուզան Բրինը՝ դուբլինյան *«Սանդեյ Թրիբյունի»*՝ Բելֆաստում գտնվող թերթի խմբագիրը, կանգնեց իրավական և էթիկական դիլեմայի առջև: Բրինին զանգահարել էր մեկը, ով ստանձնում էր Անթրիմում Մասերինի զորանոցներում երկու զինվորների սպանության

պատասխանատվությունը: Ոստիկանությունը պահանջում էր, որ նա հանձներ բջջային հեռախոսը, համակարգչում պահվող արխիվները և իր գրառումները՝ Իրական իռլանդական հանրապետական բանակի հետ ունեցած շփումների մասին: Բրինը դիմադրում էր՝ փաստարկելով, որ այդպիսի արարքը կխախտեր իր մասնագիտական պարտավորությունը՝ պաշտպանել աղբյուրների գաղտնիությունը: Նա նաև հրապարակայնորեն ընդունեց, որ իրավապահ մարմինների պահանջները բավարարելը կարող էր վտանգել իր և իր ընտանիքի անդամների կյանքը: Բայց եթե նա հրաժարվեր ենթարկվել հրամանին, Բրինին սպասում էր 5 տարվա ազատազրկման հեռանկար՝ իրավապահ մարմինների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար:

2009թ. հունիսին Բելֆաստում մի դատավոր որոշում կայացրեց, որ Բրինից՝ նորությունների հավաքագրման արդյունքում ստացված նյութերը հանձնելու պահանջը վտանգի տակ կդներ նրա կյանքը՝ այս կերպ խախտելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

Ի հակադրություն սրան, Միացյալ Նահանգներում, *«Նյու Յորք թայմզի»* լրագրող Ջուդիթ Միլերը հրաժարվեց համագործակցել քրեական հետախուզության հետ, որը փորձում էր գտնել այն կառավարական պաշտոնյային, ով բացահայտել էր հետախուզության գաղտնի գործակալի ինքնությունը: Նույնիսկ դատական որոշումից հետո, որով լրագրողին չէր արտոնվում գաղտնի պահել իր աղբյուրի ինքնությունը, Միլերը չենթարկվեց վկայություն տալու հրամանին: 2005թ. նա 85 օր անցկացրեց բանտում: Որոշ դատավորներ և քաղաքացիներ պնդում են, որ լրագրողները երբեք չեն կարող իրենց օրենքից վեր դասել: Սակայն բազմաթիվ լրատվական կազմակերպությունների էթիկական քաղաքականությունները պահանջում են, որ լրագրողը հարգի աղբյուրին տված իր խոստումը, նույնիսկ եթե դա նշանակում է, որ

Վերևում՝ *«Նյու Յորք թայմզի»* լրագրող Ջուդիթ Միլերը բանտարկվեց դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար՝ հրաժարվելով բացահայտել տեղեկատվության գաղտնի աղբյուրը: Միլերը՝ իր իրավաբանների թիմի ուղեկցությամբ, դուրս է գալիս ԱՄՆ Շրջանային դատարանից, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, 2005թ. հունիսի 29:

նա պետք է բանտարկվի:

Տարբեր երկրներում իրավական և էթիկական դրույթները տարբեր են: Խելամիտ մարդկանց և հենց լրագրողների համար անգամ միանշանակ չէ՝ ինչպես դրանք կիրառել կոնկրետ իրադրությունում և արդյոք դրանք պատշաճ փոխզիջում են ապահովում հասարակական մրցակցող շահերի միջև:

Անձնական կյանքի գաղտնիության իրավունք և զրպարտանք

Ընդունելի՞ է արդյոք լրագրողի կողմից մարդու անձնական կյանքի գաղտնիության իրավունքի խախտումը: ԱՄՆ Գերագույն դատարանը որոշում է կայացրել, որ օրինական է, երբ մամուլը հրապարակում է սեռական բռնության ենթարկվածի անունը: Բայց արդյո՞ք դա ճիշտ է:

Ճի՞շտ է արդյոք լրագրողի համար՝ ծաղրել պետական պաշտոնյային կամ պարսավել կոնկրետ էթնիկ կամ կրոնական խմբի կողմից սուրբ համարվող որևէ անուն կամ պատկեր: Այն բանից հետո, երբ պոռնոգրաֆական *«Հասլեր»* ամսագիրը ծաղրի ենթարկեց իր կարծիքն անկաշկանդ կերպով բարձրաձայնող եկեղեցու սպասավոր Պատվելի Ջերի Ֆելուելին, ԱՄՆ Գերագույն դատարանը որոշեց, որ ազատ հասարակությունը պետք է հանդուրժի անգամ «անարգական» ելույթները, որպեսզի ապահովվի առողջ հասարակական բանավեճն ու քննարկումը: Ինչպես ժամանակին գրել է մի դատավոր. «Կեղծ գաղափար չկա: Որքան էլ վնասակար թվա այդ գաղափարը, դրա շտկման համար մենք կախում ունենք ոչ թե դատավորների և ատենակալների խղճից, այլև ուրիշ գաղափարների հետ նրա ունեցած մրցակցությունից»:

Մյուս կողմից, 2008թ. մարտին Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհուրդն ընդունեց մի բանաձև, որը դատապարտում է «կրոնների զրպարտանքը»: Իսկ շատ երկրներ պահպանում և կիրառում են օրենսդրական ակտեր, որոնք յուրաքանչյուրին՝ անգամ պետական պաշտոնյային հասցված վիրավորանքը կամ «արժանապատվության ոտնահարումը» համարում են հանցանք, անգամ եթե հիմքում ընկած փաստերը ճշմարիտ են:

Միացյալ Նահանգների Գերագույն դատարանը երբեք չի սպարել կառավարության փորձերին՝ թույլ չտալ մամուլին հրապարակել գաղտնի տեղեկատվություն: Պարբերաբար ծագում են կատաղի վեճեր՝ արդյոք կարելի է քրեորեն հետապնդել լրագրողներին լրտեսության վերաբերյալ օրենքների հիմքով: Չինաստանում, օրինակ, պետական գաղտնիքներ գողանալը հանցանք է, անկախ նրանից, թե ով է դա անում, իսկ պետական գաղտնիքների սահմանումը բավականին ընդգրկուն է: Բայց նույնիսկ եթե ենթադրենք, որ լրագրողները չեն խախտում օրենքը, ճի՞շտ է արդյոք, որ նրանք գաղտնի տեղեկատվություն հրապարակեն, հատկապես երբ հայտարարվում է, որ այդպիսի արարքը կարող է տեղեկացնել ահաբեկիչներին հսկողության մեխանիզմների մասին և թուլացնել հետախուզության՝ ապահովության և անվտանգության պահպանմանն ուղղված ջանքերը:

Թափանցիկություն

Չնայած նշված նկատառումներին, «թափանցիկություն» տերմինը դարձել է քաղաքացիական հասարակությունների նշանաբանը: Թե հանրային, թե մասնավոր

հասրատությունեներին կոչ է արվում ավելի բաց լինել իրենց գործառություններով, ֆինանսավորմամբ և կառավարմամբ: Տվյալների թվայնացումը և համացանցի համատարած հասանելիությունը կարող են օգնել այս հարցում: Սակայն տեղեկատվության հասանելիությունը նոր հարցեր է բարձրացնում անվտանգության և անձնական տեղեկատվության գաղտնիության առումով, ինչն ավելի է բարդացնում ֆիրմայի սեփականություն հանդիսացող կամ հեղինակային իրավունքով պաշտպանվող տեղեկատվության հետ կապված խնդիրները: Ճակատագրի հեգնանքով՝ ոմանք համարում են, որ տեխնոլոգիաները, որոնք առավելագույնի են հասցնում տեղեկատվության հասանելիությունը, սպառնում են այլ հիմնարար իրավունքների, ինչպես օրինակ՝ անձնական կյանք ունենալու իրավունքին կամ, ինչպես մի անգամ գրել է մի ամերիկացի իրավագետ, «հանգիստ թողնվելու» իրավունքին:

Այս պայթուցիկ խառնուրդին ավելացրեք չբացահայտված ինքնությամբ և թվացյալ անկառավարելի բլոգերների և քաղաքացիական լրագրողների լեգեոնները, որոնք գործում են հաճույքով, սակայն առանց որևէ նախնական ուսուցման կամ արտոնագրի: Նրանք, միանշանակ, հիմնական ԶԼՄ-ների աշխույժ գործակիցն են: Բայց մի՞թե նրանց այս միտումը՝ մարտահրավեր նետել ամեն ավանդականին և մերժել բոլոր կանոնները, չի հանգեցնի մամուլի կարգավորմանն ուղղված ավելի մեծ փորձերի:

Սրանք հեշտ հարցեր չեն: Եվ չկան հեշտ պատասխաններ:

Հեշտ չէ ապրել ազատ մամուլի պայմաններում: Այդ դեպքում ամեն օր քեզ մարտահրավեր են նետում ու վախեցնում, անհանգստացնում և վիրավորում:

Ազատ մամուլը սխալական է և ժամանակ առ ժամանակ չի կարողանում իրացնել իր ողջ ներուժը: Բայց զարգացող ժողովրդավարություններն ամբողջ աշխարհում ամեն օր ի ցույց են դնում իրենց խիզախությունն ու վստահությունը՝ գիտելիքը վեր դասել տգիտությունից և ճշմարտությունը գերադասել քարոզչությունից՝ հարելով ազատ մամուլի իդեալին:

Հեշտ չէ ապրել ազատ մամուլի պայմաններում: Բայց ես գիտեմ, որ չէի կարողանա ապրել առանց դրա:

—Ջեյն Քորթլի

«Ելակետ առնելով, որ մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է, ...»

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
Միավորված ազգերի կազմակերպություն
1948

Լրագրողներին աջակցելու բարենպաստ միջավայր

Ազգային իրավական համակարգերը տարբեր են: Քաղաքացիական (մայրցամաքային) իրավական համակարգ ունեցող երկրները, ինչպիսին են Գերմանիան և Ֆրանսիան, հաճախ ընդունում են մանրակրկիտ և հստակ օրենսդրական սխեմաներ, որոնք կառավարում են լրագրողների իրավունքները, պարտականությունները և պարտավորությունները: Ընդհանուր (նախադեպային) իրավական համակարգ կիրառող երկրներում, օրինակ՝ Միացյալ Թագավորությունում կամ Միացյալ Նահանգներում, իրավական ակտերի, կանոնակարգերի և նախադեպային իրավունքի համադրությունն է սահմանում ծավալուն իրավական այն սկզբունքները, որոնք ներառում են նաև մամուլի ազատությունը, անգամ եթե այդ օրենքները միշտ չէ, որ ուղղակիորեն վերաբերում են լրագրողներին և նրանց գործունեությանը:

Անկախ կոնկրետ իրավական մոտեցումից, լավ լրագրությունը ծաղկում է, երբ հասարակությունը հարգում և կիրառում է օրենքը: ԶԼՄ-ների մասին ժամանակակից օրենսդրության և էթիկայի մտավոր հիմքն ապահովում են իրավական, տեսական և փիլիսոփայական մտածողների, այդ թվում՝ Կոնֆուցիուսի, Միլտոնի, Ռուսոյի, Մայքլեյոնի և Միլի գործերը:

Միջազգային չափորոշիչներ

Միջազգային չափորոշիչները երաշխիքներ են տրամադրում ազատ արտահայտման համար: Սակայն այս չափորոշիչները նաև տիպականորեն ընդունում են պետության կողմից արտահայտման ազատությունը սահմանափակող որոշ օրինական հիմքեր: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը 1948թ. ընդունվեց Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից, իր հոդված 19-ում հայտարարում է.

> «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է իր

համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ իրազեկում և գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

Ապա հոդված 29-ը որակում է այս իրավունքը հետևյալ կերպ.

«...օրենքով սահմանված են բացառապես մյուսների իրավունքների ու ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգումն ապահովելու և դեմոկրատական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները՝ հասարակական կարգը և բարեկեցությունը բավարարելու նպատակով»:

Նմանապես, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան ասում է.

«Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածն արգելք չէ պետությունների համար՝ ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների արտոնագրում սահմանելիս»:

Բացարձակ սահմանումները կոնվենցիայի հետագա հոդվածներում հստակեցվում են.

«Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, վստահության պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Բազմաթիվ միջազգային փաստաթղթեր, հռչակագրեր և համաձայնագրեր որդեգրել են նմանատիպ մոտեցում, այդ թվում՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը, Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան: Մանրամասները տարբեր են, սակայն բոլորն էլ ճանաչում են արտահայտվելու ազատությունը: Դա հիմնարար իրավունք է, սակայն այնպիսին, որը կարող է սահմանափակվել պատշաճ կերպով կիրառվող օրենքներով, որոնք ստեղծված են հավասարազոր

հասարակական շահերը պաշտպանելու համար:

Ազգային չափորոշիչներ

Ազգային սահմանադրությունները նույնպես հաճախ երաշխավորում են մամուլի ազատությունը: Օրինակ, դեռ 1831թ. գրված Բելգիայի սահմանադրության 25-րդ հոդվածը ասում է.

> «Մամուլն ազատ է. երբեք չի կարելի կիրառել գրաքննություն, չի կարելի հեղինակներից, հրատարակիչներից և տպագրիչներից երաշխիք պահանջել: Եթե հեղինակը հայտնի է և բնակվում է Բելգիայում, ոչ հրատարակիչը, ոչ տպագրիչը, ոչ առաքիչը չեն կարող դատական կարգով հետապնդվել»:

Միացյալ Նահանգների սահմանադրության Առաջին փոփոխությունը, որը հաստատվեց 1791թ., նույնպես բացարձակ է.

> «Կոնգրեսը չպետք է կազմի որևէ օրենք, որը վերաբերում է կրոնի սահմանմանը կամ արգելում է դրա ազատ պաշտամունքը, կամ սահմանափակում է խոսքի կամ մամուլի ազատությունը, կամ արգելում է մարդկանց մասնակցել խաղաղ հավաքների և դիմել կառավարությանը՝ բողոքների բավարարման համար»:

Այլ ազգային սահմանադրություններ ընդունում են արտահայտվելու ազատության իրավունքը, բայց այն չեն համարում բացարձակ: Օրինակ՝ Սենեգալի սահմանադրության 8-րդ հոդվածը երաշխավորում է արտահայտվելու և համոզմունքի ազատություն, «որը ենթակա է օրենքներով և կանոնակարգերով սահմանվող սահմանափակումներին»: Նմանապես, Կիրգիզիայի Հանրապետության սահմանադրության հոդված 36(1)-ը

Congress of the United States,
begun and held at the City of New-York, on
Wednesday the fourth of March, one thousand seven hundred and eighty nine.
THE
RESOLVED
ARTICLES

Վերևում՝ Մամուլի ազատությունը հստակորեն պաշտպանվում է ԱՄՆ սահմանադրության Իրավունքների օրինագծի Առաջին փոփոխությամբ:

հայտարարում է, որ «զանգվածային լրատվամիջոցներն ազատ են», սակայն հետո այս դրույթը մեկնաբանում է հոդված 17(2)-ը.

> «Իրավունքների և ազատությունների կիրառման սահմանափակումները թույլատրվում են Կիրգիզիայի Հանրապետության սահմանադրությամբ և օրենսդրությամբ՝ միայն այլ անձանց իրավունքները և ազատությունները, հասարակական ապահովությունը և կարգը, տարածքային ամբողջականությունը և սահմանադրական կարգն ապահովելու նպատակներով: Սակայն այդ պարագայում սահմանադրական իրավունքների և ազատությունների էությունը չպետք է տուժի»:

Հավանաբար արդարացի կլիներ ասել, որ աշխարհում չկա որևէ երկիր, որը ազատ արտահայտվելու փայփայված, համընդհանուր և հիմնարար իրավունքը համարի բացարձակ: Այն ենթակա է սահմանափակման և փոփոխությունների, երբ մրցակից իրավունքներն ավելի ծանրակշիռ են համարվում: Արդյունքում, մամուլի ազատությանը վերաբերող որոշ օրենքներ կարող են ավելի շուտ թուլացնել, քան ուժեղացնել ազատ մամուլին տրամադրվող պաշտպանությունը:

Օրենքներ, որոնք խոչընդոտում են լրագրողի գործունեությունը

Գրաքննությունը՝ խոսքի և արտահայտվելու ազատության վրա կառավարության կողմից պարտադրվող սահմանափակումը, ազատ մամուլի մեծագույն սպառնալիքն է: Գրաքննությունը կարող է հանդես գալ մի քանի ձևով.

- պարտադիր արտոնագրման մեխանիզմներ,
- պարտադիր ստուգում նախքան հրապարակելը,
- քննության փուլի ընթացքում դատավարության չլուսաբանման մասին դատական որոշման հարկադրում,
- արտակարգ հարկեր կամ վճարներ,
- իրավական պաշտպանության կասեցում, որը սովորաբար տրամադրվում է այլ բիզնեսների կամ քաղաքացիների:

Հրապարակումից հետո այնպիսի պատժամիջոցների կիրառման սպառնալիքը, ինչպիսին են քրեական տուգանքները կամ ազատազրկումը, կարող է նույնքան ահաբեկել լրատվական կազմակերպությանը և հաշմել նրա աշխատունակությունը, որքան նախորդ սահմանափակումներից յուրաքանչյուրը:

Ավելի նուրբ, սակայն հավասարապես խնդրահարույց են մանդատները, որոնք կոնկրետ պարտականություններ և պատասխանատվության շրջանակ են պարտադրում մամուլին: Որոշ ինքնակալ երկրներ և ժողովրդավարական ռեժիմներ պահանջում են, որ մամուլը հրապարակի «ստուգված փաստեր» կամ «ճշմարտությունը»: Օրինակ՝ Իսպանիայի սահմանադրության 20-րդ հոդվածն ասում է. «Ճանաչվում են և պաշտպանվում են ...ցանկացած ԶԼՄ-ի կողմից ճշմարտացի տեղեկատվության ազատ հաղորդման և ստացման իրավունքները» (մեջբերումը՝ խմբագրի):

Ճշգրիտ տեղեկատվություն ապահովելու կառավարության ձգտումը հասկանալի է: Նախկին

դիկտատուրաներում, որտեղ քարոզչության և կեղծիքի հրապարակումը սովորական երևույթ էր, հասարակությունը ցանկանում է ստանալ բազմազան փաստեր շատ տարբեր աղբյուրներից: Իսկ լրագրության էթիկայի հիմնական սկզբունքն այն է, որ ոչ մի լրագրող չի ցանկանում գիտակցաբար տարածել ապատեղեկատվություն:

Բայց ճշգրտություն պահանջելը միայն ավելի շատ հարցեր է ծնում. ի՞նչ է ճշմարտությունը: Ո՞վ է որոշում՝ ինչն է ճշմարիտ: Կառավարությո՞ւնը:

Իհարկե, ճշգրտությունը պետք է լինի բոլոր լրագրողների նպատակը: Բայց հաճախ ժամանակի հետ փոխվում է նաև ճշմարտության ընկալումը: Երբ սկսում են զարգանալ թեժ լուրի իրադարձությունները, կարող է պարզվել, որ այն, ինչը սկզբնապես փաստ էր թվում՝ կեղծիք է:

Դրա վառ օրինակը տեղի ունեցավ 2009թ. սեպտեմբերի 11-ին, երբ ՍիԷնԷն (CNN) և Ֆոքս (Fox) մալուխային հեռուստատեսությունները հաղորդեցին, որ ԱՄՆ Առափնյա պաշտպանության գվարդիան կրակ էր բացել կասկածելի նավի վրա Պոտոմակ գետում, Վաշինգտոնում, Կոլումբիայի շրջան՝ Պենտագոնից ոչ հեռու, որտեղ նախագահ Բարաք Օբաման մասնակցում էր զոհերի հիշատակին կազմակերպված արարողությանը: Հիմնվելով ոստիկանական սկաներներին լսելու արդյունքում ձեռք բերված տեղեկատվության վրա՝ ՍիԷնԷնը նաև սոցիալական ցանցերի Թվիթեր ծառայությամբ տարածեց. «Առափնյա պաշտպանության գվարդիան դիմակայում է մի նավի այն

Վերևում՝ ՍիԷնԷնն անճշտություն էր թույլ տվել՝ հաղորդելով, որ Առափնյա պաշտպանության գվարդիան կրակ է բացել կասկածելի նավի վրա: Թեև յուրաքանչյուր լրատվական կազմակերպություն ձգտում է առաջինը հաղորդել լուրը, ԶԼՄ-ները պարտավոր են ստուգել և հաստատել փաստերի ճշգրտությունը:

ժամանակ, երբ Օբաման գտնվում է Պենտագոնում. ոստիկանական սկաներներով հաղորդվող տեղեկությունները վկայում են կրակոցների մասին»:

«Չիկագո Տրիբյունը» հաղորդեց, որ պահանջվել էր մոտավորապես 30 րոպե, որպեսզի հեռուստացանցերը հասկանան, որ իրենք պատահաբար լսել էին բաց ռադիո հաղորդումներ, որոնց ընթացքում անձնակազմը կրակոցների «դը՛շ-դը՛շ» ձայներ էր հանել և հայտարարել. «Մենք պարպեցինք 10 կրակահերթ»: Դա իրականում ամենօրյա ուսուցման մասն էր միայն և ոչ թե հարձակում: Սպիտակ տան մամլո քարտուղար Ռոբերտ Գիբսը հանդիմանեց հեռուստացանցերին խուճապ առաջացնելու համար՝ նկատելով. «Նախքան այսպիսի բաներ հաղորդելը, լավ կլիներ՝ ստուգեիք»: ՍիԷնԷնը պնդում էր, որ դեպքի մասին հաղորդելուց առաջ իրենք կապ էին հաստատել Առափնյա պաշտպանության գվարդիայի հասարակության հետ կապերի գրասենյակի հետ, որտեղից հայտնել էին, որ Առափնյա պաշտպանությունը տեղյակ չէ գետի վրա տեղի ունեցող որևէ գործողության մասին: Առափնյա պաշտպանության գվարդիան դեպքի շուրջ իր ունեցած դերակատարության համար ներողություն չխնդրեց, այլ միայն խոստացավ. «Կվերանայենք թե՛ մեր ընթացակարգերը, թե՛ այս վարժության կատարման ժամանակացույցը»:

Մեկնաբանները քննադատեցին լրատվական միջոցներին այն պատճառով, որ նրանք շտապել էին տեղեկատվություն տարածել՝ առանց մանրամասները ճշտելու: Սակայն այս օրինակը ցույց է տալիս լարախաղացի այն պիրկ ճոպանը, որի վրայով քայլում են լրատվական կազմակերպությունները, երբ թեժ նորություն են հաղորդում: Ավելի ու ավելի մրցակցային դարձող մեդիա շուկայում մեծ է պատմությունն առաջինը լուսաբանելու ճնշումը: Ասոշիեյթիդ փրեսի հին լոզունգը՝ «Լուսաբանիր առաջինը, բայց լուսաբանիր ճշմարտացիորեն» յոթ օր 24 ժամ առանց դադարի գործող աշխարհում թվում է հնաոճ և արտառոց: Այսօրվա աշխարհում ոչ միայն հիմնական ԶՄԼ-ները, այլ նաև բլոգերներ ու այլ «քաղաքացի լրագրողներ» կարող են հետևել և ակնթարթորեն հաղորդել իրադարձությունների մասին:

Պե՞տք էր արդյոք ՍիԷնԷնին և Ֆոքսին կառավարական պատժամիջոցի ենթարկել իրենց հաղորդման մեջ թույլ տրված ոչ չարամիտ սխալի համար: Միացյալ Նահանգներում պատասխանը կլիներ՝ «ոչ»: Սակայն այլ երկրներում այսպիսի սխալը կարող էր հանգեցնել տուգանքի կամ արտոնագրի կորստի:

Առափնյա պաշտպանության գվարդիայի հետ կապված դեպքն անհանգստացնող էր, բայց փաստացի անհամապատասխանություններն արագորեն գտնվեցին ու լուծվեցին: Գլոբալ տաքացման կամ ֆինանսական ու առողջապահական ճգնաժամերի նման խնդիրներին առնչվող փաստերն ի հայտ են գալիս աստիճանաբար: Ինչպե՞ս կարող են լրագրողները որոշել ճշմարտությունը տվյալ պահին: Եվ ո՞րն է կառավարության կամ հասարակության պատասխանատվությունն այս փաստերի որոշման և մեկնաբանության կապակցությամբ: Իրականությունն այն է, որ լրագրությունը ճշմարտությունը բացահայտելու միակ միջոցն է: Անկախ հասարակությունում քաղաքացիների և ոչ թե կառավարական մարմինների գործն է

սրուգել փաստերը բազմազան աղբյուրներում, նախքան կորոշվի ճշմարտությունը:

Մի ակնհայտ օրինակ. ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը 1996թ. կոչ արեց Ռուանդային՝ գտնել և արգելափակել այն ռադիոկայանները, որոնք ատելություն սերմանող և զանգվածային բռնության գործողություններ հրահրող քարոզչություն էին տալիս: Այս դեպքը կարևոր հարց բարձրացրեց. պե՞տք է արդյոք պատասխանատվության ենթարկել ԶԼՄ-ներին՝ իրենց սպառողների կատարած բռնարարքների համար:

Պատժի կարող են ենթարկվել նաև նրանք, ովքեր մարտահրավեր են նետում պատմական իրադարձությունների վերաբերյալ ընդունված ճշմարտությանը: Թուրքիայում հանցանք է համարվում Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի զանգվածային ջարդերի մասին խոսելը: 2007թ. նեոնացիստ Էռնստ Զյունդելը բանտարկվեց Գերմանիայում այն բանից հետո, երբ հրապարակեց հայտարարություններ,

Վերևում՝ Էռնստ Զյունդելը՝ *«Հիտլերը, որին սիրում ենք և այդ սիրո պատճառները»* գրքի հեղինակը և *«Արդյո՞ք իրականում վեց միլիոն է մահացել»* գրքի հրատարակիչը, 2007թ. ստացավ գերմանական օրենսդրությամբ առավելագույն թույլատրելի պատիժը՝ ատելություն սերմանելու և Հոլոքոստի ժխտման համար: Հոլոքոստի մերժումը առանձնակի քրեական հանցանք է մի շարք եվրոպական երկրներում:

որոնցում նա ժխտում էր Հոլոքոստը, ինչը Գերմանիայի Քրեական օրենսգրքի խախտում է:

Խնդիրներն ի հայտ են գալիս, երբ կառավարությունը հայտարարում է, թե որն է ճշմարտությունը՝ կիրառելով վիրավորանքի վերաբերյալ այն օրենքները, որոնք արգելում են միապետերի, քաղաքական գործիչների կամ այլ պետական պաշտոնյաների, ազգային խորհրդանիշերի, կոնկրետ ռասայի կամ կրոնի քննադատությունը: Ամբողջ աշխարհում տասնյակ երկրներ, ներառյալ Եվրամիության անդամներից մի քանիսը, նաև՝ նախկին Խորհրդային Միության, Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրները ընդունել են այդպիսի օրենքներ: Թեև կոնկրետ ձևակերպումները տարբերվում են, բայց դրանք միաժամանակ թե՛ խիստ ընդգրկուն են, թե՛ աղոտ, և կառավարությունները կարող են դրանք հեշտությամբ օգտագործել՝ պատժելու այլախոհությունը և լռեցնելու քննադատությունը:

Խնդրի մի այլ կողմ ի հայտ է գալիս, երբ անցանկալի հրապարակումները ճնշելուն ուղղված ջանքերը հատում են ազգային պետությունների սահմանները կամ նախաձեռնվում են ոչ պետական գործիչների կողմից: Այսպիսի դեպքերից ամենահայտնին 1989թ. փետրվարին Իրանի հոգևոր առաջնորդ Այաթոլլա Ռուհոլլահ Խոմեյնիի կողմից արձակված *ֆեթվան* է, որով առատաձեռն նվիրատվություն էր առաջարկվում բրիտանացի հեղինակ Սալման Ռուշդիի մահվան դիմաց: Հեղինակի *«Սատանայական չատիածները»* Խոմեյնին հայտարարեց «ապտվածանարգ՝ Իսլամի նկատմամբ»: 2005թ. սեպտեմբերին դանիական *«Ջիլանդս փոսթեն»* թերթը հրատարակեց խմբագրական

ծաղրանկարներ, որոնք պատկերում էին Մուհամմեդ մարգարեին: Նորից ներկայացվեցին ասփվածանարգության մեղադրանքներ: Հետևեցին կատաղի բողոքներ, և սպառնալիքներ հնչեցին ծաղրանկարչի կյանքին: Ասփվածանարգման մեղադրանքները ներկայացվում են ոչ միայն մահմեդականների կողմից: Միայն 2008թ. հուլիսին էր, որ Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատը քվեարկեց՝ ասփվածանարգման և անարգական զրպարտանքի հանցանքներն ըստ ընդհանուր/նախադեպային օրենքների վերացնելու օգտին:

Պարտադիր արտոնագրում

Լրագրողների գործունեությանը խոչընդոտելու մեկ այլ մեխանիզմ է կառավարության կողմից պարտադիր արտոնագրման կիրառումը: Սա սովորաբար արդարացվում է որպես օժանդակ միջոց՝ ապահովելու, որ միայն համապատասխան որակավորում ունեցող անձինք իրականացնեն լրագրողի մասնագիտական գործունեությունը: Սակայն, ինչպես Նյու Յորքում գտնվող «Ֆրիդոմ հաուսի» ներկայացուցիչ Լեոնարդ Սասմենն է գրում. «Կառավարության կողմից մամուլին տրվող արտոնագիրը գրաքննության զենքերի միջից հին ու սիրված մուշկետն է»: Պարտադրվող արտոնագրումը և՛ որոշում է, թե ով կարող է լինել լրագրող, և՛ սահմանում է լրագրության ու մեկնաբանության ընդունելի համարվող չափանիշերը: Կարճ ասած՝ այն խրախուսում է ինքնագրաքննությունը և խեղդում այլախոհությունն ու բանավեճը:

Նույնիսկ այն երկրներում, որտեղ *յուրաքանչյուրն* իրավունք ունի զբաղվել լրագրությամբ, հեռարձակող, մալուխային, համացանցային կամ նույնիսկ տպագիր լրատվական *կազմակերպություն* ունենալու համար արտոնագրումը կարող է պարտադիր լինել: Իր էությամբ՝ հեռարձակող կամ մալուխային կազմակերպության գործունեության ծածկույթը սահմանափակված է կոնկրետ աշխարհագրական տարածքով և սպառողների թվով: Շատ երկրներ որոշել են, որ կառավարական մի մարմին պետք է լինի «թրաֆիկի թողունակության ոստիկանը», որը հատկացնում է գործարկման հաճախությունները հեռարձակման միջակայքում կամ կոնկրետ օպերատորների տրամադրում է մալուխային կամ համացանցային ծառայություններ մատակարարողների «բնական մենաշնորհը»:

Առանց այս տիպի արտոնագրման ցանկացած ոք կկարողանար, օրինակ, հեռարձակել նույն ռադիո հաճախականությամբ, ինչ իր հարևանը: Արդյունքում իսկական քաոս կլիներ: Բայց և այնպես, երբ պետությունն է ընտրում, թե ում պետք է թույլ տրվի գործարկել էլեկտրոնային ԶԼՄ-ները, տեղեկատվության հոսքին խոչընդոտելու իրական վտանգ է ստեղծվում: Որոշ երկրներում պետության սեփականություն հանդիսացող *հանրային* հեռարձակման ավանդույթի պարագայում անկախ ԶԼՄ-ների համար, եթե ոչ անհնարին, ապա դժվար է տեղ գտնել հեռարձակման միջակայքում: Այն պետություններում, որտեղ գերակշռում են մասնավոր սեփականությամբ առևտրային ԶԼՄ-ները, հարատև քննարկման խնդիր է, թե որչա՞փ կարող է պետությունը միջամտել ծրագրերի բովանդակության և խմբագրական որոշումների կայացմանը, երբ քննում է արտոնագրման կամ արտոնագրի

թարմացման համար ներկայացված դիմումները:

Մյուս կողմից, ոմանք պնդում են, որ հեռարձակման ռադիոալիքները հանրային միջոց են, որը պետք է գործարկվի հիմնականում որպես հանրային ծառայություն կամ, ինչպես ձևակերպված է 1934թ. Հաղորդակցությունների մասին ակտում (ԱՄՆ). «ի շահ, ի նպաստ և ի անհրաժեշտություն հանրության»: Էլեկտրոնային լրատվամիջոցների սփռման առանձնահատկությունը փաստարկվում է որպես կառավարության կողմից բովանդակության վրա ավելի խորը միջամտության արդարացնում: Մյուս կողմից, հեռարձակողները պետք է ունենան նույն խմբագրական ինքնուրույնությունը, ինչ տպագիր մամուլը, և ենթարկվեն միայն արտահայտումը կառավարող ընդհանուր կիրառության օրենքներին, որոնք վերաբերում են զրպարտանքին, անձնական կյանք ներխուժմանը և անպարկեշտությանը:

Կարգավորումն ու համացանցը

Հաղորդակցության յուրաքանչյուր նոր միջոցի առաջացմանը զուգահեռ կառավարությունը գործադրում է տեղեկատվությունը վերահսկելու նոր ջանքեր: Չինաստանը, Իրանը, Սաուդյան Արաբիան, Թունիսը, մի շարք այլ պետություններ արգելափակում են կայքերի հասանելիությունը՝ դրանց քաղաքական կամ մշակութային բովանդակության հիման վրա, հետևում են համացանցում անհատների գործողություններին և համացանցի ծառայության մատակարարներին կամ ամենախիստ սահմանափակումներն են պարտադրում ինտերնետային ծառայություն մատուցողներին: Նույնիսկ Ավստրալիայի, Ֆրանսիայի, Հնդկաստանի և Միացյալ Նահանգների պես հասուն ժողովրդավարական երկրները սահմանափակում են հասանելիությունը կամ պատժում են այնպիսի առցանց տեղեկատվության հրապարակման համար, որը նրանք համարում են առարկելի:

Համացանցն անհատներին տրամադրում է աննախադեպ հնարավորություն՝ հաղորդակցվելու առանց թերթերի, հեռուստատեսության կամ որևէ այլ ավանդական ԶԼՄ-ի վրա հույս դնելու: Բայց շատ երկրների օրենսդրությունը գրվել է դեռ այն ժամանակաշրջանում, երբ ըստ *«Նյու Յորքեր»* ամսագրի ջատագով Էյ Ջեյ Լիբլինգի՝ «Մամուլի ազատությունը պատկանում է այն մարդուն, ում պատկանում է տվյալ լրատվամիջոցը»: Որոշ երկրներում անհատին տրվում է իրագործելի իրավունք՝ պատասխանել իրեն վերաբերող հոդվածին, որը տվյալ անձը համարում է կեղծ, ոչ ճշգրիտ, անարգող կամ մոլորեցնող: Այս օրենքների տրամաբանությունն է. քանի որ ռադիոն և հեռուստատեսությունը, նաև թերթերը գտնվում են մի քանիսի ձեռքում, գաղափարների ազատ փոխանակումը պահանջում է, որ նրանք այլախոհներին լսելի լինելու հնարավորություն տան:

Հիմնվելով այն գաղափարի վրա, որ լրատվական կազմակերպությունը պարտավոր է լինել *արդարացի*, պատասխանելու օրենսդրական իրավունքը իրեն է վերագրում լրատվական կազմակերպության խմբագրական լիազորությունը՝ պահանջելով խմբագրին հրապարակել նյութ, որը նա այլ պարագայում չէր հրապարակի: Երբ խմբագիրները հարմարեցնում են իրենց լուսաբանումը՝ փորձելով խուսափել պատասխաններ հրատարակելու պարտադրանքներից,

արդյունքն ավելին է, քան ինքնագրաքննությունը: Ինչպես գրել է ԱՄՆ գերագույն դատարանի դատավորը մի գործում, որը բողոքարկում էր Ֆլորիդա նահանգի պատասխանի իրավունքի մասին իրավական ակտը. «Թերթը կամ ամսագիրը կոմունալ ծառայություն չէ, որը ենթակա է «խելամիտ» կառավարական կանոնակարգման այնպիսի հարցերում, որոնք ազդում են լրագրողի որոշման վրա, թե ինչ է պետք տպել»:

Ճակատագրի հեգնանքով, համացանցը, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր անձի դառնալ հրատարակիչ, այնուամենայնիվ, խրախուսում է պատասխանի իրավունքի կիրառումը բլոգերների և այլ թվային միջոցների հետ աշխատող լրագրողների նկատմամբ: 2006թ. Եվրախորհրդարանն ընդունեց Եվրոպայի խորհրդի մի առաջարկ, ըստ որի, պատասխանի իրավունքը պետք է պարտադրվի նաև առցանց լրատվամիջոցներին: Խորհուրդը փաստում էր, որ տարածության և ժամանակի ֆիզիկական սահմանափակումները, որոնք առկա են ԶԼՄ-ների ավանդական տեսակներում՝ թերթում, ռադիոյում կամ հեռուստատեսությունում, չեն կիրառվում կիբերտարածությունում՝ ծայրահեղորեն նվազեցնելով պատասխանի արտոնության իրացման հնարավորությունը: 2009թ. Ֆիլիպինյան օրենսդրությունը քննում էր այն օրինագծերը, որոնք պահանջում են յուրաքանչյուրից, ով հաղորդակցվում է համացանցով, ներառյալ բլոգերները և սոցիալական ցանցերում հայտարարություններով հանդես եկողները, պատասխանի իրավունք տալ ցանկացած անձի, ով համարում է, որ իրեն վնաս է հասցվել: Հավանաբար, հարկադիր հրատարակումը գրաքննության ևս մի ձև է:

Օրինական և մրցակից շահերի հավասարակշռումը

Գրաքննության ամենանենգ և ծածուկ կողմն այն է, որ առաջին հայացքից այն կարող է արդարացի կամ խելամիտ թվալ:

- Ինչու՞ կառավարական պաշտոնյան չպետք է իրավասություն ունենա կանխել լրատվական կազմակերպության կողմից գաղտնի տեղեկատվության հրապարակումը՝ հանուն ազգային անվտանգության պաշտպանության:
- Ինչու՞ դատարանին չպետք է թույլատրվի արգելել լրագրողին հրապարակել մարդասպանության մեղադրանքով դատվող պաշտպանյալի քրեական անցյալը:
- Ինչու՞ անհատը չպետք է իրավունք ունենա պահանջել, որ հեռարձակողը զերծ մնա այնպիսի կադրեր եթեր տալուց, որը կարող է բացահայտել խիստ անձնական տեղեկատվությունը, օրինակ՝ սեռական բռնության ենթարկված երեխայի ինքնությունը:
- Ինչու՞ արտոնագրող խորհուրդը չպետք է լիազորություն ունենա դադարեցնել գրքի կամ ֆիլմի տարածումը, որը համարվում է հանրային բարքերին հակասող:
- Ինչու՞ ռասիստական կամ «ատելություն սերմանող» ելույթներն արգելող օրենքները չպետք է պաշտպանվեն:

Անկախ նրանից, թե ինչպես է հասարակությունը լուծում նման բարդ խնդիրները, վտանգն այն է, որ չափազանց հաճախ այս խելամիտ

թվացող սահմանափակումները օգտագործվում են որպես մամուլի ազատությունը և ոչ մասսայական կարծիքների ու գաղափարների տարածումը զսպելու միջոց: Սա չի նշանակում, որ մամուլի ազատությունը անխուսափելիորեն կգերազանցի կամ պիտի գերազանցի այլ հիմնարար արժեքներ: Մարտահրավերն օրինական և մրցակից շահերի միջև հավասարակշռությունը պահպանելն է: Սա հեշտ խնդիր չէ:

«Անշուշտ, մամուլի ազատությունն էական է ազատ պետության համար. սակայն այն կայանում է հրատարակումների վրա նախնական արգելք չդնելու և ոչ թե քրեական գործի հրատարակումից հետո պարտավանքից զերծ լինելու մեզ»:

Ուիլյամ Բլեքսթոն
Անգլիայի դատավոր, իրավագետ և պրոֆեսոր
1723–1780

Հենք ազատ մամուլի համար

Երբ սկսում ենք հենք ստեղծել ազատ մամուլի համար, նախ պետք է հաշվի առնենք, թե որ իրավունքներն են էական, որպեսզի լրագրողները կատարեն իրենց աշխատանքը: Այստեղ կարող են ներառվել նախնական արգելքների բացակայությունը, տեղեկատվության հարկադիր բացահայտումից պաշտպանությունը, կառավարական տեղեկատվության և դատավարության արձանագրություններին հասանելիության իրավունքը, կառավարական պաշտոնյաներին և հասարակական գործիչներին քննադատելու իրավունքը, անհատների մասին լուրի արժեք ունեցող տեղեկատվության հավաքումը և հրապարակումը, կառավարության արտոնագրման սահմանափակումները՝ լրագրողների և լրատվական կազմակերպությունների նկատմամբ և միայն կոնկրետ ու զգուշորեն հարմարեցված սահմանափակումները՝ անպատշաճ և անվայել խոսքի նկատմամբ:

Նախնական արգելքի բացակայություն

18-րդ դարի անգլիացի իրավագետ Ուիլյամ Բլեքսթոնը պնդում էր. «Անշուշտ, մամուլի ազատությունն էական է ազատ պետության համար. սակայն այն կայանում է հրապարակումների վրա *նախնական* արգելք չդնելու և ոչ թե քրեական գործի հրապարակումից հետո պարսավանքից զերծ լինելու մեջ»: Բլեքսթոնը կարևոր տարանջատում էր կատարում: Անգլիական կառավարության իրավասությունը արտոնագրել և հսկել թե՛ նրանց, ովքեր կարող էին գործարկել մամուլը, թե՛ այն, ինչ կարելի էր հրապարակել, արտահայտվելու ազատության ամենաբնորոշ սահմանափակումն էր: Կանխելով խոսքը նույնիսկ նախքան այն հնչելը, կառավարությունը խեղդում է ցանկացած քննարկում և այլախոհություն:

Բայց, Բլեքսթոնի կարծիքով, հրատարակիչը հավանաբար պատշաճ կերպով կկրեր պատասխանատվությունը այն բանի համար, ինչ նա կորոշեր տարածել: Բլեքսթոնը չէր ընդունում կառավարության կողմից գրաքննությունը մինչ հրապարակումը, բայց նա, այնուամենայնիվ,

թույլատրելի էր համարում պատժամիջոցների կիրառումը հրապարակումից *հետո*:

Միայն շատ հազվագյուտ դեպքերում կարող է երկիրը գնալ այնքան հեռու, ինչքան առաջարկում էր Բլեքսթոնը՝ բացարձակ անօրինական համարելով ցանկացած նախնական արգելք մամուլի վրա: Այստեղ մենք կքննենք արգելքների մի քանի տեսակներ, որոնք օրինական են շատ երկրներում: Ստորև ներկայացված են այն հանգամանքները, որոնց ներքո նախնական արգելքը կարող է պատշաճ համարվել.

- Պետք է լինի շահի անհերքելի առկայություն:
- Արգելքի կարգադրությունը պետք է լինի խիստ մանրակրկիտ, կոնկրետ դեպքի համար կիրառելի և իր ծավալով ոչ ավելի ընդգրկուն, քան անհրաժեշտ է՝ տվյալ անհերքելի շահը համապատասխանաբար բավարարելու համար:
- Կարգադրությունը պետք է լինի հստակ իր տերմինաբանությամբ և իր տևողությամբ այնքան սահմանափակ, որքան հնարավոր է:
- Հարկ է ցույց տալ, որ կարգադրությունն իրականում առաջ կմղի հաստատված անհերքելի շահը կամ կկանխի հայտնաբերված վնասը:
- Կարգադրության մասին ծանուցումը և նրա դեմ առարկությամբ հանդես գալու հնարավորությունը պետք է տրամադրվեն նախքան հրամանի հարկադիր կիրառումը:

Ի՞նչ տիպի շահեր կարող են բավարար կերպով անհերքելի լինել՝ արդարացնելու նախնական արգելքը: Այդպիսի շահերը կարող են ներառել.

- գաղտնի կամ ընկերության գաղտնիք հանդիսացող գործարար տեղեկատվությունը,
- խիստ անձնական բնույթի տեղեկատվությունը,
- նյութը, որը պաշտպանված է հեղինակային իրավունքով,
- ընթացքի մեջ գտնվող քրեական հետաքննության կամ հետապնդման վերաբերյալ տեղեկատվությունը,
- անպարկեշտ կամ անբարո նյութը:

Բայց հավանաբար ամենահաճախ օգտագործվող արդարացումը ազգային անվտանգությունն է: Սա իրական դիլեմա է լրագրողների համար: Մի կողմից, ոչ մի լրագրող չի ցանկանում վնասել ազգային անվտանգությանը՝ տարածելով տեղեկատվություն, որն իրական սպառնալիք է ներկայացնում: Մյուս կողմից, կառավարական պաշտոնյաները կարող են չդիմանալ գայթակղությանը և օգտագործել ազգային անվտանգությունը՝ արդարացնելու կիրառվող գրաքննությունը:

Միացյալ Նահանգների Գերագույն դատարանը քննում էր *«Նյու Յորք թայմզ» ընկերությունն ընդդեմ Միացյալ Նահանգների* գործը (1971թ.): Այն հաճախ անվանվում է «Պենտագոնի փաստաթղթերի գործ»: Երբ *«Նյու Յորք թայմզը»* սկսեց հրատարակել հատվածներ Վիետնամում ԱՄՆ-ի ռազմական մասնակցության վերաբերյալ գաղտնի փաստաթղթերից, նախագահ Ռիչարդ Մ. Նիքսոնի վարչակազմը փորձեց արգելքի դատական կարգադրություն ստանալ՝ հետագա հրապարակումները կանխելու համար: Գերագույն դատարանը վճիռը կայացրեց ի վնաս կառավարության: «Նախնական արգելքի ցանկացած համակարգ գալիս է այս դատարան՝ իր

սահմանադրական գործողության դեմ ծանր կանխավարկածով», - նշեց դատարանը և եզրակացրեց, որ այս դեպքում կառավարությանը չէր հաջողվել պատշաճ կերպով կրել «այսպիսի արգելքի կիրառումն արդարացնող ծանր բեռը»:

Համառոտ կարծիքն այնքան էլ խորությամբ չէր բացատրում դատարանի պատճառաբանությունը: Դժվար է որոշել այն պայմանները, անգամ եթե դրանք առկա են, որոնք կարող են ապագայում որևէ դեպքի համար արդարացնել նախնական արգելքի կիրառումը: Մենք միայն գիտենք, որ կառավարությունն այս դեպքում չբավարարեց արգելքի կիրառումը: Դատարանը չասաց, որ հետագայում միշտ այդպես է լինելու:

Իրականում, *«Պենտագոնի փաստաթղթերի»* գործն անհաղթահարելի պատնեշ է ստեղծել ԱՄՆ-ի կառավարության կողմից ազգային անվտանգության հիմքերի վրա հարկադրվող գրաքննության համար: Այդ ժամանակից ի վեր երբեք Գերագույն դատարանը չի սատարել ԶԼՄ-ի նկատմամբ նախնական որևէ արգելք՝ ազգային անվտանգությանը վերաբերող տեղեկատվության հրապարակման հիմքով՝ անգամ սեպտեմբերի 11-ից հետո:

Տարածքային ընդդատության սահմանափակ իրավասության պայմաններում կոնկրետ երկրի կառավարության համար միշտ էլ դժվար է եղել պարտադրել մի արգելք, որն իսկապես արդյունավետ կլինի ամբողջ աշխարհում: 1980-ականների վերջին, բրիտանական կառավարության



Վերևում՝ (աջից) լրագրող Նիլ Շիհանը, գործադիր տնօրեն Էյ Էմ Ռոզենթալը և արտասահմանյան լուրերի բաժնի խմբագիր Ջեյմս Լ. Գրինֆիլդը *«Նյու Յորք թայմզի»* խմբագրության այն անդամներից են, ովքեր պատասխանատու էին *«Պենտագոնյան փաստաթղթերի»* հրապարակման համար: «Պենտագոնյան փաստաթղթերը» ԱՄՆ կառավարության գաղտնի փաստաթղթերից քաղված հատվածներ էին, որոնք վերաբերում էին Վիետնամի պատերազմում Միացյալ Նահանգների ներքաշվելուն:

փորձերը՝ արգելել *«Հակահեղափոխության»*՝ բրիտանական գաղտնի ծառայության ՄԻ-5 նախկին գործակալի հուշերի հրատարակումը, ի վերջո, ապարդյուն էին: Թեև անգլիական դատարանն, իսկապես, արգելք դրեց, բայց գիրքը լայն շրջանառություն գտավ Ավստրալիայում և նույնիսկ Շոտլանդիայում՝ Մեծ Բրիտանիայի մասը կազմող երկրում, որտեղ չի տարածվում անգլիական դատարանի որոշումը: Իրավասության այս և այլ շրջաններից գրքի օրինակները հեղեղեցին Անգլիան: Ի վերջո, Անգլիայի դատարանները ստիպված եղան հանել արգելքը՝ հիմնավորելով, որ այլ տեղում հրատարակումն այլևս պահպանման ենթակա գաղտնիք չէր թողնում: Այս հակասական իրադրության ամենաթեժ պահին *«Էկոնոմիստ»* ամսագրի բրիտանացի խմբագիրները տպեցին դատարկ էջ՝ հետևյալ գլխագրով. «Բոլոր երկրներում, բացի մեկից, մեր ընթերցողներն այս էջի վրա կընթերցեն «Հակահեղափոխության» գրախոսությունը, մի գիրք, որը գրվել է MI-5-ի նախկին աշխատակից Փիթեր Ռայթի կողմից: Բացառությունը Մեծ Բրիտանիան է, որտեղ գիրքը և դրա վերաբերյալ մեկնաբանությունները, արգելված են: Մեր՝ 420.000 ընթերցողների համար այս էջը դատարկ է, իսկ օրենքը՝ հիմարություն»:

«Հակահեղափոխության» դեպքը տեղի ունեցավ մինչև համացանցի ի հայտ գալը: Այսօր դալար շիվեր արձակող այս նոր միջոցը ահռելի խոչընդոտ է նախնական արգելքի կիրառման համար: Օրինակներից մեկը Վիքիլիքսն է: 2008թ. փետրվարին դաշնային դատավորը Կալիֆորնիայում կիրառեց մշտական դատական արգելք Վիքիլիքսի նկատմամբ, մի կայքի, որն, ինչպես պնդում են, հիմնվել է «չինացի այլախոհների, ԱՄՆ-ի, Թայվանի, Եվրոպայի, Ավստրալիայի և Հարավային Աֆրիկայի լրագրողների, մաթեմատիկոսների և ... տեխնոլոգիաների մասնագետների կողմից», որոնց ինքնակոչ առաքելությունն է «բացահայտել ոչ էթիկական վարքագիծը ... կառավարություններում և կորպորացիաներում»: Վիքիլիքսը հնարավորություն էր տալիս օգտվողներին անանուն հրապարակել տարբեր փաստաթղթեր, օրինակ՝ ամերիկյան զորքերի մարտավարության կանոնները, Գուանտանամո ծովախորշի բանտի գործարկման ձեռնարկները և շվեյցարական բանկում պահվող հաշիվների գաղտնի տեղեկատվությունը: Կայքը պնդում էր, որ պատասխանատու չէ այն նյութերի բովանդակության համար, որոնք վերբեռնում են օգտվողները:

Դատական արգելքը հրամայեց Դինադոտին՝ կալիֆորնիական մի ընկերության, որը գրանցել էր Վիքիլիքսի դոմեյնը, անմիջապես փակել և ապաակտիվացնել դոմեյնի անունը և արգելափակել փաստաթղթերի հասանելիությունը: Բայց, ինչպես հետո հաղորդեց *«Նյու Յորք թայմզը»*, կայքի նկատմամբ Դինադոտի սահմանափակումներ կիրառելուց հետո էլ ամբողջ աշխարհի օգտվողները, միևնույն է, կարողանում են մուտք գործել այնտեղ և կարդալ փաստաթղթերը՝ օգտագործելով հայելային կայքերը, որոնք գրանցված են Բելգիայում, Գերմանիայում և Սուրբ Ծննդյան կղզիներում: Արգելքի հրապարակումից երկու շաբաթ անց միևնույն դաշնային դատավորը վերացրեց այն: «Պարզ է, որ բացի ամենաբացառիկ հանգամանքներից, խոսքի ազատության արգելքն անթույլատրելի է», - գրեց դատավոր Ջեֆրի Ռուայթը: Նա նաև նկատեց,

որ իր սկզբնական կարգադրությունը ոչ միայն անարդյունավետ էր, այլև «ունեցել էր նախատեսվածի ճիշտ հակառակ ազդեցությունը», որովհետև մամուլում արգելքի լուսաբանումը միայն մեծացրել էր հանրության ուշադրությունը Վիքիլիքսի նյութերի նկատմամբ:

Այլ տիպի՝ դատավարության ընթացքը լուսաբանելն արգելող վճիռները, արգելանքները և սահմանափակող որոշումները կքննարկվեն ավելի մանրակրկիտ կերպով ստորև ներկայացվող համապատասխան բաժիններում:

Պաշտպանություն՝ տեղեկատվությունը բացահայտելու հարկադրանքից

Գաղտնի աղբյուրները և չհրապարակված տեղեկատվությունը բացահայտումից պաշտպանելու լրագրողի իրավունքը էական է թե՛ տեղեկատվության ազատ հոսքի ապահովման, թե՛ հասարակության տեղեկացված լինելու իրավունքի տեսանկյունից: Լրագրողները պետք է կարողանան վստահեցնել իրենց աղբյուրներին, որ նրանց ինքնությունը գաղտնի կմնա, որպեսզի խրախուսեն նրանց ազատ խոսել: Նրանք նաև պետք է կարողանան պաշտպանել իրենց նորությունների հավաքման արդյունքները կառավարության և մասնավոր իրավաբանական անձանց կողմից մանրազնին քննությունից, որպեսզի պահպանեն իրենց խմբագրական անկախությունը: Առանց այս արտոնությունների կառավարության գործողություններին ուշադիր հետևելու և կոռուպցիան բացահայտելու մամուլի հնարավորությունը կարող է լրջորեն թուլանալ:

ԶԼՄ-ների մեծ մասի էթիկական կոդեքսները պահանջում են, որ լրագրողները պաշտպանեն իրենց աղբյուրների գաղտնիությունը: Լրագրողի համար սա թե՛ պատվի խնդիր է, թե՛ գործնական անհրաժեշտություն: Լրագրողը, ով խախտում է գաղտնիության խոստումը, հետագայում չի վայելի աղբյուրների վստահությունը: Հետևաբար՝ լրագրողները պաշտպանում են իրենց աղբյուրներին, նույնիսկ եթե դա նշանակում է մեղադրվել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մեջ:

Լրագրողի արտոնություններն ընդունելու ռացիոնալ հիմնավորումը համոզիչ կերպով սահմանված էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործում (1996թ.): Գործում ներգրավված էր լրագրող Ուիլյամ Գուդվինը, որը ստացել էր մի ընկերության գաղտնի ֆինանսական տեղեկատվությունը այնպիսի աղբյուրից, որի ինքնությունը համաձայնել էր չբացահայտել: Ընկերությունը պնդեց, որ նյութը գողացվել է և ձեռք բերեց դատարանի արգելքը՝ իր մասին տեղեկատվությունը հրապարակելու դեմ: Համաձայն դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին ակտի՝ ընկերությունը նաև ստացավ վճիռ, որով Գուդվինը պարտավոր էր բացահայտել իր աղբյուրի ինքնությունը «ի շահ արդարադատության»:

Այն բանից հետո, երբ Վերաքննիչ դատարանը և Լորդերի պալատը պաշտպանեցին այս վճիռը, Գուդվինը բողոքարկեց վճիռը ՄԻԵԴ-ում: Նա պնդում էր, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) հոդված 10-ի համաձայն՝ միայն բացառիկ հանգամանքները կարող էին

արդարացնել հարկադրանքը, որ կիրառվում էր իր նկատմամբ՝ վկայություն ստանալու նպատակով: Բրիտանական կառավարությունը հակադարձել էր, որ ոչ մի գերակա հանրային շահ այդ իրադրությունում չի արդարացնում արտոնության ճանաչումը, հատկապես երբ աղբյուրը վատագույնն է արել՝ անպատասխանատու կերպով Գուդվինին է տրամադրել ընկերության գաղտնիք հանդիսացող բիզնես տեղեկատվությունը:

Դատարանի որոշումը Գուդվինի օգտին էր: Այն սահմանեց, որ աղբյուրին հետապնդելու ընկերության շահը բավարար չէր գերազանցելու այն հանրային շահը, որով օժտված է լրագրողը՝ աղբյուրների գաղտնիությունը պահպանելիս.

> «Լրագրողների աղբյուրների պաշտպանությունը մամուլի ազատության հիմնական պայմաններից մեկն է... Առանց այդ պաշտպանության, աղբյուրները կարող են վախենալ և խուսափել մամուլին աջակցություն ցույց տալ՝ հանրային շահերին վերաբերող խնդիրների մասին տեղեկատվություն տրամադրելիս: Արդյունքում, մամուլի՝ կենսական կարևորություն ունեցող հանրային հսկիչի դերը կարող է խաթարվել, իսկ մամուլի կարողությունը՝ ապահովել ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն, կարող է խիստ տուժել: Հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում ազատ մամուլի համար լրագրողական աղբյուրների պաշտպանության կարևորությունը և պոտենցիալ սարսափելի ազդեցությունը, որ աղբյուրի բացահայտման մասին վճիռը կունենա այդ ազատության իրացման վրա, այսպիսի միջոցը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ, եթե այն չի արդարացվում հանրային շահի գերակա պահանջով»:

Գուդվինի գործով վճիռը պարտադիր է ՄԻԵԿ-ին անդամակցած բոլոր երկրների համար, բայց որոշումը ազդել է նաև Եվրամիությունից դուրս գտնվող երկրների վրա: Այլ միջազգային և տարածաշրջանային մարմիններ, այդ թվում նաև Մարդու իրավունքների համաամերիկյան հանձնաժողովը և Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովը հանդես են եկել հռչակագրերով, որոնցում ճանաչում են լրագրողների իրավունքները՝ պահպանել իրենց աղբյուրների և չհրապարակված տեղեկատվության գաղտնիությունը:

Որոշ երկրներում լրագրողի արտոնությունը ներառված է սահմանադրությունում: Օրինակ՝ Պալաուի սահմանադրությունում ասվում է. «Ոչ մի բարեխիղճ լրագրողից մասնագիտական հետաքննության ընթացքում ձեռք բերած տեղեկատվությունը բացահայտելու մերժման համար կառավարությունը չի կարող պահանջել՝ հրապարակել կամ բանտարկվել»: Շվեդիայի՝ Մամուլի ազատության ակտը, որը ազգային սահմանադրության մասն է կազմում, լրագրողների համար նախատեսում է ընդգրկուն արտոնություններ, որոնք ենթակա են միայն մի քանի բացառությունների, օրինակ՝ եթե աղբյուրին կասկածում են լրտեսության կամ պետական դավաճանության մեջ կամ, եթե մեղադրվող անձը ապացուցում է, որ փնտրվող տեղեկատվությունը էական է քրեական գործում իր պաշտպանության համար: Օրենքը

նաև նախատեսում է, որ լրագրողը, որը բացահայտում է աղբյուրին՝ առանց նրա համաձայնության, կարող է հետապնդվել դատական կարգով:

Այլ երկրներում, դատարանները որոշում են կայացրել, որ լրագրողի արտոնությունը կարող է ածանցվել սահմանադրական դրույթներից: 2006թ. Ճապոնիայում, օրինակ, Գերագույն դատարանը որոշեց, որ սահմանադրության հոդված 21-ը, որը երաշխավորում է արտահայտվելու ազատությունը, նաև պաշտպանում է «նորություններ հավաքելու ազատությունը», ինչպես նաև այդ նորությունները հաղորդելու ազատությունը: 2008թ. Կանադայում Օնտարիոյի Վերաքննիչ դատարանը մերժեց լրագրողի դեմ ներկայացված՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մեղադրանքը: Լրագրողը հրաժարվում էր բացահայտել հանրային ծերանոցի վերաբերյալ գաղտնի մունիցիպալ հետաքննության զեկույցների տեղեկատվական արտահոսքի աղբյուրին: Դատարանը վճռեց, որ գաղտնի աղբյուրներին պաշտպանելու իրավունքը Իրավունքների և ազատությունների կանադական խարտիայի ներքո ճանաչված՝ արտահայտվելու ազատության էական մասն է: Դատարանը սահմանեց. «Լրագրողի կողմից գաղտնի աղբյուրի ինքնության բացահայտման հավանական ազդեցությունը կլինի լրագրողների հետ այլ պոտենցիալ աղբյուրների համագործակցության կանխումը, որոնք, ինչ-որ պատճառով, ձգտում են թաքցնել իրենց ինքնությունը»: Թեև դատարանը հրաժարվեց բացարձակ արտոնություն սահմանել լրագրողական գործունեության ընթացքում ձեռք բերված ողջ գաղտնի հաղորդակցության համար, բայց ընդունեց, որ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի հնարավորությունը պետք է օգտագործվի որպես վերջին, ծայրահեղ տարբերակ:

Որոշ այլ պետություններ լրագրողներին օրենքով տվել են արտոնություն՝ կոնկրետ հանգամանքներում խուսափել վկայություն տալուց: Մոտավորապես 20 երկիր ընդունել են այնպիսի օրենսդրություն, որը լրագրողին տալիս է բացարձակ իրավունք՝ պաշտպանելու իր աղբյուրներին: Այդ երկրների թվում են Մեքսիկան, Ինդոնեզիան, Մոզամբիկը և Թուրքիան: Ավելի շատ են տարածված պետական այնպիսի օրենքները, որոնք ճանաչում են անձի՝ սահմանված պայմաններին բավարարելու դեպքում տրամադրվող արտոնությունը, որը կարող է ստորադասվել կոնկրետ իրադրություններում: Օրինակ, Հայաստանը տալիս է արտոնություն, սակայն մերժում է դա այն դեպքերում, երբ պահանջվող տեղեկատվությունն ուղղակիորեն կապված է ծանր քրեական գործի հետ, որի բացահայտման դեպքում մեծ է հանրային շահը: Որոշ երկրներում, այդ թվում նաև Գերմանիայում և Միացյալ Նահանգներում, օրենսդրական պաշտպանությունը թողնվել է առանձին նահանգներին: Ինչպես պետական օրենքները, այս օրենսդրական ակտերը ևս կարող են իրենց ընդգրկման շրջանակով լինել բացարձակ կամ սահմանափակ:

Թեև ԱՄՆ 39 նահանգներ, ինչպես նաև Կոլումբիայի շրջանը, ընդունել են լրագրողին իր աղբյուրների գաղտնիությունը չբացահայտելու իրավունք տվող օրենքներ, Կոնգրեսը քննել, սակայն չի ընդունել (2010թ. ամառվա դրությամբ), դաշնային օրենսդրություն, որը կճանաչեր

լրագրողի արտոնությունը: Սա նշանակում է, որ իրենց աղբյուրների գաղտնիությունը չբացահայտելու իրավունք տվող օրենքները կիրառվում են որոշ նահանգների դատական վարույթներում, սակայն ոչ դաշնային դատական համակարգում: (Դաշնային և նահանգային օրենքների և դատական համակարգերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս *«ԱՄՆ իրավական համակարգի համառոտ նկարագրությունը»*, http://www.america.gov/publications/books/outline-of-u.s.-legal-system):

Յուրաքանչյուր հասարակություն մշակում է տեղեկատվության հարկադիր բացահայտման նկատմամբ լրագրողական արտոնության իր ուրվագիծը: Բայց արդյունավետ արտոնությունը, որտեղ էլ լինի, հստակ պատասխանում է հետևյալ հարցերին.

- Ո՞ւմ նկատմամբ է այն կիրառելի: Լայն արտոնությունը կիրառելի կլինի ցանկացած անձի նկատմամբ, ով զբաղվում է լրագրողական գործունեությամբ, ինչը նշանակում է ցանկացած անձի նկատմամբ, ով զբաղվում է հանրության շրջանում տարածման նպատակով նորություններ կամ տեղեկատվություն հավաքելով, գրելով, խմբագրելով կամ հրապարակելով, լինի դա փոխհատուցմամբ, թե՝ ոչ:
- Այն սահմանափակվո՞ւմ է մեդիա հարթակով: Ամենաարդյունավետ արտոնությունը կտրամադրվի ոչ միայն նրանց, ովքեր աշխատում են տպագիր կամ հեռարձակող ավանդական ՁԼՄ-ներում: Նրանց կգումարվեն գրքերի հեղինակներ, ինչպես նաև բլոգերներ և այլոք, ովքեր տարածում են իրենց աշխատանքը համացանցով:
- Ո՞ր աղբյուրներին է այն պաշտպանում: Բազմակողմանի արտոնությունը կվերաբերի ոչ միայն աղբյուրների ինքնությանը, այլ նաև չհրապարակված տեղեկատվությանը և փաստավավերագրական նյութերին՝ լուսանկարներին, գրառումներին, ժապավեններին, սևագրերին և լրագրողական գործունեության այլ արտադրանքին:

Բացարձակ արտոնության բացակայության պայմաններում այն անձը, ով ձգտում է հարկադրել լրագրողին բացահայտել գաղտնի աղբյուրները և տեղեկատվությունը, պարտավոր է նաև ծանրակշիռ հիմնավորում ներկայացնել: Տարբեր երկրներ տարբեր չափորոշիչներ են սահմանել, բայց ամենատարածված գործոնների թվում են.

- Բոլոր խելամիտ այլընտրանքները սպառվել են և հնարավոր չէ տեղեկատվությունը ստանալ որևէ այլ՝ ոչ լրագրողական աղբյուրից:
- Պահանջվող տեղեկատվությունը կարևոր, կամ բացարձակապես էական է, խնդրո առարկա գործի լուծման համար (օրինակ՝ արդարացնող ապացույց տվյալ գործով ամբաստանյալ հանցագործի համար):
- Դատավորը պետք է համարի, որ բացահայտման պարագայում հանրային շահը գերակա է, քան տեղեկատվության ազատ հոսքի դեպքում իրացվող հանրային շահը:

Վերջնական տարրը ամենավիճելին է: Ե՞րբ է մի շահը գերակայում մամուլի ազատության

հիմնարար իրավունքի նկատմամբ: Ազգային անվտանգության խնդիրներ պարունակող դեպքերում, օրինակ, կառավարական պաշտոնյաները հաճախ պնդում են, որ հանրային ապահովության պահպանումը գերակայում է խմբագրական անկախության պաշտպանության նկատմամբ: Միացյալ Նահանգներում, լրագրողների՝ իրենց աղբյուրների գաղտնիությունը չբացահայտելու իրավունք շնորհող օրենքներն ուժի մեջ մտցնելու դաշնային ջանքերը տարիներ շարունակ փակուղի են մտել, մասամբ այն պատճառով, որ մտավախություն է եղել, թե ահաբեկիչները կարող են օգտվել դրանից՝ իրենց հաղորդակցությունը իրավապահների հսկողությունից պաշտպանելու համար:

Պատերազմական իրադարձությունները լուսաբանող լրագրողը բազմաթիվ յուրահատուկ դժվարությունների է հանդիպում: Աղբյուրի գաղտնիությունը պահպանելը կարող է էական լինել այս լրագրողի ապահովությունը երաշխավորելու համար: Սակայն ի՞նչ է տեղի ունենում, երբ լրագրողը ականատես է դառնում գազանությունների և կանչվում է ռազմական հանցանքները քննող տրիբունալ՝ վկայություն տալու:

1993թ. *«Վաշինգտոն փոստի»* լրագրող Ջոնաթան Սի Ռենդելը հարցազրույց վերցրեց Ռադոսլավ Բրդջանինից՝ սերբ ազգայնամոլից, ում խոսքից նա մի մեջբերում էր օգտագործել էթնիկ զտումների վերաբերյալ իր մի հոդվածում: Տարիներ անց, երբ Ռենդելը թոշակի էր անցել և թողել էր լրագրությունը, Բրդջանինին ցեղասպանության մեղադրանք ներկայացվեց: Դատախազները ցանկացել էին Ռենդելի հոդվածը որպես վկայություն ներկայացնել դատարանում՝ Հարավսլավիայի գործերով ՄԱԿ-ի միջազգային քրեական տրիբունալի առջև (ՀՄՔՏ): Երբ դատապաշտպանները պնդեցին Ռենդելին խաչաձև հարցաքննության ենթարկելու իրավունքի կիրառման վրա, նախկին լրագրողին կանչեցին դատարան՝ վկայություն տալու: Ռենդելն ընդդիմացավ՝ պնդելով, որ վկայություն տալու հարկադրանքը կարող էր վտանգի տակ դնել իր անձնական ապահովությունը, եթե աղբյուրներն ընկալեին իրեն որպես պոտենցիալ վկա:

2002թ. դեկտեմբերին Վերաքննիչ պալատը ճանաչեց պատերազմական իրադարձություններ լուսաբանող լրագրողների՝ վկայություն չտալու որակավորված արտոնությունը, նույնիսկ երբ աղբյուրները գաղտնի չեն և տեղեկատվությունն արդեն հրապարակվել է: Այն սահմանում էր պատերազմական գործողություններ լուսաբանող լրագրողներին որպես «անձանց, ովքեր որևէ ժամանակահատվածի ընթացքում հաղորդում են (կամ հաղորդելու նպատակով հետաքննում են) բախումների գոտուց՝ բախմանը վերաբերող հարցերի մասին»: Պալատն ընդունեց, որ իրենց աշխատանքը կատարելու համար «պատերազմական գործողություններ լուսաբանող լրագրողները պետք է ընկալվեն ավելի շուտ որպես անկախ դիտորդներ, քան մեղադրողի կողմից հանդես եկող պոտենցիալ վկաներ: Այլապես, նրանք կարող են ավելի հաճախակի հանդիպել իրենց և իրենց աղբյուրների անվտանգության համար լուրջ սպառնալիքների»: Տրիբունալը վճռեց. «[Ճանաչման] պաշտպանության չափը ուղիղ համեմատական է այն վնասին, որը կարող է հասցվել լրաքաղման գործառույթին»: Վճռում ասվում էր՝ վկայության համար անձին դատարան կանչող կողմը պետք է ցույց տա, որ

վկայությունը «ուղղակի և կարևոր արժեք է ներկայացնում՝ գործի հիմնախնդիրը որոշելու առումով», և որ վկայությունը չի կարող խելամիտ կերպով ձեռք բերվել այլ կերպ:

Ռենդելի դեպքը հակասական էր: Ավելի քան 30 միջազգային լրատվական կազմակերպություններ աջակցեցին նրա բողոքարկմանը: Բայց բրիտանացի լրագրող Էդ Վուլիամին, ով նույնպես լուսաբանել էր Բոսնիայի պատերազմը և ինքնակամ վկայություն էր տվել Միլան Կովաչևիչի դատաքննության ժամանակ, պնդում էր, որ Ռենդելի դիրքորոշումը սխալ է: ««*Վաշինգտոն փոստի*» առարկության հիմքում ընկած է լրագրողի մասնագիտության ենթադրյալ անկյունաքարը՝ չեզոքությունը», - գրել էր նա: -«Ես կարծում եմ, որ պատմության մեջ կան ժամանակներ... երբ չեզոքությունը ոչ թե չեզոք է, այլ մեղսակից է հանցանքին... Դատարանը կարիք ունի լրագրողների կողմից իրենց պատմությունների հավաստմանը՝ երդման ներքո»:

Սրան վերաբերող մեկ այլ խնդիր առնչվում է ԶԼՄ-ների գրասենյակները խուզարկելու կառավարական պաշտոնյաների իրավասությանը: Միացյալ Նահանգների Գերագույն դատարանի քննությանը ներկայացված *Զուրկերն ընդդեմ «Ստենֆորդ Դեյլիի»* գործը (1978թ.) մարտահրավեր էր նետում ոստիկանության սպաների լիազորությանը՝ մտնել համալսարանի ուսանողական թերթի խմբագրություն և բռնագրավել չհրապարակված լուսանկարները, որտեղ պատկերված էր ոստիկանության սպաների և Ստենֆորդի համալսարանական հիվանդանոցը շրջապատած և գրված ցուցարարների միջև կատաղի բախումը: Ուսանողական թերթը պնդում էր, որ Առաջին փոփոխությունը պաշտպանում է իրենց իրավապահ մարմինների կողմից խմբագրությունը խուզարկելու գործողություններից, բայց մեծամասնությունը, դատավոր Բրայոն Ուայթի նախագահությամբ, վճռեց, որ լրատվական կազմակերպությունները չունեն հատուկ կարգավիճակ Առաջին փոփոխության ներքո: Բայց խմբագրությունը կարող էր պաշտպանվել Չորրորդ փոփոխությամբ, ինչպես և ցանկացած այլ կազմակերպություն՝ «ոչ խելամիտ խուզարկություններից և առգրավումներից»:

Այս վճռին չհամաձայնելով՝ դատավոր Փոթեր Ստյուարտը գրեց.

> «Ինձ թվում է՝ ակնհայտ է, որ ոստիկանության կողմից թերթերի խմբագրությունների խուզարկությունները բարդ պայմաններ են ստեղծում մամուլի ազատության համար: Ամենաանմիջական և ակնհայտ ... վնասը... խմբագրության ֆիզիկական քայքայումն է... Սակայն կա մեկ այլ և ավելի լուրջ բարդություն... որը պարտադրվում է ոստիկանության կողմից թերթի խմբագրության չհայտարարված խուզարկությամբ. դա գաղտնի աղբյուրներից ստացված տեղեկատվության կամ հենց աղբյուրների ինքնության բացահայտման հավանականությունն է»:

Ի պատասխան մեծամասնության վճռին, ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց Անձնական բնույթի տեղեկատվության գաղտնիության պաշտպանության 1980թ.-ի ակտը: Այս իրավական ակտն արգելում է թե՛ դաշնային, թե՛ տեղական իրավապահ մարմիններին բռնագրավել փաստաթղթային կամ

աշխատանքային արտադրանք, նյութեր, որոնք պատկանում են մարդկանց, ովքեր ունեն դրանք հանրության շրջանում տարածելու մտադրություն (այսինքն՝ լրագրողներին): Բացառությունների թվում են այն նյութերը, որոնք անհրաժեշտ են՝ կանխելու մահը կամ լուրջ վնասվածքը կամ մանկական պոռնոգրաֆիան: Նմանապես, 1995թ. Նոր Զելանդիայի Վերաքննիչ դատարանը վճռեց, որ լրագրողների աշխատավայրերի խուզարկությունները թույլատրելի են միայն բացառիկ դեպքերում, երբ դրանք էական են արդարադատության հաստատման համար և այդ դեպքում չպետք է իրականացվեն այնպես, որ խանգարեն նորությունների տարածմանը:

Բայց աշխարհի այլ մասերում խմբագրությունների խուզարկություններ հաճախ են պատահում: Օրինակ՝ 2004թ. Հոնգ Կոնգի կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողովը ձեռք բերեց 14 թույլտվություն՝ խուզարկելու թերթերի խմբագրությունները և լրագրողների տները: Հանձնաժողովը փորձում էր պարզել այն անձի ինքնությունը, ով լրատվական կազմակերպությանը հայտնել էր վկայի անունը: Վերաքննիչ դատարանը որոշեց, որ այս խուզարկություններն արդարացված են:

Թեև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համարում է, որ խմբագրությունների խուզարկությունները խախտում են Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը, բազմաթիվ եվրոպական երկրներ, միևնույն է, դեռ կիրառում են այն: Ավստրիան և Գերմանիան երկու բացառություններն են: Գերմանիայի Սահմանադրական դատարանը 2007թ. փետրվարին վճռեց, որ այս խուզարկությունները խախտում են խոսքի ազատության պաշտպանության սահմանադրական դրույթները:

Հակահաբեկչական օրենքները, որոնք ընդունվեցին աշխարհի շատ երկրներում 2001թ.-ից հետո, ընդլայնել են իրավապահ մարմինների և հետախուզության իրավասությունները՝ գաղտնալսելու հեռախոսային խոսակցությունները՝ վերահսկման նպատակով: Այս տիպի օրենքները լրագրողներին տրամադրում են մոտավորապես այնչափ պաշտպանություն, ինչքան այլ քաղաքացիների: Այնուամենայնիվ, մի քանի երկիր լրատվամիջոցներին տրամադրում են հատուկ պաշտպանություն: Վրաստանում հանցագործություն է մասնագիտական գաղտնիքների բացահայտման նպատակով լրագրողների հաղորդակցություններ գաղտնալսելը: Իսկ Բելգիայում Լրագրողների աղբյուրների պաշտպանության մասին օրենքը հսկողության նկատմամբ նույն արգելքներն է կիրառում է, ինչ գաղտնի աղբյուրի բացահայտման պարտադրանքի փորձը:

Կարճ ասած՝ լայնորեն ընդունված է, որ գաղտնիությունը պահպանելը լրագրողի համար նույնն է, ինչ իր անկախությունը պահպանելը:

Կառավարական տեղեկատվության և արձանագրությունների հասանելիության իրավունքը

Ինչու՞ է կարևոր կառավարական արձանագրությունների և տեղեկատվության հասանելիության իրավունքը:

- Հասանելիությունն օգնում է պատասխանատու դարձնել կառավարությանը իր քաղաքացիների առջև: Ինչպես

մի անգամ գրել է ԱՄՆ Գերագույն դատարանի մի դատավոր, տեղեկատվության ազատության մասին օրենքները թույլ են տալիս քաղաքացիներին պարզել, «թե ինչով է զբաղվում կառավարությունը» ներկայում և թե ինչ է նա արել անցյալում: Օգնելով ստուգել անվայել վարքագիծը՝ հասանելիությունը ծառայում է որպես արժեքավոր հակակոռուպցիոն գործիք և օգնում է հանրային վստահություն կառուցել:

- Հասանելիությունը թույլ է տալիս հանրությանը օգտվել կառավարության կողմից հավաքված և պահպանվող մեծ քանակությամբ այն տեղեկատվությունից, որի համար հարկեր են գանձվել հասարակությունից:
- Երբ լրագրողներին հասանելի են հանրային արխիվային նյութերը, նրանք էլ կախված չեն կառավարական աղբյուրի քմահաճույքներից՝ ինչ զեկուցել կառավարության գործողությունների և գործունեության մասին: Լրագրողները կարող են բացահայտել, թե ինչպես են ծախսվում հարկային մուտքերի գումարները, և ինչպես է մշակվում և իրականացվում քաղաքականությունը:

Կարճ ասած՝ լրագրողների հասանելիությունը կառավարական տեղեկատվությանը էական գործիք է ժողովրդավարություն կառուցելու և այն պահպանելու համար:

Բազմաթիվ միջազգային համաձայնագրեր ներառում և զարգացնում են թափանցիկությունը.

- Թե՛ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 19-ը, թե՛ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը երաշխավորում են տեղեկատվություն որոնելու, ստանալու և հաղորդելու իրավունքը: Այս դարձվածքը ներառում է տեղեկատվության ազատության իրավունքը:
- Աֆրիկյան Միության (ԱՄ)՝ Կոռուպցիայի կանխման և պայքարի հռչակագիրը ստորագրել են միության 53 անդամ երկրներից 40-ը: Համաձայնագրի 9-րդ հոդվածն ասում է. «Յուրաքանչյուր պետություն պետք է ընդունի օրենսդրություն և այլ համապատասխան միջոցներ՝ իրացնելու այնպիսի տեղեկատվության հասանելիության իրավունքը, որն անհրաժեշտ է՝ կոռուպցիայի և դրան առնչվող հանցագործությունների դեմ պայքարին աջակցելու համար»:
- Ամերիկյան պետությունների կազմակերպությունը, Մարդու իրավունքների արաբական խարտիան և բազմաթիվ այլ պայմանագրեր, հռչակագրեր, համաձայնագրեր և հայտարարություններ ճանաչում են տեղեկատվության ազատությունը՝ որպես մարդու հիմնարար իրավունք:

Բայց իրականությունը հաճախ չի համապատասխանում հռետորաբանությանը: Առանձին պետություններ որոշում են, արդյոք նրանք իրագործելու են այս վերամբարձ սկզբունքները: Իր տեղեկանալու իրավունքն իրացնող լրագրողը կարող է բարդությունների առաջ կանգնել:

Տեղեկատվության ազատությունը սահմանադրական իրավունք է

մոտավորապես 80 երկրներում: Շվեդիայի 1766թ. մամուլի մասին օրենքը, որը հաճախ համարվում է տեղեկատվության ազատության մասին առաջին օրենքը, նրա սահմանադրության մի մասն է: Որոշ ավելի հին սահմանադրություններ բարեփոխվել են՝ ներառելու տեղեկացված լինելու իրավունքը: Բազմաթիվ զարգացող ժողովրդավարական երկրներ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում և Լատինական Ամերիկայում ներառում են հասանելիության մասին դրույթներ իրենց նոր սահմանադրություններում: Նույնիսկ երբ սահմանադրությունը գրված է ոչ պարզորոշ լեզվով, որոշ երկրների՝ Կորեայի, Ճապոնիայի, Իսրայելի բարձրագույն դատարանները որոշել են, որ տեղեկատվության հասանելիության իրավունքը մտնում է մամուլի կամ արտահայտվելու ազատության իրավունքի մեջ:

Ավելի քան 70 այլ երկրներ ընդունել են տեղեկատվության ազատության մասին իրավական ակտեր: Սրանք հաստատապես սահմանված են Եվրոպայում և ամերիկյան երկրներում, հազվադեպ՝ Ասիայում, Միջին Արևելքում և Աֆրիկայում: Բայց ամբողջ աշխարհում հիմնական միտումը դեպի տեղեկատվության ավելի մեծ թափանցիկությունն է:

Տեղեկատվության ազատության մասին օրենքները

Տեղեկատվության ազատության օրենքների մեծ մասի համար սկզբունքները և բնորոշ հատկանիշներն ընդհանուր են: Վերջերս տեղի ունեցող բազմաթիվ օրինակներ իրենց վրա կրել են ԱՄՆ Տեղեկատվության ազատության դաշնային ակտի (ՏԱԴԱ) ազդեցությունը: Մենք կօգտագործենք այդ իրավական ակտը որպես օրինակ:

Նախագահ Լինդոն Բ. Ջոնսոնը ստորագրեց ՏԱԴԱ-ն՝ այն օրենք դարձնելով 1966թ. հուլիսի 4-ին: Չնայած դրա անվանը, ակտն իրականում չի ստեղծում *տեղեկատվության* հասանելիության իրավունք: Ավելի շուտ, այն հաստատում է գործադիր իշխանություններում՝ գերատեսչություններում, բաժիններում, կարգավորող հանձնաժողովներում և կառավարության կողմից հսկվող կորպորացիաներում առկա թղթային կամ թվային տեղեկատվության հասանելիության ենթադրյալ իրավունքը: Այստեղ ներառվում են, օրինակ, ԱՄՆ Պետքարտուղարությունը, Պաշտպանության նախարարությունը, Արդարադատության նախարարությունը, ինչպես նաև, Հետաքննությունների դաշնային բյուրոն և Հետախուզության կենտրոնական գործակալությունը: Ի տարբերություն, ասենք, Իռլանդիայում գործող օրենքների, ՏԱԴԱ-ն չի թվարկում վերոնշյալ գերատեսչությունների անվանումները, ոչ էլ ըստ կարգերի բացառում է այն մարմինները, որոնք տիրապետում են գաղտնի տեղեկատվությանը և զբաղվում են անվտանգությամբ, ինչպես Միացյալ Թագավորությունում: ՏԱԴԱ-ն չի վերաբերում կառավարության ոչ օրենսդրական, ոչ դատական ճյուղերին: Նահանգային և տեղական գործադիր ճյուղերի վարչությունների կողմից տնօրինվող տեղեկատվության հասանելիությունը սահմանվում է նահանգների՝ ինքնակառավարման մասին օրենքներով:

Միացյալ Նահանգներում, ինչպես բազմաթիվ երկրներում, ցանկացած մեկը կարող է ՏԱԴԱ-ի պահանջ ներկայացնել: Չի պահանջվում ոչ

ԱՄՆ քաղաքացիություն, ոչ բնակության իրավունք, իսկ հասանելիությունը բաց է բոլորի, ոչ միայն լրագրողների համար: Դիմողներին խրախուսում են օգտվել կառավարական ընթերցասրահներից, ֆիզիկական կամ վիրտուալ աղբյուրներից՝ ազատ հասանելիություն ստանալու համար արդեն հրապարակված տեղեկատվությանը՝ այսպես կոչված էլեկտրոնային ՏԱԴԱ-ի նախաձեռնությունների ներքո կամ ի պատասխան ավելի վաղ ներկայացված ՏԱԴԱ բացահայտված պահանջին: Միացյալ Նահանգներում ոչ մի հատուկ ձևաթուղթ պետք չէ ներկայացնել ՏԱԴԱ պահանջի

Վերևում՝ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման 2009թ. հունվարի 21-ին հինգ գործադիր հրաման ստորագրեց՝ պահանջելով, որ աշխատակազմի անդամները հետևեն Տեղեկատվության ազատության ակտի նոր և խիստ կանոններին: Այդ օրվա հուշագրում նախագահ Օբաման գրեց. «Կառավարությունը չպետք է տեղեկատվությունը գաղտնի պահի միայն այն պատճառով, որ տեղեկատվության բացահայտման արդյունքում պետական պաշտոնյաները կարող են անհարմար վիճակի մեջ ընկնել, կամ թե սխալներ ու ձախողումները կարող են բացահայտվել, կամ էլ սպեկուլյատիվ ու վերացական մտավախությունների պատճառով»:

համար՝ պարզապես հասարակ մի նամակ՝ հասցեագրված համապատասխան ՏԱԴԱ պատասխանատուին, որում խելամտորեն նկարագրվում են պահանջվող տեղեկությունները: Գերատեսչությունների մեծ մասը պատրաստ է գրավոր կամ էլեկտրոնային ձևաչափով ընդունել պահանջները:

Բաց լինելու կանխավարկածից բացի, այնուամենայնիվ, տեղեկատվության ազատության մասին յուրաքանչյուր օրենք ներառում է վերապահումներ՝ տեղեկատվության տեսակներ, որոնք գերատեսչությունը կարող է չհրապարակել: ԱՄՆ ՏԱԴԱ-ն ունի ինը վերապահում, որոնք, իրավական ակտի պայմանների ներքո և Արդարադատության նախարարության ուղղորդման հիման վրա, պետք է մանրակրկիտ մեկնաբանվեն.

- ազգային անվտանգություն,
- գերատեսչության ներքին կանոնները/աշխատակարգերը,
- գերատեսչության ներքին հուշագրերը (ինչպես օրինակ՝ աշխատանքային փաստաթղթերը, հաշվետվությունները և վերլուծությունները, որոնք պատրաստվում են որպես գերատեսչության՝ որոշում կայացնելու գործընթացի մի մաս),
- առևտրային գաղտնիքները,
- մեկ այլ դաշնային իրավական ակտով գաղտնի կարգավիճակ ստացած տվյալները,
- որոշ իրավապահ մարմինների փաստաթղթերը,
- բանկային տվյալները,
- նավթա և գազի հորերի մասին տվյալները,

- փվյալներ, որոնք պարունակում են այնպիսի տեղեկատվություն, որը, եթե բացահայտվի, կնշանակի անօրինական ներխուժում անձնական կյանք:

Այս վերապահումների մեծ մասը պարտադիր չէ: Գերատեսչությունները կարող են հրապարակել փաստաթղթերը, եթե նրանք գան այն եզրակացության, որ այդ նյութերի բացահայտման հանրային շահը գերակայում է ցանկացած վնասի: Նրանք պետք է պատրաստ լինեն արդարացնել ցանկացած վերապահում և չհրապարակել փաստաթղթի միայն անձեռնմխելի մասը, միևնույն ժամանակ ապահովելով հավասարակշռությունը: Կոնկրետ նյութը չհրապարակելու անհրաժեշտությունը կարող է զարգանալ ժամանակի ընթացքում: Գաղտնի արխիվների դեպքում դիմողներն ունեն տարբերակ՝ բողոքարկել հատուկ վերստուգող խորհրդի, որը կորոշի՝ արդյոք այդ նյութը այժմ կարող է հրապարակվել, թե՝ ոչ: Որոշ երկրներում հասանելիության վերաբերյալ օրենքները ներառում են կոնկրետ արգելքներ որոշակի տեսակի տեղեկատվության չտարածման վերաբերյալ, թեև Միացյալ Նահանգներն այդ երկրներից չէ:

ԱՄՆ չունի որևէ տիպի գաղտնիության պաշտոնական ակտ, որն առկա է բազմաթիվ այլ երկրներում, բայց այստեղ կարող են չհրապարակվել նախագահական գործադիր հրամանի համաձայն համապատասխանաբար դասակարգված տվյալները: Սեպտեմբերի տասնմեկի իրադարձություններից հետո աշխարհի մեծ մասում ավելացել է տեղեկատվությունը դասակարգելու պրակտիկան: Սա նոր խոչընդոտներ է առաջացնում այն քաղաքացիների համար, ովքեր ցանկանում են ստանալ թե՛ հետախուզական, թե՛ իրավապահ մարմիններին վերաբերող տեղեկատվություն: Եվ քանի որ կառավարությունները հավաքում են ավելի շատ անձնապես հատկորոշվող տեղեկատվություն, գործակալությունները հաճախ հղում են անում անձնական բնույթի գաղտնի տեղեկատվության անձեռնմխելիությանը՝ որպես բազմաթիվ կառավարական փաստաթղթեր չհրապարակելու հիմք: Այս անձեռնմխելիությունը երբեմն աղոտ է և դժվար է մեկնաբանել, իսկ տվյալների պատասխանատուների մեծ մասի համար միտումը հետևյալն է՝ կասկածի դեպքում չհրապարակել արխիվային նյութը:

Նյութի նկատմամբ հասանելիության մերժում ստացած դիմողն ունի բողոքարկման իրավունք: ՏԱԴԱ-ի ներքո, նաև բազմաթիվ երկրներում, սկսվում է գործընթաց՝ գերատեսչության ներսում որոշման վերանայման հասնելու համար: Երբեմն այս մարտավարությունը հանգեցնում է տեղեկատվության տրամադրմանը: Մյուս քայլը բողոքարկումն արտաքին վերանայման ներկայացնելն է: Միացյալ Նահանգներում սա նշանակում է դատական հայց ներկայացնել դաշնային շրջանային դատարան, հետագա բողոքարկումներով, եթե դրանք անհրաժեշտ լինեն, դաշնային վերաքննիչ դատարաններ և նույնիսկ Գերագույն դատարան: Այլ երկրներում, ինչպես և ԱՄՆ-ի մի քանի առանձին նահանգներում, դիմողը կարող է բողոքարկել տեղեկատվության ազատության օմբուդսմենին կամ անկախ տրիբունալին կամ տեղեկատվության հանձնաժողովին: Այս համակարգերում նույնպես,

վերջնական վերանայման համար, հնարավոր է դիմել ներպետական դատարաններ:

Հաջողակ դիմողը գուցե կարողանա ձեռք բերել ոչ միայն տեղեկատվությունը, այլ նաև ստանա իրավաբանի ծառայությունների վարձի փոխհատուցումը: ԱՄՆ որոշ նահանգներում և բազմաթիվ երկրներում դատարանները կարող են պատժամիջոցներ կիրառել կառավարական մարմինների և դրանց այն աշխատակիցների նկատմամբ, ովքեր, օրենքը խախտելով, միտումնավոր չեն հրապարակել տեղեկատվությունը: Այս պատժամիջոցները կարող են ներառել դրամական տուգանքներ, իսկ հազվադեպ՝ նույնիսկ ազատազրկման դատապարտում, եթե հատկապես կոպիտ խախտում է եղել:

Նույնիսկ այն դեպքերում, երբ օրենքը պահանջում է հրապարակում, վարչարարական թերացումները, միջոցների բացակայությունը կամ անարդյունավետությունը կարող են հանգեցնել հապաղումների: Տեղեկատվության ազատության մասին օրենքների մեծ մասը կարճ վերջնաժամկետներ են սահմանում սկզբնական արձագանքման համար, սակայն լրացուցիչ ժամանակի հնարավորություն են տալիս՝ բարդ հարցումները բավարարելու համար: ԱՄՆ Ազգային անվտանգության արխիվը, որը հասանելիության ապահովման քաղաքականության վերաբերյալ հետազոտական աշխատանք կատարող մասնավոր ընկերություն է, 2007թ. հաղորդեց, որ ամենահին և չլուծված ՏԱԴԱ հարցումը 20 տարվա վաղեմություն ունի, թեև բազմաթիվ այլ հարցումներ մշակվում են շատ ավելի արագ:

Վերևում՝ Ամերիկացի զինվոր Ռոն Ռայդենհաուերը Մայ Լեյում 1968թ. տեղի ունեցած կոտորածների բացահայտման հիմնական պատասխանատուն էր: Նա էր ականատեսների վկայությունները հավաքել և ուղարկել Կոնգրեսի 30 անդամներին և Պենտագոնի պաշտոնյաներին: Ավելի ուշ Ռայդենաուերը դարձավ հետաքննող լրագրող:

Որոշ հանգամանքների ներքո, օրինակ, երբ լրագրողը ցույց է տալիս անհապաղ հրապարակումից բխող համոզիչ հանրային շահ, հնարավոր է, որ դիմողի հարցումը քննարկման ենթարկվի անմիջապես:

Գործակալություններին կարող են լիազորել ծախսերը գանձել դիմողներից, նույնիսկ եթե հարցումը լիարժեքորեն չի բավարարվում: Որոշ երկրներ (ոչ Միացյալ Նահանգները) հարցման ընդունման դիմաց վճար են գանձում՝ անկախ հարցման չափից կամ ծավալից: Մյուսները պահանջում են վճարել վարչարարական ծախսերը, ներառյալ որոնման ժամանակի, տրամադրման համար նախապատրաստական աշխատանքի կամ պատճենահանելու դիմաց: ԱՄՆ ՏԱԴԱ-ի ներքո դիմողների որոշ կարգերի, ներառյալ լայն հասարակությունը և մամուլը, իրավունք է տրվում օգտվել վարձերի մուծման ամբողջական կամ մասնակի ազատումից, բայց շահույթ հետապնդող դիմողները (որոնց թվում չեն ներառվում լրատվամիջոցները) պետք է վճարեն բոլոր համապատասխան ծախսերը, որոնք սահմանվում են գործակալության կողմից՝ վարձավճարային քաղաքականության համաձայն:

Տեղեկատվության ազատության մասին օրենքները ստեղծում են հանրային հասանելիության կանխավարկած: ՏԱԴԱ-ի օգնությամբ կատարված բացահայտումները իրավունք են տալիս լրագրողներին գրել բազմաթիվ պատմություններ, որոնք անհարմար դրության մեջ են դնում ԱՄՆ կառավարությանը. 1968թ. Վիետնամում Մայ Լեյի մոտ տեղի ունեցած կոտորածներից մինչև սննդի արտադրության գործարանների հակասանիտարահիգիենիկ պայմանները, ռազմական կապալառուների գերածախսերից մինչև ամենավտանգավոր աշխատատեղերը: Նույնիսկ չբացահայտված թռչող օբյեկտների (ՉԹՕ) մասին ակնարկները հիմնված են ՏԱԴԱ-ի ներքո ձեռք բերված տեղեկատվության վրա: Դրանցից օգտվելու համար ընդամենը համառություն է պահանջվում:

Դատավարությունների հրապարակայնությունը

Դատական մարմնի պաշտոնական գործողությունները ահռելի ազդեցություն են ունենում և մեծապես հետաքրքրում են հասարակությանը: Սակայն, երբ լրագրողը նախաձեռնում է դատական գործի լուսաբանումը, դա կարող է հանգեցնել մրցակցային հարաբերությունների: Պարզ ասած՝ լրագրողները հաճախ ցանկանում են հրապարակել այնպիսի տեղեկատվություն, որը փաստաբանները և դատավորը կնախընտրեին գաղտնի պահել:

Երկրների մեծ մասը առնվազն լուռ ընդունում են, որ մամուլի և հասարակության համար դատավարությունները ենթադրաբար պետք է համարվեն բաց, սակայն դրանք ենթակա են որոշ սահմանափակումների: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը նախատեսում է.

> «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային

դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, կամ, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, խիստ անհրաժեշտ է, որ հրապարակայնությունը չխախտի արդարադատության շահերը»:

Անգլոսաքսոնական ավանդույթը Մագնա Կարտայից ի վեր (1297) այն երկրներում, որտեղ գործում է նախադեպային իրավական համակարգը, ենթադրում է, որ դատավարությունը պետք է լինի բաց, որպեսզի պաշտպանվի մեղադրյալի իրավունքը և ապահովի հաշվետվողականությունը: 1980թ. սկսած Միացյալ Նահանգներում Գերագույն դատարանի մի շարք գործեր լայնորեն մեկնաբանել են թե՛ քրեական գործերով պաշտպանյալների՝ Վեցերորդ փոփոխությամբ՝ արդար և բաց դատավարության իրավունքը, թե՛ ըստ Առաջին փոփոխության՝ դատավարություններին հաճախելու մամուլի և հասարակության իրավունքը: Շատ դատարաններ ընդունում են նաև դատական փաստաթղթերի նկատմամբ հասանելիության իրավունքը:

Սակայն Գերագույն դատարանը նաև վճիռ է կայացրել, որ առանձնահատուկ հատկորոշված պետական շահը կարող է գերակայել դատավարության բաց լինելու կանխավարկածին: Սա կարող է լինել քրեական գործով մեղադրյալի՝ արդար դատավարության իրավունքին ներկայացվող էական սպառնալիք կամ խիստ անհրաժեշտություն՝ ապահովել կոնկրետ ականատեսի կամ զոհի անձնական կյանքի անվտանգությունը՝ վկայություն տալու ընթացքում: Այնուամենայնիվ, նախքան դատարանի դահլիճի դռները փակելը, նախագահող դատավորը պետք է հաշվի առնի՝ արդյոք այդ այլընտրանքի պարագայում հնարավոր կլինի խուսափել սպառնալիքից, նաև համոզվի, որ դռնփակ դատավարությունն արդյունավետ կլինի: Բացի այդ, յուրաքանչյուր փակ դատավարություն պետք է լինի առավելագույնս հարմարեցված դեպքին՝ լինի նույնքան սահմանափակ իր ընդգրկման շրջանակով և տևողությամբ, որքան հնարավոր է:

Որոշ երկրներ, օրինակ՝ Իսպանիան և Շվեդիան, ունեն սահմանադրական երաշխիքներ առ այն, որ արդարադատության իրացումը պետք է տեղի ունենա հրապարակավ: Այնուամենայնիվ, առանձին հարց է ծագում է այն սահմանափակումների առնչությամբ, թե ինչ է կարելի լրագրողներին լուսաբանել՝ առկախ կամ ընթացիկ գործի վերաբերյալ:

Նախնական արգելքներ և լուսաբանումն արգելող որոշումներ

Միացյալ Նահանգներում նախնական արգելքների դեմ ուժեղ ավանդույթը գրեթե անհնար է դարձնում դատարանին համոզել, որ մամուլի համար դատավարությունը լուսաբանելն արգելող որոշում ընդունի: Հիմնականում արգելող որոշումները վերաբերում են միայն դատական պաշտոնյաներին և

դատավարության մասնակիցներին: Գրեթե համընդհանուր կերպով դատարանները որոշում են ընդունել, որ կոնկրետ գործին վերաբերող տեղեկատվության սփռումը, որը մամուլը օրինական ճանապարհով է ձեռք բերել, չի կարելի արգելել, անկախ նրանից, թե այդ տեղեկատվությունը ծագել է դատական դահլիճի ներսում, թե՝ դրսում: 1976թ. Գերագույն դատարանը վճռեց, որ դատավարությունը լուսաբանելու արգելքի մասին որոշումը թույլատրելի կլինի միայն, եթե հրապարակումը ներկայացնի «հստակ և առկա վտանգ» դատական վարույթի նկատմամբ, և եթե որոշումն իրականում արդյունավետ լինի՝ մեղմելու վնասը, և եթե պակաս արմատական ոչ մի այլ միջոց չի լուծի խնդիրը: Այս պատճառով էլ Միացյալ Նահանգների լրագրողները գրեթե երբեք չեն սահմանափակվում դատավարության լուսաբանումն արգելող որոշումներով: Հարկ եղած դեպքում էլ հաջողում են բեկանել այն որոշումները, որոնք պարտադրվում են:

Հազվագյուտ բացառություն տեղի ունեցավ 2003թ.-ին: Պրոֆեսիոնալ բասկետբոլիստ Քոբ Բրայենթին բռնաբարության մեղադրանք ներկայացվեց, և նա կանգնեց դատարանի առջև Կոլորադո նահանգում: Դատական գրագիրը էլեկտրոնային փոստով պատահաբար դատավարությանը նախորդող դռնփակ լսման արձանագրությունն ուղարկեց 7 մեդիա կազմակերպությունների: Արձանագրությունը ներառում էր ենթադրյալ զոհի անունը, տեղեկատվություն, որը գաղտնի էր բռնաբարության գործով տեղեկատվության գաղտնիության պահպանման Կոլորադոյի օրենքով:

Սխալը պարզելով՝ նախագահող դատավորը հրամայեց լրատվական կազմակերպություններին «ջնջել, ոչնչացնել տեղեկատվությունը և չբացահայտել այնտեղ ներկայացված բովանդակության որևէ տարր, այլապես նրանք կմեղադրվեն դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու մեջ»: ԱՄՆ իրավունքի մի նախադեպ առաջարկում է լրագրողներին հրաժարվել ենթարկվել դատավարությունը լուսաբանելու ակնհայտորեն հակասահմանադրական որոշումներին: Այս դեպքում լրատվական կազմակերպությունները անմիջապես բողոքարկեցին որոշումը նահանգի բարձրագույն ատյանում: Կոլորադոյի Գերագույն դատարանը վճռեց, որ մեղադրողի անձի գաղտնիության պահպանումը և հետագայում սեռական բնույթի բռնի գործողությունների հետապնդման հնարավորությունը այն գերակա նահանգային շահեր էին, որոնք և արդարացնում էին որոշումը: Դատարանի մեծամասնության դիրքորոշման հետ չհամաձայնող դատավորները նկատում էին, որ լրատվական կազմակերպությունները ոչ մի օրենք չեն խախտել. «Ոչ թե ԶԼՄ-ների, այլ կառավարության պատասխանատվությունն է պաշտպանել իր հսկողության տակ գտնվող տեղեկատվությունը»: Ճակատագրի հեգնանքով, կարճ ժամանակահատված անց ավելի շատ տեղեկատվություն, այդ թվում նաև ենթադրյալ զոհի ազգանունը, դրվեց համացանցում: Դատավորը հրապարակեց արձանագրությունների մեծ մասը, իսկ ԶԼՄ-ները հրաժարվեցին ԱՄՆ Գերագույն դատարան ներկայացրած իրենց բողոքից:

Ի հակադրություն սրան, Միացյալ Թագավորության և Կանադայի դատավորներն ունեն լայն իրավասություն՝ արգելելու այնպիսի

նյութի հրապարակումը, որը կարող է առաջ բերել «զգալի վտանգ, որ արդարադատության իրականացումը... կհայտնվի խոչընդոտների առջև կամ կողմնակալ կլինի»: Նաև ցանկացած անձ, ով իր վարքագծով հակված է «խանգարել արդարադատության իրականացման ընթացքին... անկախ այդպես վարվելու մտադրությունից», կարող է մեղադրվել դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունքի մեջ: Որպես հետևանք, այն պահից, երբ կասկածյալը ձերբակալվում է կամ նրան մեղադրանք է ներկայացվում, մինչև դատավճռի կայացումը, այս պետություններում լրագրողները կարող են մասնակցել դատավարության նիստերին, բայց իրենց նյութերում ունեն սահմանափակումներ: Այլ երկրներում կամ քաղաքացիական կամ քրեական օրենսգրքերի դրույթները մասնավորեցնում են, թե ինչ տիպի տեղեկատվություն կարելի է կամ չի կարելի հաղորդել: Տարածված սահմանափակումները ներառում են հանցանքի զոհերի ինքնության բացահայտումը, ամուսնալուծության դեպքում ընտանեկան մանրամասները կամ երեխայի նկատմամբ խնամակալության դատավարությունը, մեղադրյալի նախորդ քրեական պատմության մանրամասները: Այնպիսի երկրներում, ինչպիսին Շվեդիան է, օրենքը լռում է այս հարցում, բայց լրագրողների սեփական էթիկական կոդեքսը մասնավորեցնում է, որ պաշտպանյալների ինքնությունը չպետք է բացահայտվի, եթե «ակնհայտ հանրային շահը չի պահանջում հակառակը»:

Տեսախցիկներ դատարանի դահլիճում

Դատարանի դահլիճում տեղադրվող տեսախցիկները ապահովում են ավելի լայն հասանելիություն, բայց բազմաթիվ երկրներում այդ լուծումն էլ է վիճահարույց: Տխրահռչակ Օ. Ջեյ Սիմփսոնի մարդասպանության վերաբերյալ դատավարության լուսաբանումը 1995թ. Կալիֆորնիայում շարունակում է ազդել դատավորների և քաղաքականություն մշակողների վրա ամբողջ աշխարհում: Նրանք հղում են անում այդ դեպքի ընկալվող ավելորդություններին, որպես ապացույց, որ տեսախցիկները խաթարում են արդար դատաքննության իրավունքը, թեև Սիմփսոնն արդարացվեց: Տեսախցիկները կխանգարեն դատավարության ընթացքին, կվախեցնեն վկաներին և կխրախուսեն իրավաբաններին գործելու ոչ պատշաճ կերպով. սրանք մտահոգություններից մի քանիսն են միայն, որոնք փաստարկվում են դատական գործերը էլեկտրոնային միջոցներով չլուսաբանելու օգտին: Այնուամենայնիվ, տեսախցիկները շարունակում են թույլատրվել ԱՄՆ նահանգային դատարաններում և մի շարք երկրների վճռաբեկ ամենաբարձր ատյաններում, բայց առայժմ ոչ Միացյալ Նահանգների Գերագույն դատարանում: 2000թ. Հարավսլավիայի գործերով միջազգային քրեական տրիբունալի կողմից հանձնարարված զեկույցում նշվում էր, որ դատարանում առկա տեսախցիկները զգալիորեն չեն ազդում մասնակիցների վարքագծի վրա և օգնում են լիարժեք և ճշգրիտ դատական արձանագրություն ստանալ: Տեսախցիկները կարող են տեղեկացնել միջազգային հանրությանը տրիբունալի աշխատանքի մասին և խրախուսում են թափանցիկ արդարադատության համակարգի առկայությունը: Առաջարկվում էր, որ այլ միջազգային դատարանները հետևեն այս օրինակին:

Կառավարական պաշտոնյաներին և հասարակական գործիչներին քննադատելու իրավունքը

Լրագրողները հաղորդում են կառավարական պաշտոնյաների և հասարակական դեմքերի գործունեության մասին: Բայց, ինչքան ավելի ականավոր և ազդեցիկ է անհատը, այնքան մեծ է քննադատությանն առարկելու նրա կարողությունը: Իրենց աշխատանքի ընթացքում շատ լրագրողներ կանգնում են դատարանի առջև, որտեղ նրանք մեղադրվում են անձին կեղծ անվանարկելու մեջ:

Զրպարտանքը ավելի լայնորեն սահմանվում է որպես կեղծ և անվանարկող հայտարարություն, որը արվել է մի երրորդ կողմի մոտ մեկ այլ անհատի մասին՝ սուբյեկտի հեղինակությանը վնասելու ներուժով: Շատ երկրներում զրպարտանքի համար ներկայացվող հայցը քննվում է որպես քաղաքացիական գործ, որը ներկայացվում է անհատի կողմից՝ դրամական վնասների փոխհատուցման նպատակով:

Քանի որ բարի համբավի իրավունքը համարվում է կարևոր, սակայն ոչ պարտադիր հիմնարար իրավունք, միջազգային պայմանագրերը հիմնականում չեն մերժում զրպարտանքի պատճառով հարուցված դատական գործերը, որպես արտահայտվելու ազատության իրավունքը և հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքը ոտնահարող երևույթ: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածը, օրինակ, նախատեսում է.

> «Իրավունքների իրականացումը... իր հետ բերում է հատուկ պարտավորություններ և պատասխանատվություն: Այդ պատճառով հնարավոր է, որ այն ենթարկվի որոշ սահմանափակումների, բայց սրանք կարող են լինել միայն օրենքով նախատեսված և անհրաժեշտ են *այլոց իրավունքները և հեղինակությունը* հարգելու համար»[Մեջբերումը խմբագրի]:

ԱՄՆ Գերագույն դատարանը նախ առնչվեց այն հարցի հետ, թե արդյոք սահմանադրության Առաջին փոփոխությունը կիրառելի է *«Նյու Յորք թայմզն» ընդդեմ Սալիվանի* զրպարտանքի գործում (1964): Այս գործն ի հայտ եկավ այն բանից հետո, երբ թերթը հրատարակեց վճարովի խմբագրական գովազդ, որտեղ Ալաբամա նահանգի Մոնտգոմերի քաղաքում քաղաքացիական ակտիվիստները բողոքում էին իրավապահ մարմինների աշխատակիցների վերաբերմունքից: Թեև Լ. Բ. Սալիվանի անունը գովազդում նշված չէր, սակայն տեղական ոստիկանության գործունեությունը վերահսկող քաղաքային հանձնաժողովի անդամը դատի տվեց խմբագրությանը, պնդելով, որ պատվիրված հոդվածը պարունակում էր սխալ հայտարարություններ և զրպարտանք իր հասցեին: Որպես վնասի փոխհատուցում նա ստացավ 500.000 ԱՄՆ դոլար:

ԱՄՆ Գերագույն դատարանը բեկանեց այս որոշումը: Դատավոր Վիլյամ Բրեննանի նախագահությամբ, դատարանը, ձայների մեծամասնությամբ, նկատեց. «Հանրային խնդիրների շուրջ բանավեճը պետք է լինի անկաշկանդ, առողջ և լրիվ բաց», - առաջին անգամ ընդունելով, որ ինչքան էլ հակասական է, բայց Առաջին փոփոխությունը պետք է պաշտպանի որոշ կեղծ հայտարարություններ՝ հանրային կարևորության խնդիրների մասին

ճշմարտացի խոսքը խրախուսելու համար: Այդ ժամանակից ի վեր ոչ մի պետական պաշտոնյա չկարողացավ հաղթել զրպարտանքի վերաբերյալ դատական գործերում՝ առանց ապացուցելու իրական կանխամտածվածությունը, որ հայտարարությունը հրապարակվել է «գիտակցմամբ, որ այն կեղծիք է կամ անփույթ անտարբերությամբ՝ կեղծիք է, թե՝ ոչ»: Հետագա գործերում, դատարանը տարածեց իրական կանխամտածվածության ստուգումը, որը սկսեց ներառել զրպարտանքի վերաբերյալ նաև այն հայցերը, որոնք ներկայացվում էին հասարակական գործիչների կողմից:

Մասնավոր անձանց (ոչ պետական պաշտոնյաների կամ հասարակական գործիչների) մասնակցությամբ գործերում դատարանը թույլ է տալիս յուրաքանչյուր նահանգի հաստատել անհրաժեշտ չափորոշիչը: Դատարանը ընդունում է, որ պետք է լինի կառավարական օրինական շահ՝ անհատին հնարավորություն տալու փոխհատուցում ստանալ, երբ հրապարակված կեղծիքը վարկաբեկում է իրեն: Բայց նույնիսկ այս դեպքում, Գերագույն դատարանն առնվազն պահանջում է, որ հայցվորն ապացուցի հրատարակչի անփութությունը, մի չափորոշիչ, որը հնարավորություն է տալիս լրագրողներին որոշակի պաշտպանության տարբերակ ունենալ՝ ոչ միտումնավոր սխալների համար:

Լրագրողներն ունեն բազմաթիվ արտոնություններ և պաշտպանության միջոցներ զրպարտության մեղադրանքներից, նույնիսկ ոչ հասարակական գործիչների պարագայում: Անշուշտ, ճշմարտությունն է բացարձակ պաշտպանությունը զրպարտանքից: Արդարացի հաղորդման արտոնությունը լրագրողին թույլ է տալիս առանց պատասխանատվության վերահրատարակել կառավարական փաստաթղթեր, այդ թվում նաև դատական գործեր, որոնք ունեն զրպարտանքի տարրեր պարունակող հայտարարություններ, քանի դեռ նրանց բովանդակության լուսաբանումը ճշգրիտ է: Արդարացի մեկնաբանությունը հնարավորություն է տալիս հասարակական կարևորություն ներկայացնող գործերում ներգրավված անհատների ոչ չարակամ քննադատություն՝ պայմանով, որ այն հիմնված է այնպիսի փաստերի վրա, որոնք ճշմարտացիորեն հիշատակված են կամ որևէ այլ պատճառով արտոնյալ են: Ելնելով Առաջին փոփոխության օրենքից, Դատարանը վճռել է, որ զուտ կարծիքը, որի ոչ ճշմարտացիությունը, ոչ կեղծիքը հնարավոր չէ ապացուցել, բացարձակ պաշտպանված է:

Կանադայի, Ավստրալիայի, Ճապոնիայի, Թաիլանդի, Բրազիլիայի, Լեհաստանի օրենքները նախատեսում են այս արտոնությունների և պաշտպանության զանազան տարբերակներ: Շատ երկրներում տարբերակում չի մտցվում հասարակական և անհատ գործիչների միջև, թեև միևնույն ժամանակ հնարավոր է, որ կառավարական պաշտոնյա հանդիսացող հայցվորին պարտադրվեն ապացույցի ավելի խիստ չափորոշիչներ: Որոշ երկրներ կորպորացիաներին թույլ են տալիս զրպարտանքի հայց ներկայացնել դատարան, բայց երկրների մեծ մասում դատական գործ հարուցելու հնարավորությունը սահմանափակվում է՝ վերաբերելով միայն այն դեպքերին, երբ հայտարարությունները վնաս են հասցնում ընկերության առևտրային կամ գործարար հեղինակությանը:

Բազմաթիվ երկրներ վերացրել են խռովարարության մղող պասկվիլ/անարգագիրը և արգելում են դատական գործերի հարուցումը կառավարական մարմիններին վարկաբեկող հայտարարությունների համար, չնայած անհատ պաշտոնյան կարող է այդպես վարվել:

Սովորաբար հայցվորը թե՛ մեղադրանք է ներկայացնում, թե՛ ապացուցում է զրպարտանքի տարրի առկայությունը, նաև փորձում է ստանալ դրամական փոխհատուցում կրած վնասների համար: Երբեմն ենթադրել է, որ հեղինակությանը վնաս է հասցվել, օրինակ, երբ հայտարարությունը անարդարացիորեն մեղադրում է անհատին հանցանքի մեջ: Բայց հիմնականում հայցվորը պարտավոր է ապացուցել, որ իրեն, իսկապես, վնաս է հասցվել հրապարակման արդյունքում: Շատ երկրներ թույլ են տալիս շտկել հայցվորի կրած վնասները՝ փոխհատուցելով իրականում կրած ֆինանսական կորուստները, ինչպես նաև հեղինակազրկումը, համայնքում կամ մասնագիտական շրջանակներում ունեցած դիրքի կորուստը կամ անձնական նվաստացումը: Բացի այդ, եթե լրագրողի վարքագիծը համարվում է անարգական, դատարանները կարող են նշանակել կարգապահական տույժեր, որոնք նախատեսված են ոչ թե հայցվորին փոխհատուցելու, այլ ԶԼՄ ներկայացուցիչ հանդիսացող պաշտպանյալին պատժելու համար:

Որոշ երկրներում պաշտպանյալ ԶԼՄ-ները կարող են մեղմել կամ նվազեցնել իրենց կողմից հասցված վնասները՝ ցույց տալով, որ իրենք անհապաղ հրապարակել են կեղծ կամ վարկաբեկող նյութի լիարժեք և արդարացի հերքում: Մի շարք երկրներում պաշտպանյալի կողմից ներկայացվող այն պնդումը, որ զրպարտանքը հրապարակվել է չկանխամտածված, կարող է կասեցնել զրպարտանքի վերաբերյալ դատական գործը կամ պաշտպանության կողմից որպես փաստարկ օգտագործվել դատավարության ժամանակ:

Դրամական վնասների այլընտրանքը դատական արգելանքն է, որով արգելվում է ենթադրվող զրպարտչական նյութի հրապարակումը: Միացյալ Նահանգների և Կանադայի դատարանները հրաժարվել են դատական արգելանքներից, որպես զրպարտանքից պաշտպանության միջոց, գտնելով, որ դրանք անհամատեղելի են արտահայտվելու ազատության սկզբունքների հետ: Բայց այլ երկրներում այդ արգելանքները կիրառվում են: Օրինակ՝ Հնդկաստանի դատարանները կարող են երբեմն հրապարակման վրա նախնական արգելանք կիրառել, բայց միայն այն դեպքում, երբ բողոքի նյութ հանդիսացող հայտարարությունը ակնհայտորեն կեղծ է, կամ, եթե հայցվորը կարող է ապացուցել անձին կամ նրա սեփականությանը սպառնացող անմիջական վնասի հավանականությունը: Իտալիայում ոչ միայն նախնական արգելքներ են կիրառվում, այլև, Քրեական օրենսգրքի 321 հոդվածի ներքո, դատարանը կարող է որոշում կայացնել՝ առգրավելու վարկաբեկող հրապարակումը:

Բազմաթիվ երկրներում, պետական մեղադրողը կարող է քրեական վարույթ սկսել զրպարտանքի գործով: Շատ գիտնականներ զրպարտանքի գործով քրեական վարույթը համարում են հնացած (սկզբնապես դրա նպատակն էր մենիշխանությանը կամ արիստոկրատիային պաշտպանել քննադատությունից կամ վիրավորանքից): Դրա կիրառման

տրամաբանական հիմնավորումներից մեկն իրավական այլընտրանքի տրամադրումն էր մարդկանց, ովքեր կարող էին այլ դեպքերում մենամարտել կամ իրենց ձեռքը վերցնել արդարադատության հաստատումը՝ ձգտելով բավարարում ստանալ իրենց պատվին կամ արժանապատվությանը հրապարակայնորեն հասցված վիրավորանքի դիմաց: Այս սպառնալիքները կարող են անիրատեսական համարվել հիմա: Նույնիսկ որոշ կայացած ժողովրդավարություններ, այդ թվում՝ Միացյալ Նահանգները, պահպանում են զրպարտանքի համար քրեական պատասխանատվության դրույթներն իրենց օրենսգրքերում, թեև դրանք հազվադեպ են կիրառվում:

Գերմանիայում զրպարտանքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող օրենքները պահպանվել են որպես անհրաժեշտություն՝ պաշտպանելու անհատի արժանապատվության իրավունքը Հիմնական օրենքի ներքո: Պորտուգալիան պնդում է, որ պետությունը պարտավոր է պաշտպանել անհատի հեղինակությունը: Բելգիայի Քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածը թույլ է տալիս դատական հետապնդում զրպարտանքի համար, որը սահմանվում է որպես «անձին չարակամությամբ և հրապարակայնորեն այնպիսի փաստի վերագրում, որի իրավական ապացույցը հնարավոր չէ գտնել, և որը, հավանաբար, պատվազրկում է անհատին կամ այդ անհատին ենթարկում է հանրային արհամարհանքի»:

Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը զրպարտանքների վերաբերյալ քրեական պատասխանատվության դատավճիռներն անվավեր է ճանաչել՝ Եվրոպական հռչակագրի 10-րդ հոդվածի հիման վրա: *Լինջենան ընդդեմ Կիպրոսի* գործում, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռեց, որ քաղաքական գործիչը, որն «անխուսափելիորեն և գիտակցաբար» պատրաստակամորեն ընդունում է լրագրողների և հասարակության կողմից իր գործերի մանրազնին քննությունը, պետք է պատրաստ լինի նաև անողոք քննադատության: Դատարանը նշեց, որ զրպարտանքի համար քրեական մեղադրանքները «սահմանափակող ազդեցություն» են ունենում մամուլի վրա և խոչընդոտում են մամուլի հանրային հսկիչի դերակատարումը: Այնուամենայնիվ, զրպարտանքի համար քրեական պատասխանատվություն ենթադրող օրենքները համարվում են արդարացված և անհրաժեշտ՝ պաշտպանելու նոր զարգացող ժողովրդավարությունները դրան վնասող քննադատությունից: Ադրբեջանը և Մալդիվյան կղզիները միայն երկուսն են այն երկրներից, որոնք 2009թ. ամռանը դատական հետապնդման են ենթարկել լրագրողներին՝ զրպարտանքի համար:

Որոշ երկրներ շատ ավելի թույլ չափորոշիչներ են կիրառում, որոնք անհամատեղելի են մամուլի ազատության հետ: Մի մասը բանտարկում է լրագրողներին անհատների մասին սխալմամբ կեղծիքներ հրապարակելու համար: Շատ երկրներում *անհարգալից վերաբերմունքի մասին* օրենքները թույլ են տալիս լրագրողին քրեական պատասխանատվության ենթարկել՝ պետական պաշտոնյայի կամ հաստատության արժանապատվությանը վնաս հասցնելու կամ նրանց վարկաբեկելու համար: Թուրքիան, օրինակ, ունի

անարգանքին վերաբերող 11 առանձին օրենք, ներառյալ մեկը, որը պաշտպանում է Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի հիշատակը: Կամերունում նախագահի, փոխնախագահի կամ որևէ օտարերկրյա ղեկավարի հասցեին հնչած անհարգալից արտահայտության համար պատժում են մեկից հինգ տարի ազատազրկմամբ և/կամ տուգանքով: Արգենտինայում լրագրողը, որն «անպատվում կամ անարգում է» մեկ այլ անհատի, կարող է տուգանվել կամ բանտարկվել: Եվ նույնիսկ Ֆրանսիան իր օրենսգրքերում պահպանում է 1881թ. հուլիսի 29-ի օրենքը, որը թույլ է տալիս պատժել մամուլին՝ նախագահին, սենատին, օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաներին կամ ազգային դրոշն անարգելու դեպքում:

Ի հակադրություն սրան, Միացյալ Նահանգների Գերագույն դատարանը վճռել է. «Կեղծ գաղափար՝ այդպիսի բան չի լինում»: *Գերցն ընդդեմ Ռոբերտ Վելչի* (1974թ.) գործում Դատավոր Լյուիս Փաուելը նկատեց. «Ինչքան էլ կործանարար լինի կարծիքը, այն ուղղելու համար մենք կախված ենք ոչ թե դատավորների և ատենակալների խղճից, այլև ուրիշ գաղափարների հետ նրա մրցակցությունից»: 1988թ. դատարանը կատեգորիկ մերժեց Լարի Ֆլինտի *«Հասլեր»* ամսագրի դեմ հոգեկան տառապանք պատճառելու համար Պատվելի Ջերի Ֆելուելի ներկայացրած դատական հայցը: Ամսագիրը հրապարակել էր «գովազդային ծաղրանկար», որտեղ պատկերված էր քահանան՝ ենթադրաբար նկարագրելիս իր առաջին սեռական հարաբերությունը մոր հետ արտաքնոցում, երբ երկուսն էլ արբած էին: Հրապարակված նյութը ներառում էր հերքում, որտեղ ասվում էր, որ այս պարոդիան մտացածին էր, և «դրան պետք չէր լուրջ վերաբերվել»:

Ֆելուելը դատական հայց ներկայացրեց Ֆլինտի դեմ՝ զրպարտանքի, անձնական կյանք

Վերևում՝ Այն բանից հետո, երբ *«Հասլերի»* սեփականատեր Լարի Ֆլինտը, ձախից, հեռուստաքարոզիչ Պատվելի Ջերի Ֆելուելի մասին, աջից, անպարկեշտ ծաղրանկար հրապարակեց, Ֆելուելը Ֆլինտի դեմ դատական գործ հարուցեց զրպարտանքի համար: Գործը հասավ ԱՄՆ Գերագույն դատարան, որի նախագահ Վիլյամ Ռենքվիստը գրեց՝ լինելով հասարակական գործիչ՝ Ֆելուելը պետք է հանդուրժեր այդպիսի հարձակումները՝ բավականաչափ «շունչ քաշելու տեղ» թողնելով Առաջին փոփոխությամբ պաշտպանվող ազատությունների համար:

ներխուժման և կանխամտածված հոգեկան տառապանքներ պատճառելու համար: Թեև Ֆելուելը չհաղթեց դատը առաջին երկու հայցերի մասով, ատենակալները հայցի երրորդ մասով վճիռը կայացրեցին նրա օգտին: Վերաքննիչ դատարանը պաշտպանեց այս վճիռը, բայց Գերագույն դատարանը միաձայն անվավեր ճանաչեց այն: Հղում անելով քաղաքականության՝ ամերիկյան կոշտ և թունոտ լուսաբանման երկարամյա ավանդույթին, Գերագույն դատարանի նախագահ Վիլյամ Ռենքվիստը մերժեց Ֆելուելի՝ «անարգականի չափորոշիչը» պարտադրելու փորձը, որը թույլ կտար փոխհատուցում ստանալ: «Քաղաքական և սոցիալական շարադրանքում «անարգումն» այն ոլորտն է, որն ունի ներքին սուբյեկտիվություն, ինչը և հնարավորություն է տալիս ատենակալներին՝ պատասխանատվության ենթարկել ատենակալների ճաշակների կամ տեսակետների հիման վրա, կամ ... կոնկրետ արտահայտությունը չհավանելու հիման վրա»: Եթե չի ապացուցվում, որ փաստի կեղծումը իրականում կանխամտածված է տեղի ունեցել, գրեց Ռենքվիստը, հասարակական գործիչը պետք է հանդուրժի այդպիսի հարձակումը, որպեսզի անհրաժեշտ «շնչելու տեղ» թողնի Առաջին փոփոխությամբ պաշտպանվող ազատությունների համար:

Անհատների մասին լրատվական արժեք ներկայացնող տեղեկատվության հավաքման և հրապարակման իրավունքը

Լյուիս Բրենդեյսը և Սեմյուել Ուորենը, երկու բոստոնցի իրավաբաններ, 1890թ. *«Հարվարդ լո ռիվյուում»* հրապարակեցին մի հոդված, որը վերնագրված էր «Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք»: Նրանք հիշատակում էին.

> «Մամուլը բոլոր հնարավոր ուղղություններով անցնում է պատշաճության և պարկեշտության ակնհայտ սահմանները: Ասեկոսեներն այլևս անբանների և չարամիտների միջոցը չեն, այլև դարձել են արհեստ, որը կիրառվում է ջանասիրությամբ և անամոթությամբ: Հեշտասերների ճաշակը բավարարելու համար սեռական հարաբերությունների մանրամասները նկարագրվում են օրաթերթերի սյունակներում: Անբաններին զվարճացնելու համար սյունակները հերթով լցվում են ալարկոտ բամբասանքով, որը կարելի է ձեռք բերել միայն ընտանեկան միջավայր ներխուժմամբ... Երբ անձնական կյանքի մասին բամբասանքը արժանանում է տպագրության և իրենով լցնում է հասարակական իրական հետաքրքրություն ներկայացնող հարցերի համար նախատեսված տարածությունը, զարմանալի չէ, որ տգետները և անմիտները սխալ են ընկալում մամուլի կարևորությունը»:

Իրավաբանների կանխատեսական դիտարկումներն ի վերջո հանգեցրին Միացյալ Նահանգներում նախադեպային իրավունքի ներքո անձնական կյանքի գաղտնիության իրավունքի իրացմանը: Լյուիս Բրենդեյսի և Սեմյուել Ուորենի մտահոգությունները 100 տարի անց էլ խիստ արդիական են:

Անձնական կյանքի գաղտնիությանը վերաբերող իրավունքներն ամրագրված են մի

շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 17-րդ հոդվածն ասում է. «Ոչ ոք չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի, տան կամ նամակագրության մեջ կամայական կամ ապօրինի միջամտության», իսկ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է «անձնական կյանքի և ընտանիքի անդամների կյանքի, տան և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքը»:

Պետական մակարդակում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող են երաշխավորվել սահմանադրությամբ, իրավական նորմով, կամ նախադեպային իրավունքով: Բրազիլիայի սահմանադրության 5-րդ հոդվածն, օրինակ, հայտարարում է. «Անհատի անձնական կյանքը բնական է և անձեռնմխելի»: Դանիական Քրեական օրենսգիրքը երաշխավորում է անձնական կյանքի իրավունքը՝ հանցանք համարելով ապօրինի մուտքը մասնավոր բնակարաններ, անձնական աշխատանքներից ապօրինի օգտվելը, գաղտնալսելու համար տեխնիկական միջոցներ օգտագործելը, անհատներին լուսանկարելը կամ լրտեսելը մասնավոր սեփականության սահմաններում, ինչ-որ մեկի մասնավոր կյանքի փաստերը մեկ ուրիշին հաղորդելը, անհատի առանձնության մեջ ներխուժելն այն բանից հետո, երբ նա զգուշացրել է, որ իրեն մենակ թողնեն: Գերմանիան երաշխավորում է «անձնականության իրավունքը» իր Հիմնական օրենքում: Իսկ Հարավաֆրիկյան Հանրապետությունում անձնական կյանքի իրավունքը երաշխավորված է թե՛ սահմանադրության 14-րդ բաժնով, թե՛ ընդհանուր իրավունքով:

Միացյալ Նահանգների դատարաններին, այնուամենայնիվ, երկար ժամանակ պահանջվեց՝ ճանաչելու անձնական կյանքի գաղտնիության իրավունքը: Թեև Գերագույն դատարանը մեկնաբանել է ԱՄՆ սահմանադրության Չորրորդ փոփոխությունը՝ պաշտպանելու անհատներին անհիմն խուզարկություններից և բռնագրավումներից, ինչպես նաև կառավարական գործակալների չթույլատրված ներխուժումներից, բայց փոփոխությունը կիրառվում է կառավարության և ոչ թե անհատների գործողությունների նկատմամբ: Բացի փոքրաթիվ դաշնային իրավական ակտերից, որոնք արգելում են մասնավոր հաղորդակցությունների էլեկտրոնային գաղտնալսումների որոշ տեսակներ, Անձնական կյանքի գաղտնիության մասին օրենքը 50 նահանգների իրավասությունն է:

1960թ. ամերիկացի իրավագետ Վիլյամ Պրոսերը սահմանել էր 4 հստակ իրավախախտում՝ կապված անձնական կյանքի գաղտնիության հետ.

- ներխուժում միայնության մեջ,
- անձնական կյանքին առնչվող փաստերի հրապարակում,
- անձի նկարագրություն կեղծ լույսի ներքո,
- մեկ այլ անձի անվան կամ պատկերի անօրինական յուրացում կամ օգտագործում առևտրային նպատակով:

Սրանց մի մասը բխում է ընդհանուր իրավունքից: Մյուսները սահմանված են օրենքով: Ոչ բոլոր իրավական համակարգերն են ճանաչում չորս իրավախախտումները: Բայց յուրաքանչյուրն առանձնացված է՝ անհատին փոխհատուցում ապահովելու ոչ թե նրա արտաքին

հեղինակության հիման վրա, ինչպես զրպարտանքի դեպքում, այլ իր նկատմամբ խախտումների սեփական զգացողության նկատառումով:

Մենության մեջ ներխուժումը ամենից հաճախ տեղի է ունենում լուրերի հավաքման համատեքստում: Այն ներառում է ոչ միայն ֆիզիկական ներխուժումը ինչ-որ մեկի սեփական տարածքը, այլ նաև գաղտնալսումը, ժապավենի վրա ձայնագրումը կամ առանց թույլտվության որևէ այլ կերպ մասնավոր խոսակցության գաղտնալգրումը: Գերագույն դատարանը մի անգամ նկատել էր. «Առանց նորություններ գտնելու գործունեության համար տրամադրվող պաշտպանության, մամուլի ազատությունը բովանդակությունից զերծ կլիներ»: Բայց Գերագույն դատարանը երբեք չի ազատել լրագրողներին այն օրենքների առջև պատասխանատվությունից, որոնք արգելում են ներխուժումը: Թաքնված տեսախցիկների օգտագործումն, օրինակ, ապօրինի է որոշ նահանգներում, իսկ Գերագույն դատարանը սատարեց Ֆլորիդա նահանգում կայացված վճիռն առ այն, որ գաղտնի տեսաձայնագրությունների օգտագործումն արգելող իրավական ակտերը չեն խախտում մամուլի՝ Առաջին փոփոխությունից բխող իրավունքները:

Շատ երկրներում լրագրողներն ազատ են ձայնագրել կամ լուսանկարել ցանկացած բան, ինչ տեսնում են հասարակական վայրում: Այնուամենայնիվ, լինում են և բացառություններ: Շոտլանդացի Ջեյ Քեյ Ռոուլինգը, ով հայտնի «Հարի Փոթերը» շարքի հեղինակն է, շահեց իր մանկահասակ որդու անունից ներկայացրած անձնական կյանք կատարած ներխուժման համար հայցի դատական գործը, երբ իրեն լուսանկարել էին Էդինբուրգի փողոցում՝ որդու հետ զբոսասայլակով քայլելիս: Իսկ մի երիտասարդ կանադուհի կրած վնասների փոխհատուցում ստացավ մոնրեալյան ամսագրից, որը լուսանկարել էր այդ կնոջը դռան շեմքին նստած՝ այն բանից հետո, երբ, նրա պնդմամբ, ընկերները ծաղրել էին իրեն: Թեև լուսանկարն արվել էր հասարակական վայրում, բայց Կանադայի Գերագույն դատարանը վճռեց, որ կնոջ՝ մամուլի կողմից իր նկարի գործածությունը հսկելու իրավունքը երաշխավորված է Քվեբեկի մարդու իրավունքների խարտիայի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի մասին դրույթով:

Անձնական կյանքին վերաբերող փաստերի հրապարակման հետ կապված իրավախախտումը ներկայացնում է արտահայտվելու ազատության դիլեման, որովհետև այն թույլ է տալիս դատական հայց ներկայացնել այն լրագրողների դեմ, ովքեր հրատարակել են ճշմարտությունը: Այնուամենայնիվ, շատ երկրներ ընդունում են այս իրավախախտման տարբեր տարատեսակները: Միացյալ Նահանգներն այն մեկնաբանում է նեղ իմաստով, սահմանափակելով հայցերն այնպիսի հրապարակումների համար, որոնք պարունակում են խելամիտ մարդու համար ծայրահեղ վիրավորական անձնական բնույթի փաստեր և չեն ներկայացնում իրական հասարակական հետաքրքրություն: Ենթադրվում է, որ հասարակական գործիչը կամ պետական պաշտոնյան անձնական կյանքի գաղտնիության ավելի քիչ ակնկալիք պետք է ունենա:

Յուրաքանչյուր լրագրողի համար մարտահրավեր է՝ որոշել, արդյոք դատարանը կոնկրետ փաստը կհամարի լրատվական արժեք

ներկայացնող, թե՝ ոչ: Լրատվական կազմակերպության՝ տեղեկատվությունը հրապարակելու որոշումը չի նշանակում, որ այն հասարակական հետաքրքրություն է ներկայացնում: Կարելի է նաև առանձնացնել այնպիսի խնդիրներ, որոնք իրականում հասարակական հետաքրքրություն են ներկայացնում և կապել այդ խնդիրները անհատների հետ: Օրինակ, երբ բրիտանական բուլվարային *«Դեյլի միրոր»* թերթը հրատարակեց Նաոմի Քեմփբելի լուսանկարները անանուն թմրամոլների հանդիպումից հեռանալիս, սուպերմոդելը կարողացավ փոխհատուցում ստանալ անձնական կյանք ներխուժումից կրած վնասների համար: Լորդերի պալատը եզրակացրեց՝ թեև թմրանյութերի չարաշահման թեման ընդհանրապես հանրային հետաքրքրություն ներկայացնող է, բայց Քեմփբելի կախվածությունը և բուժումը հանրային հետաքրքրության խնդիրներ չեն:

Առավել ծայրահեղ օրինակ է Մոնակոյի արքայադուստր Քերոլայն ֆոն Հանովերին, ով պնդում էր, որ իր սովորական գործողությունների՝ ձիավարելու, առևտուր անելու, դահուկ քշելու լուսանկարները, համաձայն գերմանական օրենքի, խախտում էին իր անձնական կյանքի իրավունքը: Գերմանական դատարանները մերժեցին նրա հայցերը, սակայն 2004թ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պաշտպանեց դրանք՝ նշելով, որ խախտվել էին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված արքայադստեր իրավունքները: Դատարանն ընդունեց, որ ֆոն Հանովերը հասարակական գործիչ է, սակայն վճռեց, որ լուսանկարները հասարակական հետաքրքրության տարրեր չէին պարունակում.

> «Հիմնարար տարբերակում պետք է մտցնել, օրինակ, քաղաքական գործիչների կողմից իրենց գործառույթների իրականացման հետ ժողովրդավարական հասարակություններում բանավեճի նպաստող, նույնիսկ հակասական փաստերի լուսաբանման, և որևէ անհատի, տվյալ դեպքում հատկապես պաշտոնական գործառույթներ չիրականացնող մեկի, անձնական կյանքի մանրամասների լուսաբանման միջև: Եթե առաջին դեպքում մամուլն իրականացնում է ժողովրդավարությունում իր՝ հսկիչի կենսական դերը, նպաստելով հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության և գաղափարների հաղորդմանը, ... ապա վերջին դեպքն այդպիսին չէ»:

Ընդհանուր առմամբ, տեղեկատվությունը հանրային ոլորտում է: Օրինակ՝ այնպիսի մանրամասներ, որոնք կարելի է ձեռք բերել հանրային արխիվներից կամ արձանագրություններից, չեն կարող անձնական կյանք ներխուժելու համար դատական հայցի հիմք լինել: 1989թ. ԱՄՆ Գերագույն դատարանը վճռեց, որ սեռական ոտնձգության զոհը չի կարող դատական հայց ներկայացնել այն թերթի դեմ, որում քրեական դեպքի լուսաբանման ժամանակ հրապարակվել է իր անունը: Նույնիսկ, եթե Ֆլորիդան, այն նահանգը, որում բնակվում է զոհը, արգելում էր լրատվամիջոցներին հրապարակել բռնաբարության զոհի անունը: Գերագույն դատարանը վճռեց՝ քանի որ թերթը օրինականորեն էր ձեռք

բերել այդ տեղեկատվությունը՝ ոստիկանական զեկույցից, որը անփութության պատճառով շերիֆի բաժանմունքի մամլո պատասխանատուի սենյակում հասանելի էր դարձել ներկաներին, հնարավոր չէր խմբագրությանը պատասխանատվության ենթարկել տեղեկատվությունը ճշգրտորեն հրապարակելու համար: Նույն կերպ, այն անհատը, ով համաձայնում է տեղեկատվություն տրամադրել, կամ ով ինքնակամ է այն բացահայտում լրագրողների համար, հիմնականում, չի կարող բողոքել, երբ այդ տեղեկատվությունը հրապարակվում է:

«Կեղծ լույսի» ներքո անձնական կյանքի ներխուժման հետ կապված խախտումը իրավական անոմալիա է և ամեն տեղ չէ, որ ընդունվում է: Մի քանի երկրներ, ինչպես օրինակ՝ Հունգարիան և Հարավաֆրիկյան Հանրապետությունը, թույլ են տալիս դատական գործ հարուցել կեղծ և ապակողմնորոշող տեղեկատվության հրապարակման դեպքերում: Ամերիկյան նահանգների երկու-երրորդն է ճանաչում այն որպես իրավախախտում: Ինչպես և զրպարտանքը, «կեղծ լույսը» հնարավորություն է տալիս անհատներին դատական հայց ներկայացնել կամ դատի տալ այնպիսի նկարագրությունների համար, որոնք հաղորդում են ոչ ճշգրիտ, սակայն, ոչ անհրաժեշտաբար զրպարտող փաստեր: Սրանք կարող են ի հայտ գալ ճոխացնելու կամ գեղարվեստորեն ներկայացնելու համատեքստում՝ օրինակ վավերագրական դրամաների կամ իրական պատմության այլ բնույթի դրամատիզացիայի դեպքում: Բայց «կեղծ լույսի» ներքո ներկայացվող դեպքերից շատերը ծագում են լուսանկարներին կամ տեսաժապավենին կցվող ապակողմնորոշող ենթագրերի, խորագրերի կամ պատմությունների պատճառով: Օրինակ՝ 2002թ. մի դերասան, որի լուսանկարը հայտնվել էր *«Փլեյգըրլի»* կազմի վրա, հաջողությամբ շահեց Կալիֆորնիա նահանգի դաշնային դատարանում ամսագրի դեմ հարուցված դատական գործը, պնդելով, որ նկարի և գլխագրերի համադրությունը կեղծ տպավորություն էր ստեղծում, թե իր մերկ լուսանկարները ներկայացվելու էին ամսագրում:

Առևտրային նպատակներով անհատի անվան կամ պատկերի յուրացումը շատ երկրների իրավական համակարգերում, ըստ էության, համարվում է սեփականության իրավունք, որը համեմատելի է ապրանքանիշի կամ հեղինակային իրավունքի հետ: Այլոք համարում են, որ սա անհատի իրավունքի ընդլայնում է: Ինչպես ասաց Իռլանդիայի Իրավական բարեփոխումների հանձնաժողովը.

> «Այն դեպքում, երբ անձը չի համաձայնում լուսանկարի նմանատիպ գործածմանը, նա կարող է վիրավորված զգալ կամ շփոթմունքի մատնվել միայն այն պատճառով, որ իրեն նույնականացնում են տվյալ ապրանքի հետ: Այս դեպքում, պաշտպանվող շահն անհրաժեշտաբար սեփականատիրական կամ առևտրային չէ: Այստեղ խոսքը մարդկային արժանապատվության մասին է»:

Չինաստանը, Ավստրալիան, Ավստրիան, Կանադան, Գերմանիան այն երկրներից են, որոնք տարբեր կերպ, բայց ճանաչում են այս իրավախախտումը: Իտալիայի Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասը թույլ է տալիս

անհատներին առևտրային նպատակներով օգտագործել այլ անձի պատկերը, եթե նախապես ստացվել է այդ մարդու համաձայնությունը: ԱՄՆ-ում իրավախախտումը սահմանափակվում է միայն գովազդների և ապրանքային հավաստագրերի օգտագործման դեպքերով: Օրինակ, Տեխասի՝ յուրացման մասին իրավական ակտը (որը հայտնի է որպես Բադի Հոլիի ակտ, քանի որ այն ուժի մեջ մտցվեց ի պատասխան հանգուցյալ երգչի անվան և պատկերի օգտագործման) արտոնում է ցանկացած տիպի գործածում գրքում, ֆիլմում, ամսագրի կամ լրագրի հոդվածում, քաղաքական նյութում կամ արվեստի գործում, ինչպես նաև ներկայացման և ռադիո հաղորդման մեջ: Երգիծական գործերը նույնպես պաշտպանվում են օրենքով:

Կառավարության կողմից լրագրողների և լրատվական կազմակերպությունների արտոնագրման սահմանափակումները

Լրագրողների պարտադիր արտոնագրումն արդարացված միջոց է, որն ապահովում է միայն որակյալ մասնագետների լրագրությամբ զբաղվելը և մասնագիտական չափորոշիչների բարձր մակարդակը: Մի շարք միջազգային կազմակերպություններ առաջարկում են կիրառել արտոնագրումը կառավարության ճնշումներից կամ հետապնդումներից լրագրողներին պաշտպանելու համար: Բայց երբ կառավարությունը ստեղծում է որոշում կայացնող մի մարմին, որը սահմանում է, թե ով կարող է և ով չի կարող հաղորդել նորություններ, ապա այդ կառավարությունը հիմնում է «գրաքննելու արտոնագիր», ինչպես այն որակել էր «Ֆրիդոմ Հաուսի» Լեոնարդ Սասմենը: Արտոնագրի բացակայությունը կարող է առիթ հանդիսանալ լրագրողներին բանտարկելու կամ երկրից վտարելու համար, իսկ ռեժիմները կարող են կամայականորեն չտրամադրել արտոնագիր այն լրագրողներին, ում ուզում են ճնշել: Ինչպես եզրակացնում էր 1980թ. «Մակբրայդ հանձնաժողով» անունով հայտնի Հաղորդակցության խնդիրների ուսումնասիրության միջազգային հանձնաժողովի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ին ներկայացված զեկույցը. «Արտոնագրման մեխանիզմները կարող են նաև հանգեցնել սահմանափակող կարգավորումների, որոնք կառավարում են լրագրողների վարքագիծը: Արդյունքում՝ պաշտպանություն կապահովվի միայն այլ լրագրողների համար, ովքեր պաշտոնական հավանություն են ստացել»: 1985թ. Մարդու իրավունքների համաամերիկյան դատարանը վճռեց, որ Կոստա Ռիկայի՝ լրագրողների արտոնագրման մասին իրավական ակտը հակասում է Մարդու իրավունքների ամերիկյան հռչակագրին և մարդու իրավունքների բոլոր հռչակագրերին ընդհանրապես. «Ոմանց այն զրկում է լրատվական միջոցները որպես ինքնարտահայտման կամ տեղեկատվության հաղորդման միջոց լիարժեքորեն օգտագործելու հնարավորությունից»:

Պարտադիր անդամակցությունը, արտոնագրումը կամ կրթական պահանջվող որակավորումները կարող են խանգարել անհատներին՝ տեղեկատվություն հավաքել և տարածել, իսկ այլոց կարող են զրկել այդ տեղեկատվությունը ստանալու հնարավորությունից: Չապուլտեպեկի հռչակագրի 8-րդ սկզբունքը հանգում է հետևյալ տրամաբանական եզրակացությանը. «Լրագրողների անդամակցությունը գիլդիաների կամ

մասնագիտական և արհեստակցական միությունների, ինչպես նաև ԶԼՄ-ների ներգրավվածությունը գործարար խմբերում պետք է լինի բացարձակապես կամավոր հիմունքներով»: Լրագրողների համար պարտադիր արտոնագրման կամ անդամակցության պահանջները շարունակում են կիրառվել Աֆրիկայի, Ասիայի և Միջին Արևելքի բազմաթիվ երկրներում: 2009թ. հունիսին Բրազիլիայի Գերագույն դատարանը վերացրեց իրավական կարգավորումը, որը լրագրողի համար սահմանում էր պարտադիր համալսարանական կրթություն և անդամակցություն միությանը: Բայց Լատինական Ամերիկայի ինը երկրներ դեռ շարունակում են պահանջներ պարտադրել: Զիմբաբվեում լրագրողներն ըմբոստացան ԶԼՄ-ների հավաստագրման գործառույթն իրականացնող այնպիսի մարմին հիմնելու դեմ, որն իրավունք պիտի ունենար արտոնագրման վճարներ սահմանել: Լրագրողները պնդում էին, որ այդ վճարները խելամիտ չէին և սահմանափակում էին արտահայտվելու ազատությունը:

Արտոնագրումը պայմանավորում է լրատվամիջոցի գործունեության իրականացումը կառավարության հավանությունը ստանալուց հետո միայն: Այն մամուլը վերահսկելու և ինքնագրաքննությունը ամրապնդելու գործիք է: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը երաշխավորում է ազատություն «պետական մարմինների միջամտությունից», բայց երբեք չի մեկնաբանվում որպես արտոնագրման պահանջներն արգելող դրույթ: Այնուամենայնիվ, արտոնագրման պահանջները որոշ դեպքերում կարող են դիտարկվել նաև որպես գրաքննություն, ինչն անհամատեղելի է արտահայտվելու ազատության հետ:

Լրացուցիչ կարգավորումներ կառավարության կողմից

Ադարադատության տարբեր համակարգերում հաղորդվող բովանդակության կարգավորման կառավարության իրավասությունը նույնը չէ տպագիր և հեռարձակվող ԶԼՄ-ների համար: Միացյալ Նահանգներում Առաջին փոփոխությունը կիրառվում է կառավարության կողմից լրագրերի և ամսագրերի արտոնագրումն արգելելու համար, բայց Դաշնային հաղորդակցությունների հանձնաժողովը (ԴՀՀ) բացառիկ իրավասություն ունի արտոնագրել հեռարձակման հաճախությունների օգտագործումը, որովհետև դա համարվում է հասարակական սուղ ռեսուրս: 1989թ. Գերագույն դատարանը նկատեց:

> «Երբ հեռարձակել ցանկացող անհատների թիվը զգալիորեն գերազանցում է տրամադրման ենթակա հաճախությունների թիվը, ծուլություն կլինի հեռարձակման ոլորտի նկատմամբ կիրառել սահմանափակումների չենթարկվող Առաջին փոփոխության իրավունքը, որը համեմատելի է յուրաքանչյուր անհատի՝ խոսելու, գրելու կամ հրատարակելու իրավունքի հետ... Տարօրինակ կլիներ, եթե Առաջին փոփոխությունը, որի նպատակն է պաշտպանել և զարգացնել հաղորդակցության ոլորտը, խոչընդոտեր կառավարության կողմից հաճախությունների տրամադրմանը, որի նպատակն է սահմանափակ արտոնագրերի միջոցով թույլ չտալ գերծանրաբեռնել ցանցը»:

ԱՄՆ օրենսդրությունը լիազորում է ԴՀՀ-ին վերահսկել հեռարձակող

կայանների սեփականատիրության հետ կապված մի շարք հարցեր: Այն կարող է արգելել մեկ իրավաբանական անձի ձեռքում բազմաթիվ ԶԼՄ-ների կուտակումը կամ կարող է սահմանափակել համատեղ սեփականատիրությունն այն պարագայում, երբ նույն ընկերությունը նույն շուկայում բազմաթիվ մեդիա հարթակներ է վերահսկում: Այնուամենայնիվ, ԴՀՀ-ի՝ հեռարձակվող նյութի բովանդակության որոշումների նկատմամբ իրավասությունը ենթարկվում է Առաջին փոփոխությանը: Վերջին տարիներին այդ իրավասությունը սահմանափակվել է՝ հանգելով անպարկեշտությունների կարգավորմանը և հեռարձակողներին պարտադրելուն, որպեսզի հավասար հնարավորություններ ապահովեն ընտրություններին անմիջապես նախորդող ժամանակահատվածում ռադիոալիքներով հանդես եկող հակառակորդ մրցակիցների համար:

Արդարացիության դոկտրինան, որը հեռարձակման արտոնագիր ունեցողից պահանջում էր լուսաբանել իր համայնքում հասարակական նշանակություն ունեցող հակասական թեմաները և հակադիր տեսակետներ ներկայացնելու խելամիտ հնարավորություն տալ, 1987թ. անվավեր է ճանաչվել ԴՀՀ-ի կողմից: Այդ ժամանակ հանձնաժողովը եզրակացրեց, որ նոր ԶԼՄ-ների այդքան բուռն կերպով ի հայտ գալու արդյունքում, այս դոկտրինան «տեղեկատվության զանազան և հակասական աղբյուրներ» ունենալու հանրային շահի համար այլևս անհրաժեշտություն չէր: Հանձնաժողովը հավելեց.

> «Կառավարության կողմից դոկտրինայի կիրառմամբ պայմանավորված ծրագրային բովանդակությանը միջամտելը ավելորդ սահմանափակում է հեռարձակողների լրագրողական ազատությունը... և իրականում խոչընդոտում է հասարակական կարևորություն ունեցող հակասական թեմաների լուսաբանումն ի վնաս հասարակության՝ թուլացնելով հեռարձակող լրագրողների բացառիկ խմբագրական իրավունքները»:

Հարկումը նույնպես խնդիրներ է առաջադրում: Հարկերի վերաբերյալ օրենքները, որոնք կիրառվում են շահույթ հետապնդող բոլոր ընկերությունների նկատմամբ, ընդհանրապես ընդունելի են: Բայց այն օրենքները, որոնք առանձնացնում են լրատվամիջոցներին որպես առանձնակի պարտականություններ ունեցող կառույցներ, հաճախ համարվում են խոսքի ազատության նախնական արգելքներ և հակասահմանադրական են իրենց բնույթով: Բացի այդ, լրատվամիջոցների արտադրանքի միջազգային շրջանառության նկատմամբ կիրառվող սահմանափակումները խախտում են թե՛ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը, թե՛ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածը, որոնք ապահովում են տեղեկատվության և գաղափարների ազատ հոսքը՝ «անկախ պետական սահմաններից»:

Արտոնագրման և կարգավորող մեխանիզմների ծավալուն քննարկումն այս գրքի նպատակների մեջ չի մտնում: Ընդհանուր առմամբ, խելամիտ է պահանջել, որ լրատվական կազմակերպությունները ենթարկվեն կորպորատիվ օրենքներին և ընդհանուր կարգավորումներին: Կառավարության կողմից ԶԼՄ-ների

գործունեության կամ բովանդակության ցանկացած կարգավորում պետք է լինի թափանցիկ, ենթակա լինի հասարակական մանրազնին քննության, մասնակցության և վերահսկողության: Միևնույն ժամանակ չպետք է լինի ավելի ընդգրկուն, քան հանրային շահին սպարելու անհրաժեշտությունն է:

Միայն կոնկրետ և խիստ մասնավորեցված սահմանափակումների կիրառում անպարկեշտ կամ անարգական խոսքի նկատմամբ

Հավանաբար, կառավարության կողմից անպարկեշտ կամ անարգող խոսքի հսկողությունը գնահատելիս, ամենամեծ մարտահրավերն «անպարկեշտ» և «անարգող» եզրույթների սահմանումն է: Միացյալ Թագավորության Անպարկեշտ հրապարակումների 1959թ. (բարեփոխված) ակտը, օրինակ, սահմանում է, որ նյութը պետք է համարվի անարգող, եթե «արդյունքը ... որպես ամբողջություն միտված է այլասերել և փչացնել այն անձանց, ովքեր ամենայն հավանականությամբ, հաշվի առած լինելով բոլոր համապատասխան հանգամանքները, կարդում, տեսնում կամ լսում են նրանում պարունակված կամ մարմնավորված նյութը»: Երբ ԱՄՆ Գերագույն դատարանի դատավոր Փոթեր Ստյուարտին խնդրեցին սահմանել անարգանքը, նա նկատեց. «Երբ տեսնեմ, ես կասեմ՝ նյութն անարգող է, թե՝ ոչ»:

Երկրների մեծ մասում անարգող նյութ հրապարակելը կամ տարածելը քրեական հանցագործություն է: Դրա տարածման նկատմամբ նախնական արգելքները հաճախ սահմանադրական են համարվում: Բազմաթիվ են այն օրենքները, որոնք ձգտում են պաշտպանել երեխաներին պոռնոգրաֆիական նյութերի ստեղծման համար շահագործումից, ինչպես նաև այդպիսի նյութերի հետ շփումից: Բայց ընդհանուր առմամբ, արտահայտվելու ազատության ազգային և միջազգային երաշխիքները, բացառությամբ մի քանի կոնկրետ կարգերի, պաշտպանում են այսպիսի նյութերին հասանելիություն ունենալու այն անձանց իրավունքը, ովքեր բավականին հասուն են համարվում՝ որոշելու, որ կարող են ներգրավվել սեռական հարաբերություններում: Գերմանիայում քրեական օրենսգիրքն արգելում է երեխաների նկատմամբ ոտնձգություններ ցուցադրող պոռնոգրաֆիական նյութերի տարածումը: Շվեդիայում կարող են արգելվել սեռական բռնության որոշ պատկերներ: Մանկական պոռնոգրաֆիա պարունակող նյութերի տարածումը՝ օրենքի տեսանկյունից անարգ կամ ոչ, Միացյալ Նահանգների սահմանադրությամբ ոչ մի կերպ չի պաշտպանվում: Շատ երկրներ արգելում են պոռնոգրաֆիական բովանդակությամբ ցանկացած նյութի վաճառքը տասնութ տարեկանից ցածր անձանց:

Կայացած ժողովրդավարական երկրներում անարգանքի մասին օրենքները սովորաբար առանձնակի մտահոգության առարկա չեն դառնում ավանդական լրատվական կազմակերպությունների համար: Բայց մի շարք երկրներում հնացած իրավական ակտերը դեռևս ճանաչում են այնպիսի օրինազանցություններ, ինչպիսին են «հասարակությունը բարոյազրկելու նպատակով դավադրությունները» կամ «հասարակության պարկեշտություն անարգելը»: Ոչ հստակ ձևակերպումներով օրենքները, հնարավոր է, ապօրինի ճանաչեն անպարկեշտ կամ անարգ նյութն

առանց այն սահմանելու կամ չունենան նյութը որակելու համար համապատասխան լեզվական միջոցներ: Օրինակ՝ 1973թ. ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից ընդունված օրենքը սահմանափակեց «անարգանքի» սահմանումը՝ դրա շարքին դասելով միայն այն գործերը, որոնք «որպես ամբողջություն զերծ են լուրջ գրական, գեղարվեստական, քաղաքական կամ գիտական արժեքից»: Այսպիսի պայմաններում լրագրողները կարող են խախտել օրենքը, եթե հրապարակեն բաց սեռական բովանդակությամբ նորությունների արժեք ունեցող նյութ: Կամ անարգանքի մասին օրենքները կարող են օգտագործվել որպես առիթ՝ այլ բնույթի նյութ գրաքննելու համար: Օրինակ, Վիետնամում կառավարությունը հայտարարում է, թե համացանցի հասանելիությունը ֆիլտրում է միայն բաց սեռական բովանդակություն ունեցող նյութերից: Համացանցի հսկողություն իրականացնող «Օփեն նեթ ինիշիըթիվ» խմբի դեռևս 2007թ. զեկույցը պարզեց, որ պոռնոգրաֆիական նյութերի տարածումը շարունակում է լինել բավականին ազատ, այնինչ կրոնական կամ քաղաքական կայքերը, որոնք քննադատում են կառավարությանը, սովորաբար արգելափակվում են: Նույնիսկ ԱՄՆ Գերագույն դատարանը պաշտպանեց հեռարձակվող անպարկեշտ նյութի նկատմամբ ավելի խիստ սահմանափակումների կիրառումը, թեև տպագիր մամուլում նմանատիպ նյութը կհամարվեր սահմանադրությամբ պաշտպանված խոսք: Այս սահմանափակումների կիրառումը հիմնավորված է նրանով, որ հեռարձակող միջոցի համասփյուռ բնույթը ծրագիրը և բովանդակությունը դարձնում են խիստ հասանելի երեխաների համար:

Անարգանքը լավագույնս կարգավորվում է կենտրոնացված մոտեցում կիրառելիս, երբ օրենքները հստակորեն սահմանում են, թե ինչն է արգելվում, և երբ բոլոր կողմերը տեղյակ են, թե ինչն է թույլատրելի: Օրենքները պետք է տարբերակեն այն նյութերը, որոնք վիրավորական են, բայց ոչ բացահայտ կերպով վնասաբեր: Բովանդակությունը, որն ունի սոցիալական, քաղաքական, գիտական կամ գեղարվեստական արդարացնող արժեք, պետք է պաշտպանվի: Ցանկացած կառավարական մարմին, որը լիազորված է դասակարգելու կամ սահմանափակելու անարգող կամ անպատշաճ նյութի տարածումը կամ պատժամիջոցներ կիրառելու հրապարակողների նկատմամբ, պետք է գործի թափանցիկ և անշեղորեն հետևի կոնկրետ չափորոշիչներին:



Ոչ մի լիիրավ քաղաքացի չպետք է ֆեոդալական, կալանքի կամ պահվի բանտում, կրկնի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից, հայրենասիրի օրենքից դուրս, արդարության կամ ենթարկվի այլ ոտնձգության: Եվ մենք նրա դեմ հայց չենք հարուցի կամ դատական գործ չենք բացի, եթե այդ գործողություններն իրավաչափորեն չպահանջեն նրա գործակիցները և երկրի օրենքը:

Մագնա Կարտա
Ռանիմեդ, Անգլիա
1215*թ. հունիս*

Ինքնակարգավորում դատավարության փոխարեն

Լրագրողները և լրատվական կազմակերպությունները սխալներ թույլ տալիս են: Դատարանները փոխհատուցում են առաջարկում անհատներին: Զրպարտանքի, անձնական կյանք ներխուժման, վստահության խաթարման, հեղինակային իրավունքի խախտման, հոգեկան տառապանքի համար դատերը միայն մի քանիսն են այն քաղաքացիական գործերից, որոնք կարելի է հարուցել լրատվամիջոցի դեմ:

Սակայն դատավարությունը պահանջում է ժամանակ, ծախս և արդյունքը հաճախ չի բավարարում հայցվորի պահանջներին: Օրինակ, Միացյալ Նահանգներում զրպարտանքի դեպքում սահմանադրական պաշտպանության միջոցներն այնքան ազդեցիկ են, որ որոշ դատավարություններ չեն հասցնում մինչև գործի հիմքում ընկած պնդումների ճշմարտության հաստատում: Ի հակադրություն սրան, իրավական չափորոշիչները, որոնք կիրառվում են զրպարտանքի գործերով հանդես եկող հայցվորների օգտին, 1990-ականներին Միացյալ Թագավորությունը վերածել էին «աշխարհի զրպարտանքի մայրաքաղաքի»: 21-րդ դարի առաջին մի քանի տարիներին էլ բազմաթիվ ազգությունների ներկայացուցիչներ Լոնդոնում դատական գործ էին հարուցում ընդդեմ արտասահմանյան հրապարակումների, որոնք, նրանց պնդմամբ, զրպարտել էին իրենց: Բայց 2010թ. մայիսին նոր ընտրված կոալիցիոն կառավարությունը խոստացավ «վերանայել և բարեփոխել զրպարտանքի վերաբերյալ օրենքները՝ պաշտպանելու խոսքի ազատությունը, նվազեցնելու ծախսերը և կանխելու «թափառող» զրպարտանքը»:

Ազատ արտահայտվելու իրավունքը հաճախ մրցակցության մեջ է մտնում այլ շահերի հետ: Երբեմն ընթերցողներին կամ դիտողներին հուզող լրագրողական զանցանքի համար իրավական փոխհատուցման ձևեր չկան: Դատարանը հաճախ լավագույն վայրը չէ՝ լուծելու հավասարակշռության, արդարացիության և ճշգրտության մասին վեճերը: Միշտ վտանգ կա, որ դատական պաշտպանության կտրուկ ձևերը, նույնիսկ նրանք, որոնք կիրառվում են, երբ հիմքում ընկած գործում առկա է լրագրողական զանցանք, ապագայում կխոչընդոտեն հակասական տեսակետների ազատ և բաց հրապարակումը:

Արժեքավոր այլընտրանք են ինքնակարգավորման մեխանիզմները:

Օմբուդսմեն

Օմբուդսմենները, ովքեր հայտնի են նաև որպես «ընթերցողների ներկայացուցիչներ» կամ «հասարակական խմբագիրներ», հանդես են գալիս որպես լրատվական կազմակերպության աշխատակազմի և հասարակության միջև կապ ապահովող անձինք: Սովորաբար օմբուդսմենը բողոքներ է ընդունում, որոնք վերաբերում են ենթադրյալ էթիկական խախտումներին: Նա աշխատակազմին աջակցում է պատասխանել ընթերցողների հարցերին, նաև բացատրում է՝ ինչու և ինչպես են լրատվական կազմակերպությունները կայացնում իրենց որոշումները: Օմբուդսմենը կարող է գրել մի այունակ կամ պարզապես քննել բողոքները առանձին-առանձին: Թեև օմբուդսմենին սովորաբար վճարում են լրատվական կազմակերպությունները, բայց նա անպայման պետք է լինի ինքնուրույն և անկախ:

Մամլո խորհուրդներ

Մամլո խորհուրդները սովորաբար գործում են որպես տրիբունալներ, որոնք քննում և լուծում են լրատվամիջոցների վարքի վերաբերյալ բողոքները և կարող են հանդես գալ բազմազան ձևերով: Այդ ձևերի մի մասը օրենսդրությամբ են սահմանված: Դրանք ֆինանսավորվում են լրատվական կամ հասարակական կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների կամ միջազգային կառույցների կողմից (օրինակ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի): Դրանց ծախսերը վճարվում են անգամ քաղաքացիների կողմից կատարվող կամավոր հանգանակություններով: Խորհուրդների մի մասը գործում է համալսարաններին առնչնթեր: Մի քանիսը թեև աջակցություն են ստանում կառավարական մարմիններից, սակայն, գործում են անկախ:

Մամուլի խորհուրդները կարող են ունենալ ազգային, շրջանային և տեղական իրավասություն: Դրանց կազմում սովորաբար ընդգրկված են լինում մամուլի և հանրության ներկայացուցիչներ, այդ թվում՝ ակադեմիական ոլորտի, ինչպես նաև կառավարության անդամներ: Նրանք, ովքեր որոշում են իրենց բողոքը մամուլի խորհրդին ներկայացնել, սովորաբար պարտավորվում են հրաժարվել դատական վարույթում գործը շարունակելու իրավունքից:

Խորհրդի անդամները ընտրում և քննում են բողոքները, որոնցից առավել կարևորների վերաբերյալ վճիռ են կայացնում Խորհրդի ընթացակարգերի համաձայն: Առավել տիպային մոդելի դեպքում մինչև տրիբունալը տեղի է ունենում դռնբաց լսում: Թե՛ բողոքողը, թե՛ լրատվական կազմակերպությունն իրավունք ունեն ներկա լինել այդ լսումներին: Դիրքորոշումները ներկայացնելուց, հարցերից և խորհրդակցություններից հետո տրիբունալը վճիռ է կայացնում: Մամլո խորհուրդների մի մասը նոր անդամակցած լրատվական կազմակերպություններից պահանջում է հրապարակել իրենց վերաբերյալ կայացված վճիռները, մյուսների դեպքում՝ հրապարակումը կամավոր է:

Էթիկայի կոդեքսներ

Մի շարք լրագրողական միություններ և բազմաթիվ առանձին լրատվական կազմակերպություններ ընդունել են էթիկայի կոդեքսներ: Դրանք տարբեր են: Կոդեքսների մի մասը պարտավորեցնող է, իսկ դրույթի խախտումը կարող է աշխատանքից հեռացմանը կամ մասնագիտական

լրագրողական հանրույթից արտաքսման պատճառ դառնալ: Էթիկայի կոդեքսների մեծ մասն ուղեցույցներ են, որոնց հետևում են կամավոր հիմունքներով: Դրանք կոչված են օգնել լրագրողներին բարոյական և մասնագիտական տեսանկյունից ողջամիտ որոշումներ կայացնել: Այսպիսով, կոդեքսները նպաստում են ՁԼՄ-ների ավելի բարձր մակարդակի պատասխանատվությանը ընթերցողների և դիտողների առջև:

Կան էթիկայի կոդեքսներ, որոնք ծայրահեղ մանրակրկիտ են: Մյուսներն առաջարկում են ավելի ընդհանրական սկզբունքներ: Լավ օրինակ ԱՄՆ լրագրողների և խմբագիրների ամենամեծ կամավորական ընկերության՝ Պրոֆեսիոնալ լրագրողների միության /ՊԼՄ/ էթիկայի կոդեքսը: Այն ունի չորս հիմնական սկզբունք.

- Փնտրել ճշմարտությունը և հաղորդել այն: Տեղեկատվությունը հավաքելիս, հաղորդելիս և մեկնաբանելիս լրագրողը պետք է լինի ազնիվ, արդար և խիզախ:
- Նվազագույնի հասցնել վնասը: Էթիկայի սկզբունքներով առաջնորդվող լրագրողն աղբյուրներին, սուբյեկտներին և գործընկերներին վերաբերվում է որպես հարգանքի արժանի մարդկային էակների:
- Գործել անկախ: Բացի հանրության՝ տեղեկացված լինելու իրավունքից, լրագրողը պետք է ազատ լինի որևէ այլ շահի նկատմամբ պարտավորությունից:
- Հաշվետու լինել: Լրագրողները հաշվետու են իրենց ընթերցողներին, ունկնդիրներին, դիտողներին և միմյանց:

Իր դրույթներով ՊԼՄ-ի Էթիկայի կոդեքսը վարքագծի ուղեցույց է, որին հետևում են *կամավոր* հիմունքներով: Այն հիշատակում է. «Կոդեքսը կազմվել է ոչ որպես «կանոնների» ժողովածու, այլ որպես էթիկական որոշումներ կայացնելու ուղեցույց: Այն չի կիրառվում և ոչ էլ կարող է կիրառվել որպես օրենք Առաջին փոփոխության ներքո»:

ՊԼՄ-ն ունի Էթիկայի ազգային կոմիտե, որի անդամները ողջ ԱՄՆ տարածքից են և էթիկայի նկատմամբ առանձնակի հետաքրքրություն և փորձառություն ունեն: Թեև կոմիտեն վճիռներ չի կայացնում կոնկրետ բողոքների վերաբերյալ, բայց ուղղորդում ու խորհուրդներ է տալիս լրագրողներին և հասարակության անդամներին:

Պարտավորությունը մամուլը անկախացած յանկարի նպատակ է, բայց մամուլի պարտավորություններ, ինչպես և շատ այլ բարոյական արժեքներ, սահմանված է սահմանադրությամբ. դա հնարավոր է կարգավորել օրենսդրությամբ:.

Գերագույն դատարանի նախագահ Ուորեն Բուրգեր
Միացյալ Նահանգների Գերագույն դատարան
Մայամի Հերալդ փաբլիշինգ ընկերություն ընդդեմ Տորնիլլոյի 418 *ԱՄՆ* 241 (1974թ.)

Լրագրողների պատասխանատվությունը

2009թ. օգոստոսին Ամստերդամում դատարանը վճռեց, որ Ասոշիեյթիդ փրեսը /ԱՓ/ խախտել է Հոլանդիայի թագավորական ընտանիքի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը՝ տարածելով Արգենտինայում անցկացված արձակուրդի ժամանակ նրանց դահուկ քշելու լուսանկարները: Նախագահող դատավորն արգելեց լուսանկարներից չորսի հետագա տարածումը կամ վաճառքը: Նա վճռեց, որ լուսանկարներն արված էին «մասնավոր արձակուրդի» ժամանակ և ներկայացնում էին «մասնավոր գործողություններ»: «Անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը գերիշխում է արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ», — գրեց դատավորը:

Արգենտինայի օրենքի համաձայն՝ լուսանկարելն օրինական էր: Սակայն դատավորը մեջբերեց 2005թ. հաստատված ՁԼՄ կոդեքսը, որը կազմվել էր Թագավորական տան կողմից Նիդերլանդների կառավարության տեղեկատվական ծառայության աջակցությամբ (RVD): Կոդեքսը հոլանդական լրատվամիջոցներից պահանջում էր, պաշտոնական գործառույթների իրականացման ընթացքից կամ «ՁԼՄ-ներին հատկացվող նախանշված պահերից» բացի, մնացած դեպքերում ձեռնպահ մնալ թագավորական ընտանիքի անդամներին լուսանկարելուց: Թեև դատավորն ընդունում էր, որ կոդեքսը «չի կարող համարվել պարտավորեցնող համաձայնագիր», այնուամենայնիվ, նա միջնորդեց ընդունել այն որպես հիմք՝ լուսանկարների հետագա տարածման դեպքում ԱՓ-ին 50.000 եվրո տուգանք սպառնալով:

ԱՓ-ը փաստել էր, որ թագավորական ընտանիքի հասարակական գործողությունները հանրության հետաքրքրության առարկա են՝ կանխատեսելով, որ վճիռն «ամբողջ աշխարհում տեղեկատվության ազատության իրացումն անպատշաճ կերպով սահմանափակող տհաճ ազդեցություն կունենար»: Լրագրողներն առանց սահմանների կազմակերպությունը դատապարտեց թե՛ վճիռը, թե՛ ՁԼՄ-ների վերաբերյալ կոդեքսը՝ պնդելով, որ կոդեքսով սահմանված համակարգը «ՁԼՄ-ների դիրքն իջեցնում է մինչև հասարակայնության հետ կապերի գործակալության»:

Բայց դատավորը եզրակացրեց, որ լուսանկարների հրապարակումը չէր բավարարում որևէ հանրային շահի, և որ այս կոնկրետ դեպքում. «Անձնական կյանքը հարգելու իրավունքը գերիշխում է արտահայտվելու ազատության նկատմամբ»:

Այս պատմությունը ներկայացնում է պատասխանատու լրագրողի վատթարագույն մղձավանջը: Լրագրողական վարքագծի չպարտավորեցնող կոդեքսը դարձավ այն հիմքը, որը խանգարեց միջազգային լրատվական գործակալությանը հրապարակել հասարակական գործիչների օրինական արված լուսանկարները:

Իհարկե, միշտ չէ, որ այսպես է ստացվում: Շատ լրատվական կազմակերպություններ և լրագրողական միություններ կամավոր ընդունում են գործունեության կոդեքսներ և չափորոշիչներ: Սրանք ոչ թե ազատությունը սահմանափակելու հիմք են դառնում, այլ լավագույն ուղենիշ՝ լրագրողի մասնագիտական գործունեությունն իրականացնելու համար: ԱՄՆ-ում գործող Պրոֆեսիոնալ լրագրողների միության էթիկայի կոդեքսի նախաբանի համաձայն. «Մասնագիտական ազնվությունը լրագրողի նկատմամբ վստահության անկյունաքարն է»:

Արդյո՞ք լրագրությունը «մասնագիտություն» է

«Կոդեքս» տերմինը սովորաբար կապված է լրագրության հետ: Բայց թեժ վիճաբանություններ են ընթանում, թե արդյոք լրագրությունը մասնագիտություն է: Շատ երկրներում պատասխանը բացասական է: Ավանդաբար, մասնագիտությունը ֆորմալ որակավորմամբ այն գործունեությունն է, որը պահանջում է մասնագիտացված ուսուցում և արտոնագրում և ենթարկվում է կարգավորող մարմնին: Այդ մարմինն իրավասու է հավաստելու տվյալ գործունեության տեր անձանց որակավորումը և ապահովելու նրանց կարգապահությունը: Ամբողջ աշխարհում իրավաբանները, բժիշկները, հոգևորականները, ճարտարապետները, ինժեներները, ատամնաբույժները, դեղագործները, հաշվապահները համարվում են մասնագետներ:

Լրագրողների նկատմամբ նույնպես երբեմն նմանատիպ պահանջներ են առաջադրվում: Մի շարք երկրներում պահանջվում է, որ լրագրողներն ավարտեն կոնկրետ ուսումնական կամ համալսարանական ծրագիր: Մյուսները պահանջում են անդամակցել իրենց արհեստակցական միավորմանը կամ միությանը, կամ ստիպում են լրագրողներին ունենալ կառավարության կողմից տրված արտոնագիր:

Արտահայտվելու ազատության ջատագովների մեծ մասն ընդդիմանում է պարտադիր հավատարմագրման մեխանիզմներին: Նրանք պնդում են՝ որքան էլ բարի լինեն դրանց հիմքում ընկած մտադրությունները, այդ մեխանիզմներն արգելք են մասնակցության համար և կարող են դուրս թողնել այն անհատներին, ովքեր ներկայացնում են ոչ տարածված կամ փոքրամասնական տեսակետներ: Արտոնագրումը սահմանափակում է արտահայտվելու ազատությունը և խախտում է հանրության՝ տարբեր աղբյուրներից տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Կատարյալ սցենարում այդ դեպքերում լրագրողական էթիկայի կոդեքսը ավելի շուտ ոգեշնչող փաստաթուղթ է և ոչ թե պետության

կողմից օրենքով պարտադրվող գործիք: Առաջին մոտեցումը կարող է թույլ տալ անդամ լրատվական կազմակերպությանը՝ աշխատանքից հեռացնել անհատ լրագրողին, որը խախտում է կոդեքսը: Բայց նույնիսկ այդ դեպքում, ոչինչ չի խանգարի լրագրողին այլ տեղում աշխատանք փնտրել, կամ ոչինչ չի խանգարի ուրիշ կազմակերպության աշխատանքի ընդունել այդ լրագրողին: Ոչ մի դատարան կամ արտոնագրող հանձնաժողով չի կարող վճռել, թե այդ թղթակիցն իրավունք չունի զբաղվել լրագրությամբ:

Էթիկա և չափորոշիչներ. ավելի շատ հարցեր են ծագում, քան պատասխաններ տրվում

Էթիկայի կոդեքսների նպատակը օրենքով նախատեսվող չափորոշիչների պարտադրումը չէ: Փոխարենը դրանք առաջադրում են մի հենք, որը կօգնի լրագրողներին որոշել՝ ինչ և ինչպես լուսաբանել: Էթիկայի ոչ մի կոդեքս չի կարող պատասխան ապահովել բոլոր հարցերին, իսկ լավ կոդեքսները հավանաբար ավելի շատ հարցեր են բարձրացնում, քան պատասխաններ տալիս: Ողջամիտ մարդիկ, նույնիսկ հենց լրագրողները իրենք, կարող են չհամաձայնել կոնկրետ իրադրությունում էթիկայի կոդեքսի կիրառության հետ:

- Օրինակ՝ կարո՞ղ է լրագրողը ծաղրել որոշակի էթնիկ կամ կրոնական խմբի համար սուրբ համարվող անունը կամ պատկերը: Սա օրինական է շատ երկրներում, բայց արդյո՞ք նպաստում է առողջ հասարակական քննարկմանը, թե՞ փոխարենը ատելություն է սերմանում և բախում հրահրում:

Վերևում՝ Անձնական կյանքի գաղտնիության իրավունքն ավելի կարևո՞ր էր, քան մամուլի ազատությունը: Ամստերդամում դատարանը վճռեց, որ ԱՓ-ի լուսանկարիչները խախտել են Հոլանդիայի թագավորական ընտանիքի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը՝ տարածելով Արգենտինայում անցկացրած արձակուրդի նրանց լուսանկարները:

- Կարո՞ղ է մամուլը հրապարակել գաղտնի տեղեկատվություն, հատկապես, եթե կառավարությունը պնդում է, որ այդ հրապարկումը կվնասի հասարակության պաշտպանությանն ուղղված իր ջանքերին: Գաղտնի տեղեկատվությունը հրապարակելն արդյո՞ք հարիր է կառավարության գործունեությունը հսկող անկախ իշխանությանը, թե՞ ավելի բնորոշ է այնպիսի մարմնի, որն ավելորդ վտանգի է ենթարկում հասարակության ապահովությունը և անվտանգությունը:
- Հեռուստակայանը պե՞տք է հեռարձակի ռազմական բախման տեսանյութ, այդ թվում նաև բռնության և մահվան տեսարաններ: Արդյո՞ք դա հասարակությանը կներկայացնի՞ պատերազմի անողոք իրականությունը: Թե՞ փոխարենը այն կխաթարի զոհի ընտանիքի անդամների ներաշխարհը՝ նրանց ավելորդ վիշտ պատճառելով:

Հնարավոր է, ընթերցողներն ու դիտողները չհամաձայնեն լրատվամիջոցի կայացրած բոլոր որոշումների հետ: Բայց էթիկական չափորոշիչները և ուղեցույցները կարող են ուղղորդել դեպի մտածված և արդարացված լուծումներ:

Փնտրել ճշմարտությունը. սկզբունք առաջին

Լրագրողական գործունեությունը կարգավորող կոդեքսների մեծ մասը շեշտում է, որ ճշմարտություն ասելը, այսինքն՝ ճշգրիտ լինելը, էական է: Արհեստավարժ լրագրողների միության էթիկայի

Վերևում՝ 1971թ. *«Նյու Յորք թայմզը»* հրապարակեց *«Պենտագոնյան փաստաթղթերը»*, չնայած կառավարության պնդումներին, թե այդպիսի արարքը կսպառնա ազգային անվտանգությունը: ԱՄՆ Գերագույն դատարանը վճռեց, որ մամուլի ազատության սահմանադրական երաշխիքները գերիշխող են այլ նկատառումների նկատմամբ, և թույլատրեց դրանց հրապարակումը:

հիմնական սկզբունքն է՝ «փնտրել ճշմարտությունը և հաղորդել այն»: Բրիտանացի խմբագիրների գործունեությունը կարգավորող կոդեքսում նույնպես առաջին սկզբունքը ճշգրտության ապահովումն է: Կոդեքսում նշվում է. «Մամուլը պարտավոր է ապահովել, որ հրապարկվող նյութը չպարունակի անճշտություններ, մոլորեցնող կամ աղավաղված տեղեկատվություն: Սա վերաբերում է նաև լուսանկարներին»: Էթիկային վերաբերող համընդհանուր սկզբունքը կարելի է շարադրել հետևյալ կերպ. «Լրագրողը երբեք չպետք է միտումնավոր կերպով կեղծիք հրապարակի»:

Այս սկզբունքին հետևելը միշտ չէ, որ հեշտ է: Իհարկե, լրագրողը պարտավոր է ամեն ջանք գործադրել՝ նախքան պատմությունը հաղորդելը դրա ճշմարտացիության մեջ համոզվելու համար: Բայց փաստերը, որոնց ազդեցությամբ կարող են փոփոխվել նախնական պատկերացումները, հնարավոր է ի հայտ գան հրապարակումից որոշ ժամանակ անց: Նման դեպքերում լուրջ և պատասխանատու լրատվամիջոցը հնարավորինս արագ հրապարակում է արդեն իսկ հաղորդված նյութի մասին ուղղում կամ լրացուցիչ հստակեցնող տեղեկատվություն:

Լրատվական կազմակերպությունները պետք է ամեն ջանք գործադրեն՝ ապահովելու ոչ միայն խորագրերի, հայտարարությունների, սինքրոնների կամ մեջբերումների ճշգրտությունը, այլև ներկայացնեն փաստերը համապատասխան համատեքստում՝ առանց դրանք չափազանց պարզեցնելու: Հնարավոր է, հարկ լինի կտրել լուսանկարները, կամ մոնտաժել ձայնագրությունները և տեսագրությունները՝ տարածության և ժամանակի սահմանափակումների թելադրմամբ, սակայն արդյունքում տեղեկատվությունը չպետք է դառնա մոլորեցնող կամ ներկայացվի աղավաղված: Հարկ է խուսափել լուսանկարելու կամ նկարահանելու նպատակով իրադարձության բեմականացումից կամ վերաբեմադրումից, իսկ եթե դա բացարձակապես անհրաժեշտ է, հարկ է հստակորեն նշել այդ մասին ենթագրերում:

Ակնհայտ է, որ լրագրողները չպետք է հորինեն նորություններ և ոչ էլ զբաղվեն գրագողությամբ՝ արտագրեն կամ կրկնօրինակեն ուրիշի աշխատանքը, առանց սկզբնաղբյուրը նշելու կամ դրան հղում անելու: Նրանք չպետք է հորինեն որպես մեջբերում օգտագործվող հատվածներ կամ վերատպեն մեկ այլ լրագրողի կողմից գրված նորությունների հոդվածը՝ առանց նախօրոք վերատպելու մասին թույլտվություն ստանալու:

Աղբյուրները

Ասում են, որ լրագրողի մասնագիտական որակը որոշվում է նրա աղբյուրներով: Լավ տեղեկացված աղբյուրները մեծացնում են նորություններ հավաքելու լրագրողի ունակությունը և օգնում են նրան ավելի շատ տեղեկատվություն հրապարակել:

Սակայն լրագրողը պետք է զգույշ լինի և համոզվի, որ իր աղբյուրը վստահելի է: Լրագրողը պետք է պարզի աղբյուրի դիրքորոշումը կամ առաջնային մտադրությունը: Կատարյալ դեպքում, լրագրողը պետք է խոսի մի քանի աղբյուրի հետ՝ նույն թեմայի շուրջ տարբեր տեսակետներ լսելու համար և պետք է ամեն ջանք գործադրի տեղեկատվության ճշգրտությունը ստուգելու նպատակով:

Իսկ անանուն աղբյուրնե՞րը կամ

փաստի վերագրումն անանուն աղբյուրին: Նախընտրելի է, որ բոլոր աղբյուրները պատրաստակամորեն բացահայտեն իրենց ինքնությունը, և որ փաստերը չկապվեն «ղեկավարությանը մոտ կանգնած» կամ որևէ այլ, ոչ հստակ ձևակերպմամբ ներկայացվող աղբյուրի հետ: Ավելի հավանական է, որ իրենց խոսքը պաշտպանելու պատրաստ աղբյուրները կասեն ճշմարտությունը: Եթե տեղեկատվությունը վերագրվում է ինքնությունը բացահայտած աղբյուրին, դա օգնում է ընթերցողին կամ դիտողին՝ ինքնուրույն գնահատել վերջինիս վստահելիությունը:

Բայց երբեմն աղբյուրը հիմնավոր պատճառներ է ունենում՝ խնդրելու կամ պահանջելու, որ իր ինքնությունը գաղտնի պահվի: Լրագրողը պետք է խուսափի նման խոստումներ տալ: Սակայն լինում են դեպքեր, երբ ստիպված տեղի է տալիս: Որոշ լրատվական կազմակերպություններ պահանջում են, որ ԶԼՄ-ի խմբագիրը հաստատի գաղտնիության պահպանման վերաբերյալ ցանկացած խոստում: Սա կարող է մասամբ դուր չգալ լրագրողներին, բայց այսպիսի քաղաքականությունը պատճառաբանված է: Երբ հրապարակվում է տեղեկատվություն, որի ստացման աղբյուրը չի բացահայտվում, վտանգվում է լրատվական կազմակերպության, ինչպես նաև անհատ լրագրողի հեղինակությունը:

Լրագրողները պետք է զգուշորեն և հստակ ձևակերպեն իրենց խոստումները: Այնպիսի դարձվածքները, ինչպիսին են «ենթակա չէ հրապարակման» կամ «ընդհանուր գծերով» (ճեպազրույցի բովանդակությունը կհրապարակվի առանց մեջբերումների) տարբեր կերպ կարող են ընկալվել տարբեր անձանց կողմից: Լրագրողը և աղբյուրը պետք է համաձայնության գան լրատվական կազմակերպության կողմից տեղեկատվության օգտագործումը կարգավորող պայմանների շուրջ:

Եթե խոստումը տրվել է, այն պետք է պահել: Ինչպես ասվում է Բրիտանական մասնագիտական գործունեության կոդեքսում. «Լրագրողները բարոյական պարտավորություն ունեն՝ չբացահայտել տեղեկատվության գաղտնի աղբյուրների ինքնությունը»: Կան երկրներ, որոնք չեն ճանաչում լրագրողների՝ այս արդարացված արտոնությունը: Այդ դեպքում լրագրողին կարող են հրավիրել դատարան՝ հաղորդած տեղեկատվության վերաբերյալ վկայություն տալու, և իր խոստումը պահող լրագրողը կարող է վտանգի ենթարկվել՝ մեղադրվելով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մեջ: Յուրաքանչյուր լրագրող պետք է հստակ տեղեկացնի աղբյուրին, թե կոնկրետ որքան հեռու է նա պատրաստ գնալ՝ պահելով տրված խոստումը:

Տեղեկատվության գաղտնի և ծածուկ ձեռքբերման մեթոդները

Լրագրողները պետք է խուսափեն տեղեկատվություն ստանալու այնպիսի գաղտնի եղանակներից, ինչպիսին են թաքնված տեսախցիկների, ձայնագրիչների և միկրոֆոնների օգտագործումը կամ լրագրողի կողմից իրեն կեղծ ինքնության վերագրումը: Որոշ իրավական համակարգերում դրանք անօրինական են համարվում: Բայց նույնքան կարևոր է այն հանգամանքը, որ այս եղանակների կիրառումը կարող է նվազեցնել վստահելիությունը: Ընթերցողները և դիտողները հաճախ չեն հավատում, որ տեղեկատվություն ստանալու

համար ստող լրագրողը պատմությունը լուսաբանելիս կասի ճշմարտությունը: Ընդհանուր առմամբ, լրագրողը պետք է ներկայանա որպես լրատվամիջոցի աշխատակից և ի սկզբանե հստակեցնի, որ հավանաբար նյութի մեջ օգտագործելու է իր բացահայտած տեղեկատվությունը:

Բայց լինում են դեպքեր, երբ տեղեկատվությունը կարելի է ձեռք բերել միայն խորամանկությամբ: Լրագրողները և նրանց լրատվական կազմակերպությունները պետք է այս հնարքներին դիմեն հազվադեպ, երբ չեն աշխատում սովորական մեթոդները, և երբ դա պահանջում է հասարակական գերակա շահը: Այդ դեպքում նյութը հրապարակելիս կամ հեռարձակելիս լրատվամիջոցը պետք է բացատրի կիրառված մեթոդի անհրաժեշտությունը:

Անաչառությունը նորություններում

Միացյալ Նահանգներում լրագրողները ձգտում են անաչառության: Վերջին տարիներին այս մոդելը քննադատվում է: Ոմանք կասկածի տակ են առնում անաչառության անհրաժեշտությունը: Նրանք փաստում են, որ իրականում անաչառությունն, ըստ էության, չունի որևէ բարոյական սահմանափակում, և բոլոր փաստերը և տեսակետները հավասարապես արժանի են հարգանքի:

Պրոֆեսոր Մայքլ Բուգեջան, որն Այովայի նահանգային համալսարանի Լրագրության դպրոցի տնօրենն է, համաձայն չէ դրա հետ: Նա գրում է. «Անաչառությունը ճշմարտության հոմանիշը չէ, այլ մի գործընթաց է, որի միջոցով մենք փորձում ենք հասնել ճշմարտությանը»: Ոչ ոք որևէ պատմության լիարժեք անաչառ չի մոտենում: Երբ լրագրողը սկսում է տեղեկատվության որոնումը, հավանական է, որ նա ունենա կոնկրետ կանխակալ կարծիք պատմության առնվազն մի քանի կողմի վերաբերյալ: Բայց նպատակը այս նախնական ենթադրությունները և նախապաշարումները մի կողմ դնելը և առողջ թերահավատությամբ առաջ շարժվելն է:

Ենթադրենք կասկածյալը ձերբակալվել է և մեղադրվում է հանցանք կատարելու մեջ: Շատ երկրներում մեղադրյալն ունի անմեղության կանխավարկածի իրավունք, քանի դեռ նա չի ենթարկվել դատավարության և չի դատապարտվել: Այնուամենայնիվ, իրավապահ մարմինների աշխատակիցները հաճախ ձգտում են համոզել հասարակությանը, որ իրականում հենց ձերբակալված անձն է հանցագործը: Նրանք խրախուսում են լրատվամիջոցների կողմից այնպիսի տեղեկատվության հրապարակումը, որը տվյալ գործում սատարում է իրավապահների դիրքորոշումը: Անկողմնակալ լրագրողն, իհարկե, կհաղորդի այն, ինչ ասում են պաշտոնյաները: Բայց օրենքի սահմաններում նա պետք է ինքնուրույն փորձի ստուգել ստացված տեղեկատվության ճշմարտացիությունը, փորձի այլ հավաստի աղբյուրներից ստանալ վստահելի, սակայն պաշտոնական վարկածին հակասող տեղեկատվություն: Նա պետք է ձգտի պարզապես մեխանիկորեն չկրկնել պաշտոնյաների ասածները, ասես դրանք ապացուցված փաստեր լինեն:

Տեսակետների բազմազանության խրախուսումը

Շատ երկրներում նախապաշարված մամուլ ունենալն ընդունված չափանիշ է: Այս երկրներում ընթերցողները և դիտողները կարող են ակնկալել, որ լրատվամիջոցը նյութին կմոտենա սեփական յուրահատուկ տեսանկյունից և դրան

համապատասխան կընտրի լուսաբանման թեմաները: Նրանք նաև գիտեն, որ մրցակից լրատվամիջոցները կարող են հարել տարբեր տեսակետների: Դա կարող է համահունչ լինել լրագրողական էթիկային, բայց միայն այն դեպքում, երբ լրատվամիջոցը տարբերակում է որևէ գաղափարի սատարումը լուսաբանումից: Կարծիք պարունակող հոդվածների այունակները և խմբագրական վերլուծությունները պետք է հստակ առանձնացվեն և կրեն համապատասխան նշում իրենց բնույթի վերաբերյալ: Դրանք չպետք է աղավաղեն կամ կեղծեն փաստերը, որոնք ընկած են կարծիքի հիմքում:

Լրագրողները կարող են բացահայտել և թույլ տալ տարբեր տեսակետների մրցակցություն: Նրանք նույնիսկ ժողովրդականություն չվայելող տեսակետները պետք է լսելի դարձնեն: Նրանք պետք է աջակցեն բոլորի համար խոսքի ազատության հավասար իրացմանը: Լրատվական կազմակերպությունները պետք է դառնան այնպիսի հարթակներ, որոնցում առողջ բանավեճ է ընթանում համայնքի համար կենսական կարևորություն ունեցող խնդիրների շուրջ: Խմբագիրներին հասցեագրված նամակները և ընթերցողների առցանց մեկնաբանություններն այն երկու ձևերն են, որոնք միտված են ապահովել հանրային մասնակցությունը: Բայց լրատվամիջոցը նույնպես ամեն ջանք պետք է գործադրի քննարկումը քաղաքակիրթ վարելու, կեղծիքների կամ նվաստացնող հարձակումների տարածումը չխրախուսելու նպատակով:

Հարգանք անհատի նկատմամբ

Արհեստավարժ լրագրողների միության էթիկայի կոդեքսի երկրորդ սկզբունքն է. «Նվազագույնի հասցնել վնասը ... Աղբյուրներին, ենթականերին և գործընկերներին վերաբերվել որպես հարգանքի արժանի մարդկային էակների»: Այս սկզբունքն ընդունում է, որ պատասխանատու լրագրողը երբեմն և անխուսափելիորեն կվնասի մեկին, բայց միևնույն ժամանակ պահանջում է, որ նա ամեն ջանք գործադրի՝ նվազագույնի հասցնելու այդ վնասը: Արհեստավարժ լրագրողների միության կոդեքսը, ինչպես նմանատիպ բազմաթիվ այլ կոդեքսներ, կոչ է անում լրագրողներին կարեկցանքով վերաբերվել այն անձանց, ում վրա տվյալ նորության լուսաբանումը բացասական ազդեցություն կունենա, հատկապես, եթե այդ մարդիկ ուշադրության առարկա են դառնալու ոչ իրենց մեղքով:

Հանցագործությունների զոհերին, հասարակական գործիչների և հայտնի անձանց բարեկամներին, երեխաներին և այլ խոցելի անհատներին պետք է նրբազգացությամբ վերաբերվել: Լրագրողները պետք է մանրամասն քննեն, արդյո՞ք տվյալ նյութի մեջ նրանց ընդգրկելն իսկապես նորության արժեք ունի:

Պնդերեսությամբ նորություններ հավաքելը կարող է վնասել: Համառությունը տեղին է, բայց ագրեսիվ մարտավարությունը միշտ չէ, որ արդարացված է: Այդ եղանակները կարող են օրինական լինել, բայց կրկնվող հեռախոսազանգերը, մարդուն փողոցում հետևելը, բազմաթիվ լուսանկարներ անելը կամ հեռանալու պահանջից հետո մասնավոր սեփականության սահմաններից չհեռանալը կարող են աղետալի լինել: Նույնիսկ խիստ հայտնի հասարակական գործիչն իրավունք ունի անձնական կյանքի

գաղտնիության որոշ չափաբաժնի, և անհատների անձնական կյանք ներխուժումն արդարացված է միայն գերիշխող հանրային շահի դեպքում:

Մյուս կողմից, կարող են լինել հիմնավոր և արդարացի պատճառներ՝ հրապարակելու այնպիսի տեղեկատվություն, որը նորությունների սուբյեկտ հանդիսացող անձը կգերադասեր գաղտնի պահել: Պետական պաշտոնյան կարող է ցանկանալ գաղտնի պահել արտաամուսնական սիրային կապի մանրամասները: Բայց, եթե սիրային կապը ֆինանսավորվում է, ասենք, հանրային ֆոնդերի հաշվին, ապա անձնական կյանքի այդ մանրամասնը դառնում է արդարացված հանրային հետաքրքրության թեմա: Հանցագործությունների զոհերը նույնպես հաճախ նախընտրում են, որ իրենց ինքնությունը գաղտնի մնա, ինչի հետ լրատվական կազմակերպությունը հավանաբար կհամաձայնի՝ առնվազն երեխաների կամ սեռական ոտնձգության ենթարկված զոհերի պարագայում: Բայց շատ երկրներում հանցանքի զոհ դարձած անձը քրեական դատավարության ժամանակ հանդես է գալիս որպես մեղադրող կողմ: Թեև ենթադրյալ զոհի արժանահավատությունը կարող է լուրջ քննարկման հարց լինել, ինչը նաև որոշ կարևորություն է ներկայացնում քրեական դատավարությունում մեղադրյալի համար, բայց լրագրողները չպետք է փորձեն գոհացնել հեշտասերների ճաշակը՝ հրապարակելով սենսացիոն փաստեր, որոնք, սակայն, հասարակական հետաքրքրություն չեն ներկայացնում: Լրատվամիջոցը պետք է հավասարակշռի թե՛ զոհերի, թե՛ քրեական գործով մեղադրյալների իրավունքներն ու շահերը հասարակության տեղեկացված լինելու իրավունքի հետ:

Մշակութային նրբազգացություն

Լրագրողը չպետք է ամրապնդի կարծրատիպերը: Այսպիսի գործունեությունը մտավոր ծուլության արդյունք է և կարող է հանգեցնել սխալ ընկալումների, անճշգրտության: Նա պետք է երկար ծանրութեթև անի՝ արդյո՞ք անհրաժեշտ է անհատին նույնականացնել ռասայի, կրոնի, սեռական կողմնորոշման կամ այլ նմանատիպ բնութագրիչների հետ: Հաճախ տեղին է օգտագործել գենդերային տարբերությունները համահարթեցնող չեզոք լեզվական միջոցներ:

Լրագրողը պետք է նրբազգաց վերաբերմունք դրսևորի տարբեր մշակութային ավանդույթների նկատմամբ: Օրինակ, կան դավանանքի ներկայացուցիչներ, որ արգելում կամ խիստ դեմ են անհատներին լուսանկարելուն: Լրագրողը պետք է հարգի այս անձանց նախընտրությունները, եթե չկա այլ կերպ վարվելու որևէ ծանրակշիռ պատճառ:

Մյուս կողմից, «մշակութային արժեքները» երբեմն քողարկում են գրաքննությունը: Ռեպրեսիվ ռեժիմները կարող են մեջբերել հասարակական արժեքները, երբ նրանց իրական մտադրությունը արտահայտվելու ազատությունը սահմանափակելը և տեսակետները լռեցնելն է: Էթիկայի սկզբունքներով առաջնորդվող լրագրողը պետք է մարտահրավեր նետի ճշմարտությունը ճնշելու փորձերին, ինչ արդարացում էլ չբերվի:

Անկախ լրագրողը

Լրագրողները պետք է առավելագույնս հավատարիմ լինեն հասարակության շահերի պաշտպանությանը: Սա նշանակում է խուսափել շահերի այնպիսի բախումից, որը կարող է նվազեցնել լրագրողի՝ այլ ազդեցություններից և

նկատառումներից զերծ, անկախ գործելու և հասարակությանը տեղեկացնելու հնարավորությունը:

Լրագրողները պետք է խուսափեն նորությունների աղբյուրներից նվերներ, վճարներ, տոմսեր, ճամփորդության ծախսեր և այլ ապրանքներ կամ ծառայություններ ընդունել: Գրքերի, երաժշտության կամ ֆիլմերի գրախոսականների համար տրամադրված օրինակները պետք է որպես նվիրատվություն փոխանցվեն բարեգործական կազմակերպությունների կամ այլ հաստատությունների նույն բարեգործական նպատակներով, եթե չկա դրանք ապագայում որպես լրագրողական գործունեության համար անհրաժեշտ միջոց օգտագործելու ակնհայտ պատճառ: Զգուշացեք, եթե վճարված են ձեր հաճելի ժամանցի ճամփորդության ծախսերը, որովհետև դա մի փոքր ավելին է, քան վատ քողարկված փորձը՝ լրագրողներին համոզելու ոգևորությամբ գրել ինչ-որ հանգստյան վայրի կամ թեմայի մասին: Եթե լրատվական կազմակերպությունն իր աշխատակցին ուղարկում է սպորտային կամ մշակութային իրադարձություն լուսաբանելու, ուրեմն ինքն էլ պետք է հոգա ծախսերը: Եթե դա հնարավոր չէ, նյութում պետք է պատասխանատվությունից ազատող հայտարարություն ներառվի:

Լրագրողը չպետք է փոխհատուցման դիմաց ապրանք գովազդի: Պետք է առանձնացված լինեն լրատվական բիզնեսի խմբագրական և գովազդային կողմերը: Գովազդատուները չպետք է դրդեն լրագրողներին դրականորեն լուսաբանել ինչ-որ բան կամ ճնշեն լրագրողների բացասական մեկնաբանությունները: Ցանկացած գովազդ պետք է հստակ նշում կրի նյութի գովազդային բնույթի մասին՝ բացառելու գովազդը նորությունների հաղորդման կամ մեկնաբանության հետ շփոթելու որևէ հնարավորություն:

Լրագրողը կարող է շահերի բախման խնդիր ունենալ, եթե անդամակցի ակումբների, ասոցիացիաների, քաղաքական կուսակցությունների կամ կրոնական կազմակերպությունների: Կան լրատվական կազմակերպություններ, որոնք արգելում են զբաղվել քաղաքական կամ մարդասիրական գործունեության որոշ տեսակներով: Օրինակ՝ չի կարելի մասնակցել քաղաքական պաշտոնի համար ընտրությունների, կամ ինչ-որ խնդրի աջակցության խմբում կամավորական աշխատանքի: Լրատվամիջոցների մեծ մասը լրագրողին արգելում է լուսաբանել այնպիսի կազմակերպության գործունեությունը, որին անդամակցում կամ ինչ-որ առնչություն ունեն լրագրողի ընտանիքի անդամները: *«Վաշինգտոն Փոստի»* խմբագիրը նույնիսկ ձեռնպահ մնաց ընտրությունների ժամանակ քվեարկելուց, չնայած ակնհայտ է, որ մարդիկ չեն հրաժարվում իրենց քաղաքացիական իրավունքներից, երբ որոշում են լրագրող դառնալ: Սակայն կարևոր է հիշել, որ ինչ-որ կազմակերպության հետ կապը կամ անդամակցությունը կարող է մեկնաբանվել որպես կանխակալ կարծիք: Եթե շահերի բախումը անխուսափելի է, այդ մասին հարկ է բացեիբաց հայտարարել:

Բազմաթիվ լրատվական կազմակերպություններ հատուկ կանոններ ունեն գործարար կամ ֆինանսական թեմաներ լուսաբանող լրագրողների և մեկնաբանների համար: Կարող են կիրառվել մի շարք օրենքներ, որոնք արգելում են ստացված գաղտնի տեղեկատվությունն օգտագործել որևէ գործարք անելու

համար (բաժնետոմսեր կամ արժեթղթեր գնել կամ վաճառել, երբ կա չհրապարակվող տեղեկություն, որը հավանաբար կազդի բաժնետոմսերի գնի վրա): Լրագրողները չպետք է գրեն այնպիսի ընկերությունների մասին, որոնցում ունեն բաժնետոմսեր կամ որևէ այլ ֆինանսական շահ, հատկապես, եթե նրանց լուսաբանումը կարող է ազդել շուկայի վրա, կամ դրանից նրանք կարող են անձնական օգուտ ունենալ: Լրագրողները պետք է մբագիրներին տեղեկացնեն իրենց կամ ընտանիքի անդամներին պատկանող ֆինանսական գործիքների մասին: Բաժնետոմսերի թեմայով գրելուց հետո նրանք որոշ ժամանակ պետք է ձեռնպահ մնան դրանք վաճառելուց կամ գնելուց:

Լրագրողը չպետք է ընդունի նորության լուսաբանման վրա ազդելու նպատակ հետապնդող վճար, մյուս կողմից՝ ինքը չպետք է կաշառք կամ վճար առաջարկի նորության սուբյեկտին: Կողմնակի դիտորդի համար «գնված նորությունը, որի դիմաց վճարվել է», կասկածելի է: Որոշ իրադրություններում, երբ աղբյուրին խնդրում են ուղևորվել որևէ կոնկրետ վայր հեռուստատեսությամբ կամ ռադիոյով հանդես գալու համար, տեղին կլինի փոխհատուցել նրա սննդի, ճամփորդության, կեցության արդարացված ծախսերը: Բայց պետք է խուսափել «վճարովի լրագրությունից» և նորությունների համար գին առաջարկելուց:

Էթիկական խնդիրներ՝ կառավարության գործունեությունը լուսաբանելիս

Կառավարությանը վերաբերող խնդիրների լուսաբանումը մի շարք լուրջ մարտահրավերներ ունի: Հասարակությունն ընդհանուր առմամբ ընկալում է լրագրողներին որպես հսկիչների, որոնք հետևում են կառավարությանը և խոսում նրա ոչ պատշաճ վարքագծի դեմ: Իսկ ի՞նչ անել, երբ, օրինակ, իրավապահ պաշտոնյան խնդրում է լրագրողին չհաղորդել այնպիսի դեպքի մանրամասներ, որում պատանդներ կան: Լրագրողները պե՞տք է համագործակցեն այդ դեպքում: Եթե նրանք չհամագործակցեն, կարող են վտանգի ենթարկել ուրիշների կյանքը: Բայց, եթե համագործակցեն, նրանք կարող են նվազեցնել կառավարությանը հաշվետու պահելու իրենց հնարավորությունը:

Պատերազմի, ճգնաժամի կամ արտակարգ իրավիճակի ժամանակ լրագրողները կարող են զգալ իրենց ներքին հակադրությունը: Հայրենասեր լինելու ցանկությունը կարող է խիստ ազդեցիկ լինել: Կամ նոր ընտրված կառավարությունը կարող է հայտարարել, որ չի կարող թույլ տալ այնպիսի ճոխություն, ինչպիսին լիովին ազատ մամուլն է, և հորդորի լրագրողներին գրել ի շահ կառավարության՝ որպես փխրուն և նոր զարգացող ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված լրացուցիչ աջակցություն: Երբեմն, լրագրողներին խնդրում են քարոզչությունը ներկայացնել որպես ճշմարտություն՝ պաշտպանելու համար «ազգային անվտանգությունը»:

Երբ խմբագրության որոշումները չեն համապատասխանում կառավարության ցանկություններին, լրատվական կազմակերպությանը կարող են քննադատել՝ մեղադրելով պաշտոնյաների դատողությունների փոխարեն սեփական կարծիքը հրապարակելու մեջ: Այսպիսի իրավիճակ կարող է ծագել, երբ կառավարությունը պնդի, որ հետախուզական և օրենքի կիրառման տեղեկատվության խիստ գաղտնիության անհրաժեշտություն

կա: Մյուս կողմից, լրագրողներին կարող են նաև մեղադրել տեղեկատվությունը պահելու և չհրապարակելու կամ հրապարակումը դիտավորյալ ուշացնելու մեջ:

Բարդ է կատարել այս պահանջները: Լուծումներն էլ հեշտ չեն: Լրագրողին ուղղորդող հիմնական սկզբունքը պետք է լինի պաշտպանել ոչ թե կոնկրետ կառավարության կամ ռեժիմի, այլ հասարակության շահերը: Ոչ մի լրագրող չի ցանկանում վնասել իր համայնքը կամ երկիրը: Բայց կառավարությունը կարող է չդիմանալ քննադատական լրագրությունը ճնշելու գայթակղությանը՝ պատճառաբանելով, որ այն կարող է վտանգել հանրության ապահովությունը կամ ազգային անվտանգությունը: Լրագրողները կարող են հարգել այդ պնդումը, սակայն, միևնույն ժամանակ նրանք պարտավոր են կասկածել: Լրագրողները պետք է հնարավորություն տան պետական պաշտոնյաներին բացատրելու, թե ինչպես կարող է կոնկրետ նյութը մարդկային կյանքը կամ կոնկրետ ազգային շահը վտանգի ենթարկել: Լրագրողները պետք է ուշադիր հետևեն իշխանավորներին և նրանց ստիպեն հաշվետու լինել: Երբեմն, լրագրողի ամենահայրենասիրական արարքը իշխանություններին կասկածելն է:

Հաշվետու լինել հասարակության առջև

Հասարակության առջև իշխանավորին հաշվետու դարձնելը լրագրողի աշխատանքի կարևոր մասն է: Էթիկայի տեսանկյունից լրատվական կազմակերպությունները նույնպես ունեն հաշվետու լինելու նմանօրինակ պարտավորություն:

Լրատվամիջոցները ավելի թափանցիկ են, քան շատ բիզնեսներ, որովհետև նրանց աշխատանքի արդյունքը մշտապես բաց է: Լրագրողներն անընդհատ քննադատում են միմյանց աշխատանքը և մարտահրավեր են նետում իրար: Բազմաթիվ երկրներում սպառողը հնարավորություն ունի ընտրել, թե գործող լրատվամիջոցներից որի լուսաբանումն է իր համար ընդունելի: Նա կարող է հրաժարվել այն ԶԼՄ-ներից, որոնց չափորոշիչներն իր համար ցածր են:

Այսպիսով, լրատվամիջոցը կարող է ավելին անել՝ հանրությանը հասանելի դառնալու նպատակով: Եթե բիզնես կամ գործարար անդամակցությունն ու կապերը կարող են ազդել ԶԼՄ-ների խմբագրական որոշումների վրա, ապա այդ մասին հարկ է բացահայտ ասել: Թերթում մեծածավալ գովազդ տեղադրած առևտրական գործարարն, օրինակ, խնդրում է իր գործունեության նպաստավոր լուսաբանում: Լրատվամիջոցը նրան պետք է բացատրի, թե ինչպես են կայացվում խմբագրական որոշումները, հատկապես հակասական թեմաների շուրջ: Հարկ է ներկայացնել նաև էթիկայի ընդունված չափորոշիչներից արվող շեղումները: Լրատվական կազմակերպությունը պետք է խրախուսի ընթերցողներին հանդես գալ մեկնաբանություններով և բարձրաձայնել իրենց մտահոգությունները և բողոքները: Կատարյալ դեպքում խմբագրության նվիրյալ և անկողմնակալ աշխատակիցները պետք է զբաղվեն այդ բողոքներով:

Բոլոր լրատվամիջոցներն էլ սխալներ թույլ են տալիս: Սակայն նրանք պետք է ձգտեն դրանք հասցնել նվազագույնի՝ փաստերի ստուգման խմբագրական ընթացակարգերի շնորհիվ: Եթե

սխալներն արդեն իսկ թույլ են տրված, հարկ է դրանք անմիջապես ընդունել և ուղղել՝ հերքում կամ ուղղում տպագրելով լավ տեսանելի տեղում:

Նոր մեդիաների և քաղաքացիական լրագրության պատճառով առաջացած առանձնակի էթիկական խնդիրները

Ավանդական ԶԼՄ-ների եթե ոչ բոլոր, ապա մեծ մասի էթիկայի ուղեցույցները կիրառելի են նաև քաղաքացիական լրագրությամբ զբաղվող բլոգերների և այլ անձանց նկատմամբ: Բայց նրանք, ովքեր նյութեր են հրապարակում կիբերտարածությունում, հանդիպում են նաև լրացուցիչ դժվարությունների:

Ի տարբերություն ավանդական ԶԼՄ-ներում աշխատող լրագրողների, բլոգերները հաճախ անանուն են հրապարակում իրենց նյութերը կամ կեղծանուն են օգտագործում: Որոշ հասարակություններում նրանք, ովքեր ունեն հակասական կամ այլախոհական տեսակետներ, չեն բացահայտում իրենց ինքնությունը՝ սեփական անվտանգության նկատառումներից ելնելով: Բայց նրանք, ովքեր անանուն են հանդես գալիս, միևնույն է, ունեն էթիկական պարտավորություն՝ լինել ճշմարտախոս, ճշգրիտ և հնարավորինս թափանցիկ շահերի բախման առումով:

Բազմաթիվ բլոգերներ խրախուսում են ընթերցողների ներգրավումը քննարկումներում և իրենց կայքերը համալրում են մեկնաբանություններ թողնելու հնարավորություն տվող գործիքներով: Նրանք իրենց բլոգներում կարող են թույլ տալ հրապարակել և տեղադրել օգտվողների ստեղծած բովանդակությունը: Բլոգերները կարող են հղումներ անել արտաքին կայքերի: Եվ կարող են ընտրել այլոց գործերից հատվածներ՝ մեկնաբանելով և քննադատելով դրանք:

Բոլոր այս հնարքներն ավելացնում են բլոգի կենսունակությունը: Սակայն բլոգերները պետք է հաշվի առնեն, որ անհրաժեշտ է հաստատել հղումների իսկությունը և արժանահավատությունը, տեղադրել կամ հանել ուրիշների գրառումները, ինչպես նաև մշակել կայքի քաղաքականությունը՝ կոնկրետ տիպի բովանդակության տեղադրման վերաբերյալ, ասենք՝ ակնհայտ սեռական բովանդակությամբ

Վերևում՝ Սոցիալական մեդիան նոր հարցեր է բարձրացնում լրագրողների համար: Ֆեյսբուքի գլխավոր գործադիր տնօրեն Մարկ Յուկերբերգը 2010թ. ապրիլի 21-ին Սան Ֆրանցիսկոյում հանդես է գալիս բացման խոսքով՝ համացանցին նվիրված գիտաժողովի ժամանակ:

տեսանյութերի և անձական վիրավորանքի: Ճիշտ կլինի այդ քաղաքականությունը բոլորի համար տեսանելի դարձնել՝ հրապարակելով կայքում, և ապա հետևողականորեն կիրառել այն:

Սոցիալական մեդիայի օգտագործումը

Բազմաթիվ լրագրողներ, որոնք աշխատում են թե՛ ավանդական, թե՛ նոր ԶԼՄ-ներում, սկսում են լայնորեն կիրառել այնպիսի սոցիալական մեդիաներ, ինչպիսին են Ֆեյսբուքը (Facebook), Օրկուտը (Orkut)-ը, Մայսփեյսը (MySpace)-ը կամ մուտք են գործում Յություբ (YouTube) կամ այլ կայքեր, որոնք հնարավորություն են տալիս օգտվողներին գրառումներ տեղադրել: Այս միջոցները կարող են պատմությունների գաղափարներ հուշել և օգտակար օրինակներ տալ լրագրողներին: Դրանք կարող են նույնիսկ հնարավորություն տալ լրագրողին շփվել համայնքի հետ կամ առաջ մղել լրագրողական «ապրանքանիշը»՝ ընթերցողներին խրախուսելով այցելել լրատվական կազմակերպության կայք:

Բայց սոցիալական մեդիան նոր էթիկական մարտահրավերներ է նետում լրագրողներին: Կարող է դժվարանալ տեղադրված նյութի ճշգրտության ստուգումը: Եթե իր հոդվածի կամ այուժեի հիմքում լրագրողը դնում է սոցիալական մեդիա կայքերից քաղած տեղեկատվություն, ուրեմն պետք է հստակ նշի դա: Նա պետք է հատկապես զգույշ լինի, երբ նյութում օգտագործում է անչափահասի մասին այնպիսի տեղեկատվություն, որը կարող է վնասել վերջինիս հեղինակությանը: Մեծ ուշադրություն է պահանջում նաև ենթադրաբար ինչ-որ մեկին պատկանող տեղեկատվության, ասենք՝ առևտրային գաղտնիքի օգտագործումը: Զրպարտանքի, անձնական կյանքի գաղտնիության և հեղինակային իրավունքի մասին օրենքները դեռևս կիրառվում են նաև կիբերտարածությունում:

Որոշ լրատվական կազմակերպություններ էթիկական քաղաքականություն են ընդունել, որին հետևում են իրենց աշխատակիցները սոցիալական մեդիայում: Դոու Ջոնսը՝ *«Ուոլ սթրիթ ջորնալի»* հրատարակիչը, չի խրախուսում իր լրագրողների կողմից ֆեյսբուքյան անձնական էջերում անհատական կարծիք կամ ինչ-որ մեկի օգտին տեսակետ հնչեցնելը, կամ այնպիսի հոդվածների քննարկումը, որոնք մշակման փուլում են և դեռ չեն տպագրվել թերթում: Որոշ կազմակերպություններ խորհուրդ են տալիս, որ լրագրողներն ունենան առանձին ֆեյսբուքյան էջեր՝ մեկն՝ անձնական, մյուսը՝ մասնագիտական: Լրագրողները պետք է հիշեն, որ ֆեյսբուքում գաղտնի աղբյուրին ընկերների ցանկում ներգրավելը կարող է բացահայտել աղբյուրի ինքնությունը: Նրանք նաև պետք է հիշեն, որ իրենց կողմից ինչ-որ մեկի ընկերների ցանկում ներգրավվելը կամ երկրպագուների էջում գրանցվելը կարող է մեկնաբանվել որպես կողմնակալ վերաբերմունք:

Ի վերջո, Ֆեյսբուքում կամ նմանատիպ այլ կայքերում դրված տեղեկատվությունն այլևս խիստ *անձնական* չի կարող լինել: Հենց ինչ-որ բան հայտնվում է սոցիալական ցանցում, անհնարին է այն հետ վերադարձնել կամ խանգարել ուրիշներին օգտագործել դա իրենց հայեցողությամբ:

Եզրակացություն

Բազմաթիվ լրագրողներ կարծում են, որ պարտավոր չեն

իրականացնել կառավարության գործունեությունը հսկելու և հանրության համար կարևոր տեղեկատվություն հաղորդելու իրենց դերը: Նրանք համարում են, որ արտահայտվելու ազատության՝ որպես հիմնարար իրավունքի արդի ընկալումն արդեն կարգավորել է այդ հարաբերությունները: Ահա, թե ինչու որոշ լրագրողներ կարծում են, որ իրենք ունեն սխալվելու օրինական իրավունք... Երբեմն սխալվելու...

Սակայն հենց լրագրողների կողմից կիրառվող էթիկական չափորոշիչները կարող են լինել ավելի խիստ, քան իրավական չափորոշիչները: Իրավական չափորոշիչները ստիպում են լրագրողներին քննել իրենց շահագրգռվածությունը, մեթոդները, աշխատանքի արդյունքը: Դրանք դրդում են են լրագրողներին և խմբագիրներին լրջորեն մտածել իրենց որոշումներ կայացնելու գործընթացի մասին: Իսկ էթիկական սկզբունքները պարտադրում են լրագրողներին հաշվի առնել նաև այլ հնարավոր տեսանկյուններ և մտածել, թե ինչպես լրագրողական որոշումները կարող են ազդել մարդկանց վրա:

Էթիկական սկզբունքների ընդունումը և կիրառումը կարող է բարդություն թվալ: Բայց դրանք օգնում են լրագրողներին հնարավորինս լավ կատարել իրենց աշխատանքը: Նրանք տալիս են անկախ, նույնիսկ խիզախորեն գործելու մանդատ՝ ճշմարտությունը որոնելիս և այն վերհանելիս:

«Քողոր պաշտպանում են ապակի խոսքը: Գրեթե ոչ մի օր չի անցնում առանց ապակի խոսքի գոմաբանման, սակայն, ոմանք խոսքի ապակությունը հեգնելով կերպ են ընկալում. իրենք ապակի են ասել ինչ չանկանան, բայց եթե ինչ-որ մեկն ի պատասխան մի այլ բան է ասում՝ դա արդեն օրինախախտում է»:

Վինսթոն Չերչիլ
Մեծ Բրիտանիայի վարչապետ
Երկրորդ Համաշխարհային պատերազմ, 1943թ.

Նոր մեդիա, քաղաքացիական լրագրողներ և բլոգերներ

Բլոգոսֆերայի ազատ աշխարհը կարծես իսկապես ազատ խոսքի վերջին ամրոցը լինի: Պարտադիր չէ, որ մարդ ունենա շատ փող, թանկ տպագրող մեքենա կամ հաղորդիչ աշտարակ: Ցանկացած ոք, ով ունի համակարգիչ, մոդեմ և ոչ շատ բարդ համակարգչային ծրագիր, կարող է կիսել իր մտքերը աշխարհի հետ՝ բլոգի միջոցով: Ավանդական, երբեմն տաղտկալի թվացող, աղբյուրների վրա հիմնվող և փաստերը ստուգող լրագրության աշխարհից տարբերվող և համացանցի միջոցով տարածվող խիստ անձնական և կարծիքի խտացված տարրեր պարունակող բլոգները մի այլ աշխարհ են: Բլոգերները հենց իրենք են օրենքը: Բայց արդյո՞ք իրականում այդպես է:

Ազատ խոսքի և համացանցի մրցակցային շահերի հավասարակշռումը

Հասարակության կողմից համացանցի օգտագործման առաջին իսկ օրերից բոլորը միաբերան գոչում էին, որ կիբերտարածությունը նոր սահման է, որը ենթակա չէ ոչ մի օրենքի: Բայց աշխարհի բոլոր երկրների կառավարությունները, ցնցված հաղորդակցական նոր տեխնոլոգիաներով, փորձում են պարզել, թե ինչպես կարելի է այն սանձել և վերահսկել նրա գործածությունը:

Համացանցի անհասանելիությունը կարող է լինել առաջին արգելքը: Օփեննեթ ինիշըթիվ համացանցային հսկիչ խմբի 2007թ. զեկույցը ցույց տվեց, որ համացանցը գրաքննության ենթարկելու փորձերը տարածվում են երկրից երկիր և շարունակում են կատարելագործվել: Օրինակ՝ Սաուդյան Արաբիան կիրառում է ֆիլտրող ծրագիր՝ արգելափակելու ողջ տեղեկատվությունը, որը ներառված է «պոռնոգրաֆիա» - «խաղամոլային» որակվող, կրոնափոխության դրդող և Սաուդյան միապետությունը քննադատող կայքերում: Չինաստանին քննադատում են համացանցի վերահսկողության մի շարք գործիքների համալիր կիրառման համար: Չինաստանն օգտագործում է ոչ միայն ֆիլտրող ծրագրեր, այլև պահանջում է օգտվողների և ինտերնետ սրճարանների արտոնագրում:

Միացյալ Նահանգներում Կոնգրեսը, պետական օրենսդիր մարմինները և դատարանները պայքարում են՝ հավասարակշռելու

համացանցում առկա խոսքի ազատությունը՝ ընդդեմ այնպիսի մրցակից շահերի, ինչպիսին են ազգային անվտանգությունը, հեղինակային իրավունքի պաշտպանությունը և բարի համբավի իրավունքը: Իր շրջադարձային՝ *Ռենոն ընդդեմ ԱՔԱՄ* (Ամերիկյան քաղաքացիական ազատությունների միության) որոշմամբ (1997թ.) ԱՄՆ Գերագույն դատարանն ընդլայնեց և համացանցային հաղորդակցությունների վրա կիրառեց Առաջին փոփոխությամբ սահմանված նույն մակարդակի պաշտպանություն, ինչ ունեն թերթերը և այլ տպագիր միջոցները: Դատարանը վճռեց, որ կիբերտարածությունն «արտահայտման դեֆիցիտ միջոց» չէ, ինչպես օրինակ՝ ռադիո և հեռուստատեսային հաճախություններն են: Ոչ էլ այն զավթող մեկն է, որ «առանց հարցուփորձի տուն է մտնում և հայտնվում համակարգչային էկրանին»: Քանի որ կառավարության կողմից կիրառվող արտոնագրման և վերահսկողության միջոցների համար անհրաժեշտ այս պատմական արդարացումներից ոչ մեկը կիրառելի չէին, դատավոր Ջոն Փոլ Ստիվենսը գրեց մեծամասնության անունից. «Ժողովրդավարական հասարակությունում արտահայտվելու ազատությունը խրախուսելու շահը գերիշխող է գրաքննության ցանկացած տեսական, սակայն չապացուցված, օգուտի նկատմամբ»:

Ռենոյի գործով վճիռը նշանակում է, որ համացանցային հաղորդակցությունը ստանում է սահմանադրական պաշտպանության բարձրագույն մակարդակ՝ ներառյալ այն բազմաթիվ դատական վճիռները, որոնք որոշում են Առաջին փոփոխության իրավասության շրջանակները: Նախնական արգելքները համարվում են հակասահմանադրական: Որպեսզի զրպարտանքի մասին գործը հաջող ելք ունենա, անհրաժեշտ է ապացուցել հրապարակողի մեղավորությունը, նույնիսկ եթե հայցվորը կարողանում է ապացուցել կասկածի տակ առնվող հայտարարության կեղծ բնույթը: Անձնական կյանք ներխուժման վերաբերյալ հայցերի մեծ մասը կմերժվեն, եթե հրապարակողը կարողանա ապացուցել, որ այդ նյութի թեման արժեքավոր նորություն է: Հեղինակային իրավունքի խախտումները կարելի է ներել, եթե հրապարակման մեջ տեղեկատվությունն արդարացիորեն է օգտագործվել:

Պարտադիր չէ ճանաչված լրագրող լինել՝ վկայակոչելու համար պաշտպանության այս միջնորդությունները: Դեռևս 1972թ. ԱՄՆ Գերագույն դատարանը հայտարարեց. «Մամուլի ազատությունը որքան մեգապոլիսային հրատարակչի ..., նույնքան էլ անհատ պամֆլետիստի իրավունքն է»:

Այսպիսով՝ բլոգերները նույնպես պաշտպանվում են Առաջին փոփոխությամբ: Նրանք կարող են պաշտպանություն ստանալ նաև օրենքով: Բլոգներիերի նկատմամբ լրագրողների գաղտնի աղբյուրներին պաշտպանող օրենքների կիրառումը կախված է տվյալ իրավական ակտի ձևակերպումից կամ խնդրի նկատմամբ դատարանի վերաբերմունքից: Թեև որոշ օրենքներ սահմանում են, որ նորությունների լուսաբանմամբ պետք է զբաղվեն շահույթ հետապնդող ավանդական լրատվական կազմակերպություններում աշխատող լրագրողները, բայց այս իրավական դրույթների մեծ մասը խիստ ընդգրկուն է և վերաբերում է նաև ցանկացած անհատի, ով տեղեկատվություն է հավաքում ու տարածում: Կալիֆորնիայում

դատարանը վճռեց, որ աղբյուրների գաղտնիության պահպանման մասին օրենքը պաշտպանում է այն բլոգերներին, ովքեր բացահայտել էին Էփլ քոմփյութեր ընկերության առևտրային գաղտնիքները: Դատարանը վճռեց, որ նրանց հրապարակումները «նորությունների» արժեք ունեին: Բայց այս դեպքից քիչ անց, նույն նահանգի դաշնային դատարանը հրաժարվեց ընդունել, որ բլոգեր և ինքն իրեն անարխիստ հռչակած Ջոշ Վուլֆը լրագրող է, որովհետև նա լրատվական կազմակերպության հետ «առնչություն չունի կամ այնտեղ չի աշխատում»:

ԱՄՆ դատարանները Հաղորդակցությունների պատշաճության ակտի Բաժին 230-ը մեկնաբանել են լայն իմաստով. այս կերպ դրույթն անձեռնմխելիություն է սահմանում «ինտերակտիվ համակարգչային ծառայություններ» (ԻՀԾ) տրամադրողների համար՝ զրպարտանքի վերաբերյալ այն հայցերի դեպքում, որոնք բխում են երրորդ կողմի ներմուծած բովանդակությունից: Դատարանները այս պաշտպանությունը կիրառում են նրանց նկատմամբ, ովքեր համացանցային կայքեր և բաշխման ցանկեր են գործարկում՝ երբեմն որոշակի խմբագրական վերահսկողություն իրականացնելով: Նույն տրամաբանությունը պետք է կիրառվի նաև բլոգերի նկատմամբ:

Բլոգերներին հաշվետու դարձնելը

Այսպիսով՝ նշանակու՞մ է արդյոք, որ բլոգերներն ազատ են վերբեռնել ինչ ցանկանան՝ առանց վախի, որ իրենց դեմ կարող է դատական գործ հարուցվել:

Բացարձակապես ոչ: Ինչ աստիճանի անձեռնմխելիություն էլ սահմանված լինի երրորդ կողմ հանդիսացող կայքերի կամ ընթերցողների կողմից արված գրառումների վերաբերյալ, բլոգ հրատարակողի դեմ հնարավոր է դատական հայց ներկայացնել նրա կողմից գրված նյութի առնչությամբ: Դատարավարության ընթացքում հավանաբար երկար-բարակ քննվի նորություններ հավաքելու բլոգերի հմտությունը: Փորձե՞լ է նա արդյոք ստուգել պատմության ճշմարտացիությունը, թե՞ պարզապես կրկնել է չհիմնավորված բամբասանքը, թե՞ հիմնվել է անանուն աղբյուրների վրա: Այլ կերպ ասած՝ նա գործել է անփութորե՞ն, թե՞ պարզապես չմտածված անտեսել է ճշմարտությունը: Եթե դատարանը որոշի, որ նա անփութորեն է գործել, ապա բլոգերը կարող է պարտվել դատը:

Շատ երկրներում զրպարտանքի վերաբերյալ դատավարության հիմնավորումը կարող է միայն կեղծ փաստը լինել: Չի կարելի դատապարտվել կարծիքի արտահայտման համար, քանի որ կարծիքի ոչ ճշմարտացիությունը, ոչ կեղծիքը ապացուցելի չէ: Բայց շատ բլոգներ խիստ բնորոշ անհատական կարծիքի և չհիմնավորված պնդումների ամուր միասնություն են: Դժվար է տարբերակել այս երկուսը, եթե միջնորդում ես կարծիքի արտահայտման համար արտոնություն ստանալու, որի համար նախ անհրաժեշտ է ապացուցել կարծիքի հիմքում ընկած փաստերի ճշմարտացիությունը:

ԱՄՆ օրենքով սահմանվող պաշտպանությունը ավարտվում է ԱՄՆ պետական սահմանով, բայց համացանցն այդտեղ չի ավարտվում: Միացյալ Նահանգներում բլոգերը կարող է ուզածի չափ վկայակոչել Առաջին փոփոխությամբ և Բաժին 230-ով պաշտպանվելու իր իրավունքները, սակայն

արտասահմանյան ոչ մի դատարան պարտավոր չէ դրանք հաշվի առնել: Լավագույն դեպքում այդ դատարանները կիրառելու են իրենց սեփական օրենքները: Ավանդական լրատվամիջոցներում աշխատող լրագրողները վաղուց է, ինչ ենթարկվում են դատաքննությունների և նույնիսկ քրեական հետապնդման օտար երկրներում, որտեղ տարածվում է նրանց աշխատանքի արդյունքը: Բայց բլոգերները կարող են զարմանալ, եթե իմանան, որ իրենք նույնպես կարող են ենթարկվել դատավարության ցանկացած վայրում, որտեղ նրանց խոսքն ընթերցվում է:

Ավստրալիայի Գերագույն դատարանը նմանատիպ որոշում կայացրեց 2002թ., երբ թույլ տվեց «Դայմոնդ Ջո» Գաթնիկին՝ զրպարտանքի մասին հայց ներկայացնել: Լինելով Ավստրալիայի քաղաքացի՝ Գաթնիկը պնդում էր, որ Միացյալ Նահանգներում գտնվող *«Բեռոնգ»* ամսագրի կողմից առցանց հրապարակված հոդվածը զրպարտում է իրեն: Երբ Գաթնիկն ապացուցեց, որ իր հայրենի քաղաք Մելբուռնում մի քանի ընթերցողներ բեռնել են այս հոդվածը, դատարանը թույլ տվեց նրան Ավստրալիայում դատական հայց ներկայացնել ամսագրի դեմ: Գլխավոր դատավորը գրում է. «Նրանք, ովքեր տեղեկատվություն են տեղադրում համացանցում, քաջ գիտակցում են, որ [այն] հասանելի է դառնում անսահմանափակ թվով մարդկանց առանց տարածման

Վերևում՝ ավստրալիացի բարերար «Դայմոնդ Ջո» Գաթնիկը (ձախից) դատական հայց ներկայացրեց ԱՄՆ-ում տեղակայված *«Բեռոնգ»* ամսագրի դեմ 2002թ. առցանց հրապարակված հոդվածում իրեն զրպարտելու համար: Թեև այն հոդվածը, որը, Գաթնիկի պնդմամբ, զրպարտում էր իրեն, տպագրվել էր Միացյալ Նահանգներում, Ավստրալիայի Գերագույն դատարանը որոշեց, որ ցանցում հասանելի ցանկացած հոդված կարող է համարվել հրապարակված այն տեղում, որտեղ ընթերցվում է՝ այսպիսով տալով Գաթնիկին Մելբուրնում դատական հայց ներկայացնելու իրավունք:

աշխարհագրության սահմանափակման»:

Զրպարտանքի մասին դատական հայցերը միակ խնդիրը չեն, որոնց վերաբերյալ պետք է մտահոգվեն բլոգերները: Բազմաթիվ երկրներում իրավական ակտերը օրինախախտում կամ նույնիսկ հանցագործություն են համարում ինչ-որ մեկի «արժանապատվությունը վիրավորելը» կամ «արժանապատվությանը վնաս հասցնելը», անգամ, եթե քննադատությունը բացարձակապես ճշմարտացի է: Օրինակ, 2008թ. բլոգեր Ռաջա Պետրա Կամարուդինը՝ «Մալայզիան այսօր» էլեկտրոնային կայքի խմբագիրը, քննադատել էր Իսլամը: Նա ձերբակալվեց և կալանավորվեց՝ Մալազիայի Ներքին անվտանգության ակտը խախտելու մեղադրանքով:

Շատ երկրներ կիրառում են պարտադիր պատասխանի իրավունքը, որը պարտադրում է այն անհատների և կորպորացիաների պատասխանների հրապարակումը, որոնք պնդում են իրենց մասին լուսաբանման ոչ ճշգրտությունը: 2006թ. Եվրոպական խորհրդարանն ընդունեց Եվրոպայի խորհրդի առաջարկը՝ պատասխանի այս իրավունքը տարածել առցանց մեդիայի վրա, ներառյալ ցանկացած «ծառայության, որը հասանելի է հասարակությանը և պարունակում է հասարակական հետաքրքրություն ներկայացնող, հաճախ թարմացվող և խմբագրվող տեղեկատվություն»: Սա կարծես բլոգի տիպիկ նկարագրությունը լինի:

Բազմաթիվ բլոգերներ հենց այդպես էլ անում են: Նրանք թարմացնում են իրենց բլոգները, հաճախ տպագրում են հերքումներ կամ փոփոխություններ սխալ պարունակող գրառումների վերաբերյալ կամ ազատորեն հրապարակում են դժգոհ ընթերցողների արձագանքները: Նրանք պնդում են, որ պատասխանատու կերպով գործելու համար իրենց անհրաժեշտ չեն օրենքներ: Բայց մեծ տարբերություն կա օրենքի պարտադրանքով կայացված խմբագրական որոշումների և սեփական վստահելիությունն ամրապնդելու ցանկությամբ ընդունած որոշումների միջև:

Բացի այդ, շատ բլոգերներ անանուն ներքաշվում են վիրավորական առցանց մեկնաբանությունների մեջ: Բաժին 230-ի ներքո կարող են ԻՀԾ-ին ստիպել բացահայտել անհատի ինքնությունը, եթե դատավորը եզրակացնում է, որ հայցվորը զրպարտանքի իրավացի մեղադրանք է ներկայացրել: Այս դեպքում, ԻՀԾ-ն կարող է լինել թերթ կամ այլ ԶԼՄ, որին կպարտադրեն բացահայտել իր կայքում մեկնաբանություններով հանդես եկած ընթերցողների ինքնությունը՝ այս կերպ գրառումները վերբեռնողներին դարձնելով խոցելի՝ պատժի և վրեժի առջև:

Անձնական կյանքի և հեղինակային իրավունքի պաշտպանություն

Անձնական կյանք ներխուժումը հատուկ մարտահրավեր է առաջ բերում կիբերտարածությունում: Թվային տեխնոլոգիաները հեշտացնում են նորությունների հավաքումը: Տեսականորեն, կառավարության արխիվների թվայնացումը պետք է քաղաքացիների կողմից տեղեկատվության նկատմամբ հասանելիության և վերահսկողության աննախադեպ հնարավորություն ընձեռի: Բայց շատ դատավորներ և օրենսդիրներ՝ մտավախություն ունենալով, որ հասանելիությունը կհեշտացնի ինքնության յուրացումը,

աշխատանքային խտրականությունը և այլ ապօրինի վարքագիծ, սահմանափակում են էլեկտրոնային ֆայլերի մատչելիությունը:

Դատավորները նաև խոսում են այն անհարմարությունների մասին, որոնք ստեղծում են տեղական համայնքի խնդիրներով լրջորեն չհետաքրքրված անձինք, ովքեր քրքրում են դատական կամ անշարժ գույքի արխիվները և դրանց առցանց հրապարակումները: Նրանք մտավախություն ունեն, որ բլոգերների գործունեությունը ոչ այլ ինչ է, քան ասեկոսեների տարածում, հեղինակային իրավունքների խախտում և սեռական բռնությունների զոհերի ինքնության բացահայտում՝ միևնույն ժամանակ միշտ համացանցի ընձեռած անանունության հետևում թաքնված: Նրանք անհանգստանում են, որ հանրային լրագրողները բջջային հեռախոսների տեսախցիկներով և ձայնագրիչներով կներխուժեն դատական դահլիճներ և կվերբեռնեն դատական գործընթացի տեսագրություններ, գործողություն, որը նրանք համարում են կործանիչ և անպատշաճ: Պետական պաշտոնյաները, որոնք որոշում են, թե որ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի լրագրողներին, հաճախ աջակցում են կառավարության արխիվների և արձանագրությունների մատչելիությանը. երբ հասանելիությունը դառնում է դյուրին, կարելի է կասկածի ենթարկել դրա խելամտության հարցը: Նրանց կարծիքով՝ առցանց ներկայացվելու համար տեղեկատվությունը չափազանց արժեքավոր կամ չափազանց վտանգավոր միջոց է:

Օրինակ, 2008թ. սեպտեմբերին Կալիֆորնիայում դատավորն արգելեց *«Օրինք քաունթի ռեջիսթր»* թերթին «հաղորդակցության որևէ միջոցով՝ լինի անձամբ, էլեկտրոնային կամ տպագիր եղանակով, ձայնով կամ տեսագրություններով» հաղորդել այն վկաների ցուցմունքները, որոնք հանդես էին գալիս խմբագրության ցրիչների՝ աշխատանքային պայմանագրերի խախտման պատճառով ներկայացված խմբակային հայցի արդյունքում հարուցված դատական գործով: Նա եզրակացրեց, որ այս դատական արգելանքը անհրաժեշտ էր՝ կանխելու ավելի վաղ հանդես եկած վկաների ելույթների հնարավոր ազդեցությունը ավելի ուշ եկող վկաների վրա:

Վեճը քննող հանձնաժողովն, ի վերջո, մերժեց այս կարգադրությունը: Հանձնաժողովը վճռեց, որ վկաների վրա լուսաբանման հնարավոր ազդեցության նկատառումը բավարար չէ գրաքննությունն արդարացնելու համար: Այլ, ոչ խիստ այլընտրանքներն, ինչպես օրինակ՝ վկաներին թերթը չկարդալու մասին զգուշացնելը, կլուծեր միևնույն խնդիրը: Նախագահող դատավորը հաշվի չառավ մոտավորապես 70 տարվա ընթացքում տեղ գտած նախադեպերը, քանի որ առցանց միջոցներն արագահաս են և համատարած:

Հեղինակային իրավունքն այլ դժվարություններ է առաջադրում: Մտավոր սեփականություն հանդիսացող նյութի տերերը միշտ ունեցել են օրինական իրավունք՝ պահանջելու, որ օրինազանցները «դադարեցնեն և այսուհետ ձեռնպահ մնան» իրավունքները խախտող գործեր հրապարակելուց և տարածելուց: Բայց համացանցն այժմ, ավելի քան երբևէ, դյուրացրել է այլոց աշխատանքն առանց թույլտվության կրկնօրինակելը: Պե՞տք է հեռախոսային ընկերությունը կամ այլ ԻՀԾ-ն պատասխանատվության ենթարկվի, եթե իր տրամադրած կապը հաճախորդներից մեկն ապօրինաբար է օգտագործում և

ֆայլ է վերբեռնում: 1998թ. ուժի մեջ մտած ԱՄՆ Թվային հազարամյակի հեղինակային իրավունքի ակտը (ԹՀՀԻԱ) մշակվել է՝ հարթելու այս խրթին իրադրությունը, միևնույն ժամանակ չխեղդելով խոսքի ազատությունը: Իրավական ակտի՝ «անվտանգության գոտու» դրույթը (միայն մեծահասակների համար նախատեսված հաղորդումները, ըստ Հաղորդակցությունների դաշնային հանձնաժողովի որոշման, ռադիոհեռուստակայանները կարող են հեռարձակել կեսգիշերից մինչև առավոտյան ժամը 6-ն ընկած ժամանակահատվածում) պաշտպանում է ԻՀԾ-ին պատասխանատվության ենթարկվելուց, եթե օրենքը խախտող նյութի վերբեռնման մասին ծանուցումը ստանալուց հետո, ԻՀԾ-ն «անհապաղ» հեռացնում են այն:

Խնդիրն այն է, որ զգուշավոր ԻՀԾ-ն կորոշի հեռացնել բավանդակությունը և կթողնի, որ բաժանորդը և հեղինակային իրավունքի տերը զբաղվեն իրենց համապատասխան իրավասություններով: Գործընթացը հեշտացնելու համար՝ ԹՀՀԻԱ-ն թույլ է տալիս հեղինակային իրավունքների տերերին կիրառել «վարչական պատասխանատվության ծանուցագիր»՝ ստիպելու ԻՀԾ-ին բացահայտել բաժանորդի ինքնությունը: Թեև ենթադրվում է, որ սրա նպատակը օրինախախտ գործունեության նվազեցումն է միայն, վտանգ կա, որ դատական ծանուցագրերը կարող են կիրառվել ոչ պատշաճ կերպով՝ շրջանցելու անանուն հանդես գալու իրավունքը հաստատող Առաջին փոփոխության սկզբունքները:

Համացանցի՝ որպես հաղորդակցական լուրջ տեխնոլոգիայի և լրագրողների համար հրատարակումների հարթակի ի հայտ գալը ստեղծում է նոր իրավական բարդություններ: Բայց հիմնական սկզբունքները պետք է մնան անփոփոխ և չպետք է կախված լինեն նրանից, արդյոք լրագրողն աշխատում է ավանդական ԶԼՄ-ում, թե բլոգ է վարում: Դատավորները և օրենսդիրները պետք է հետևեն այնպիսի սկզբունքների, որոնք վաղուց ի վեր պաշտպանում են մամուլը և տեղեկացված լինելու հանրության իրավունքը՝ անկախ հրապարակման հարթակից:



«Առանց ապար մամուլի, առանց խոսքի ազատության, ապար ինստիտուտներ լիովին կեղծիք են դառնում թե՛ ցնի, թե՛ կառույցների առումով... Եթե մամուլն ազատ չէ, եթե խոսքն անկախ և անկաշկանդ չէ, եթե միտքը շղթայված է կամ վախից անզոր է դարձել, ոչ մի գարբերություն չկա, թե կառավարման ինչ ռեժիմի ներքո ենք ապրում, միևնույն է՝ դուք հպատակ ենք, ոչ թե քաղաքացի:»:

Վիլյամ Ի. Բորահ
ԱՄՆ սենատոր
Հյուսիս սենատում, 1917թ. *ապրիլի* 19

Տեղեկատվության ազատ փոխանակում և քաղաքացիական հասարակության զարգացում

Ամբողջ աշխարհում եղել են անվախ լրագրողներ, ովքեր վտանգի են ենթարկել իրենց առողջությունը և անգամ կյանքը, փորձելով լուսաբանել իրադարձությունները և ճշգրիտ տեղեկատվություն ներկայացնել հասարակությանը՝ երբեմն ընդդիմանալով ռեժիմային կառավարություններին և այլ էական խոչընդոտների: Լրագրությունն առավելագույնս արդյունավետ է այն երկրներում, որտեղ հարգվում է օրենքի գերակայությունը: Ազատամտությունը լավագույնս պաշտպանված է պետական սահմանադրությամբ և կանոնադրական կամ ընդհանուր իրավունքով: Ինչ տեսքով և ձևակերպմամբ էլ հանդես գա օրենքը, այն առնվազն պետք է պաշտպանի լրատվամիջոցներին գրաքննությունից և տեղեկատվության հասանելիություն ապահովի լրագրողների համար:

«Մամուլի ազատությունը» պարզապես կարգախոս չէ: Եվ ոչ էլ միայն լրագրողների համար է: Տեղեկատվություն ստանալու և հաղորդելու իրավունքը համընդհանուր իրավունք է: Սակայն, եթե բոլորի նկատմամբ կիրառվող օրենքների համակարգից յուրաքանչյուրն է օգտվում, հատուկ շահերի պաշտպանությանն ուղղված օրենսդրությունը, որը կենտրոնանում է լրատվամիջոցների պաշտպանության վրա կամ հատուկ իրավունքներ է սահմանում մամուլի համար, պակաս ցանկալի է, որովհետև այդպիսի օրենսդրությունը պահանջում է մամուլի *փաստացի* արտոնագրում: Դա կարող է նաև վստահության կեղծ զգացողություն ստեղծել: Այն պաշտպանությունը, որը տալիս է օրենսդրությունն այսօր, վաղը կարող է չտալ:

Դա է պարադոքսը: «Օրենքի գերակայությունը», ինչպես էլ որ այն սահմանվի, պաշտպանում է յուրաքանչյուրին, այդ թվում նաև մամուլին: Անշուշտ, կարող են կիրառվել նաև *վատ* օրենքները, և նույնիսկ լավագույն օրենքները կարող են անվավեր ճանաչվել կամ կասեցվել: Սա մեկն է այն պատճառներից, թե ինչու որոշ

լրագրողներ չեն ցանկանում պաշտպանել նույնիսկ այն օրենքները, որոնք կարող են օգուտ բերել իրենց, օրինակ՝ տեղեկատվության գաղտնիությունը պաշտպանող օրենքները:

Կառավարությունները փոխվում են, բայց մամուլի ազատությանն ուղղված հասարակական աջակցությունը պետք է լինի հաստատուն և շարունակական, որովհետև ազատ մամուլի վերջնական շահառուները քաղաքացիներն են: Ազատ մամուլը նպաստում է հանրության՝ տեղեկացված լինելու իրավունքի իրացմանը՝ խրախուսելով տեղեկատվության ազատ փոխանակում և տարածում: Ազատ մամուլին պաշտպանելը պահանջում է ազգային պարտավորություն՝ ինչպես կառավարության, այնպես էլ հասարակության կողմից: Արդյունքը՝ ավելի ուժեղ քաղաքացիական հասարակության կայացումն է բոլորի համար:

Երբ կիրառվում են իրավական պաշտպանության միջոցները, էական է դառնում անկախ դատական համակարգի առկայությունը: Այն ապահովում է իրական պաշտպանությունը և արդարացի հարկադիր կատարումը: Անկախ նրանից, թե որքան հստակ է ձևակերպված օրենքի տեքստը, միշտ էլ կարող է շփոթություն և տարակարծություն լինել: Այդ դեպքերում, դատական իշխանության կողմից օրենքի մեկնաբանությունը կարող է որոշիչ դառնալ: Ազատ մամուլը կարևորող դատավորները մամուլի պաշտպանության լավագույն երաշխավորներն են:

Պաշտպանության միջոցները

Այս բաժնում մենք կներկայացնենք մի շարք կազմակերպություններ, որոնք աշխատում են մամուլի ազատությունը երաշխավորող և ապահովող օրենքներն ուժեղացնելու և կիրառելու ուղղությամբ:

Հոդված 19

http://www.article19.org

Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այս կազմակերպությունը հիմնադրվել է 1986թ.-ին և կրում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի այն դրույթի անունը, որը երաշխավորում է արտահայտման և կարծիքի ազատության իրավունքները: Հոդված 19-ը գտնվում է Լոնդոնում: Այն գործում է միջազգային մակարդակով՝ պաշտպանելու արտահայտվելու և կարծիքի համընդհանուր իրավունքները, պայքարում է այս իրավունքների իրացման համար և մասնակցում է խախտումների վերաբերյալ դատաքննություններին:

Այս հասարակական կազմակերպությունը ստեղծում է ցանցեր՝ արտահայտվելու ազատության դեմ առկա սպառնալիքների մասին, իրազեկությունը բարձրացնելու և իրավունքի իրացման մոնիթորինգը բարելավելու նպատակով: Այն իրականացնում է իրավագիտության դասընթացներ կազմակերպությունների, լրագրողների և պետական պաշտոնյաների համար: Հոդված 19-ը նաև մշակում է տեղեկատվության ազատության վերաբերյալ տիպային օրենսդրություն և տրամադրում է իրավաբանական եզրակացությունների՝ որոնելի տվյալների բազաներ և այլ ռեսուրսներ: Պարբերաբար հրապարակվող կազմակերպության զեկույցները միջազգային հանրության ուշադրությունն են գրավում այն օրենքների և գործողությունների վրա, որոնք սահմանափակում են

տեղեկատվության և արտահայտվելու ազատությունը: Կազմակերպությունը դատապարտում է ինչպես անհատ լրագրողների, այնպես էլ ինստիտուցիոնալ մամուլի վրա հարձակումները: Ի թիվս իր այլ ձեռքբերումների, 1995թ.-ին Հոդված 19-ը հավաքեց միջազգային իրավունքի և մարդու իրավունքների փորձագետների խումբ, որն ընդունեց Ազգային անվտանգության, արտահայտվելու ազատության և տեղեկատվության հասանելիության Յոհանեսբուրգյան սկզբունքները:

Կանադացի լրագրողները հանուն արտահայտվելու ազատության (ԿԼՀԱԱ)

http://www.cjfe.org/

Կանադայում 1981թ.-ին որպես Հետաքննական լրագրության կենտրոնի նախագիծ հիմնված ԿԼՀԱԱ-ը պրոպագանդում է արտահայտվելու ազատության իրացումն ամբողջ աշխարհում: Այն իրականացնում է մեդիա ուսուցում զարգացող երկրներում, այդ թվում՝ Ինդոնեզիայում և Թայլանդում, քաղաքացիական պատերազմի ավարտից հետո աջակցում է Սիերա Լեոնեում վերականգնել հիմնական մեդիա հարթակները և ԶԼՄ-ները:

ԿԼՀԱԱ-ն կառավարում է Արտահայտվելու ազատության միջազգային փոխանակման (Այֆեքս) տեղեկատվական կենտրոնը: Սա 88 կազմակերպությունների վիրտուալ ցանց է, որը հետևում է արտահայտվելու ազատության ապահովմանն ամբողջ աշխարհում և այդ տեղեկատվությունը փոխանցում է ավելի քան 120 երկրների: Այֆեքսը հանդես է գալիս տարբեր երկրներին և տարածաշրջաններին ուղղված ամենօրյա «գործողությունների կոչերով», ինչպես նաև՝ ամենշաբաթյա *պաշտոնական հաղորդագրություններով:*

Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի Իրավական նախաձեռնություն (ԿԵԵԻՆ)

http://abarol.ge/about_ceeli.html

Լինելով Ամերիկյան իրավաբանների ընկերակցության ծրագիր՝ ԿԵԵԻՆ-ը հիմնադրվել է 1990թ.: Նրա առաքելությունն է տեխնիկական իրավաբանական աջակցություն ապահովել՝ բարձրացնելու Կենտրոնական Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրներում դատավորների և իրավաբանների մասնագիտական մակարդակը: Խումբն ունի վերապատրաստման ինստիտուտ Պրահայում և մի շարք կամավորական իրավաբանական մասնաճյուղեր:

Նրա նպատակներ են մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների մասին իրազեկության բարձրացումը, պայքարը կոռուպցիայի դեմ և հանրային թափանցիկության ու հաշվետվողականության առավել բարձր մակարդակի ապահովումը:

Միջազգային մեդիա աջակցության կենտրոն (ՄՄԱԿ)

http://cima.ned.org/

Լինելով «Ազգային ներդրում հանուն ժողովրդավարության» մասնավոր, շահույթ չհետապնդող կազմակերպության նախաձեռնությունը՝ ՄՄԱԿ-ն ամբողջ աշխարհում աջակցում է ԶԼՄ-ներին տարբեր ծրագրերով. հավաքում է աշխատախմբեր, կազմակերպում է միջոցառումներ, կատարում է հետազոտական աշխատանք և ունի ԶԼՄ-ների աջակցության ռեսուրսների տվյալների բազա: ԶԼՄ-ների Զարգացման համաշխարհային ֆորումի միջոցով՝ ՄՄԱԿ-ը հիմնել է գործող լրագրողների և փորձագետների ցանց: ՄՄԱԿ-ը ֆինանսավորվում է ԱՄՆ Պետքարտուղարության տրամադրած դրամաշնորհի միջոցով:

Չեպուլտեպեկ Ծրագիրը

http://www.declaraciondechapultepec.org/

Չեպուլտեպեկ ծրագիրը մեկնարկել է 1994թ.՝ որպես Համաամերիկյան մամուլի ընկերակցության հատուկ նախաձեռնություն: Ընկերակցությունն ունի ավելի քան 1300 անդամ՝ թերթեր և ամսագրեր, որոնք գտնվում են Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում: Ծրագրի առաքելությունը քաղաքացիական հասարակությունում մամուլի ազատության կարևորության ընկալման խթանումն էր, բայց հետագայում ծրագիրն ընդլայնվել է և այժմ իշխանության բոլոր երեք ճյուղերի ներկայացուցիչների մասնակցությամբ միջազգային խորհրդաժողովների մի ամբողջ շարք է հովանավորում: Այս խորհրդաժողովներն էական դեր են խաղացել՝ մի շարք երկրներում վիրավորանքի վերաբերյալ օրենքները սահմանափակելու գործում: Մարդու իրավունքների համաամերիկյան հանձնաժողովին Չեպուլտեպեկ ծրագիրը լրագրողների անունից երեք դատական գործի անկախ փորձագիտական եզրակացություն է ներկայացրել, ինչպես նաև ուղարկել է առաքելություններ և կազմակերպել արտահերթ ֆորումներ՝ պայքարելով մամուլի ազատության սահմանափակմանն ուղղված օրենսդրության դեմ:

1999թ.-ին Համաամերիկյան մամուլի ընկերակցությունը հրատարակել է *«Մամուլի ազատությունը և իրավունքը»*՝ Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում մամուլի ազատությանն առնչվող օրենքների առաջին համեմատական ուսումնասիրությունը: Ներկայումս այն սկսում է մի նոր նախաձեռնություն՝ ՁԼՄ կազմակերպություններին բնորոշ ներքին խնդիրների և լրագրողների համար առաջնային և ուղղորդող արժեքների վերաբերյալ:

Քաղաքացիական մեդիայի մասին օրենքի ծրագիր (ՔՄՕԾ)

http://www.citmedialaw.org

Ասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի Հարվարդի Իրավաբանական դպրոցի Համացանցի և հասարակության Բերկմանի անվան կենտրոնում գտնվող ՔՄՕԾ-ը տրամադրում է իրավաբանական աջակցություն, կրթություն և միջոցներ այն անհատներին, ովքեր ներգրավված են առցանց և «քաղաքացիական» ՁԼՄ-ներ գործունեություններում: Վիճարկումների դեպքում այն նաև հանդես է գալիս անկախ փորձագիտական եզրակացություններով: ՔՄՕԾ-ի էլեկտրոնային կայքը տրամադրում է մի շարք իրավաբանական ուղեցույցներ, ինչպես նաև՝ «սպառնալիքների տվյալների բազա», որն առցանց ՁԼՄ-ների վերաբերյալ ընթացիկ և քննվող իրավական գործերի հակիրճ նկարագրությունն է:

ՔՄՕԾ-ը կազմակերպել է իրավաբանների և ակադեմիական գործիչների ցանց, որը հետաքրքրված է ներկայացնել առցանց լրագրողական գործունեության պատճառով դատաքննության առջև կանգնած անհատներին: ՔՄՕԾ-ն Արիզոնա նահանգի համալսարանի Քաղաքացիական մեդիա կենտրոնի մասնաճյուղն է:

Լրագրողների պաշտպանության կոմիտե (ԼՊԿ)

http://www.cpj.org

Աղրպասահմանում աշխատող ամերիկացի թղթակիցների մի խումբ 1981թ. ստեղծեց ԼՊԿ-ն: Նյու Յորքում գտնվող, սակայն ավելի քան 120 երկրներում խորհրդատուների ցանց ունեցող այս հասարակական

կազմակերպությունը կատարում է մամուլի նկատմամբ ոտնձգությունների վերաբերյալ իր սեփական հետազոտական աշխատանքը: Այն հրատարակում է հոդվածներ, նորությունների հաղորդագրություններ, հատուկ զեկույցներ և *«Մամուլի վրա հարձակումների դեպքեր»*, որը մամուլի ազատության ամենամյա համաշխարհային ուսումնասիրություն է: Կոմիտեն միջամտում է այն ժամանակ, երբ սպառնում են տեղական կամ արտասահմանյան թղթակիցներին, և խորհրդատվություն է տրամադրում վտանգավոր առաջադրանքներ ունեցող լրագրողներին:

ԼՊԿ-ն հաջողել է ազատել Իրանում բանտարկված լրագրողներին, այդ թվում՝ *«Նյուսուիքի»* թեհրանյան թղթակից Մազիար Բահարիին, ինչպես նաև անկախ լրագրողներ Ռոքսանա Սաբերիին և Յասոն Աթանասիադիսին:

Էլեկտրոնային սահմանային հիմնադրամ (ԷՍՀ)

http://www.eff.org

ԷՍՀ հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1990թ. և գրասենյակներ ունի Վաշինգտոնում (Կոլումբիայի շրջան) և Սան Ֆրանցիսկոյում: Այն պաշտպանում է առցանց ազատ խոսքը, անձնական կյանքի գաղտնիությունը և սպառողների շահերը: ԷՍՀ-ն բազմաթիվ դատական գործեր է հարուցել ԱՄՆ դատարաններում, և Գործողությունների իրականացման իր կենտրոնի միջոցով կրթում է հասարակությանը, օգնում է քաղաքացիներին արձագանքել օրենսդրությանը և խորհուրդներ է տալիս քաղաքականություն մշակողներին: Թեև նրա աշխատանքի մեծ մասն իրականացվում է երկրի ներսում, ԷՍՀ-ը նաև պայքարում է թվային իրավունքների համար ամբողջ աշխարհում: 2009թ. հուլիսին կազմակերպությունը հրատարակեց *«Գործնական ուղեցույց. համացանցային տեխնոլոգիաները ռեպրեսիվ ռեժիմներում գործող քաղաքական ակտիվիստների համար»* ձեռնարկը:

Ֆրիդոմ հաուս

www.freedomhouse.org

Էլեոնոր Ռուզվելտը և Վենդել Վիլկին՝ 1940թ. ԱՄՆ նախագահական թեկնածուն, 1941թ. հիմնված և Կոլումբիայի շրջանի Վաշինգտոն քաղաքում տեղակայված Ֆրիդոմ հաուսի առաջին պատվավոր համանախագահներն են: Կազմակերպությունը հրապարակում է բազմազան ուսումնասիրություններ, այդ թվում նաև *«Մամուլի ազատությունը և ազատությունն աշխարհում»* լրագրողների անկախության մակարդակի մասին ամենամյա զեկույցը:

Ֆրիդոմ Հաուսն ամբողջ աշխարհում պաշտպանում է մարդու իրավունքները և ժողովրդավարությունը: Այն ուղղակիորեն համագործակցում է ժողովրդավարության հաստատման համար բարեփոխումներ իրականացնող կառույցների հետ Կենտրոնական Ասիայում, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, Միջին Արևելքում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում և նախկին Խորհրդային Միության երկրներում՝ տրամադրելով ուսուցում, աջակցություն և տարբեր երկրներում ոլորտը կարգավորող քաղաքականությունների համառոտ նկարագրություններ:

Մամուլի ազատության համաշխարհային կոմիտեն (ՄԱՀԿ)

(http://www.wpfc.org) աշխարհի տարբեր երկրներ ներկայացնող և հանուն մամուլի ազատության գործող 44 խմբերի կոնսորցիում է, որը գտնվում է Հյուսիսային Վիրջինիայում: Այն միաձուլվեց Ֆրիդոմ Հաուսին 2009թ.: ՄԱՀԿ-ը մոնիթորինգի է ենթարկել մամուլի ազատության հետ կապված զարգացումներն այնպիսի միջազգային կազմակերպություններում, ինչպիսին է ՅՈՒՆԵՍԿՕ-ն, և ավելի քան 30 տարի է, ինչ հրապարակում է հեղինակավոր ուսումնասիրություններ, հատկապես՝ վիրավորանքի մասին օրենքների վերաբերյալ:

«Ֆրիդոմ հաուս Եվրոպան» Ֆրիդոմ հաուսի կենտրոնական եվրոպական գրասենյակն է: Այն գտնվում է Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում (http://www.freedomhouse.hu/):

Գրաքննության ցուցիչ

http://www.indexoncensorship.org

«Գրաքննության ցուցիչը» հասարակական կազմակերպություն է, որը 1972թ. հիմնվել էր որպես ամսագիր և հրապարակվում էր մի խումբ լոնդոնաբնակ գրողների և լրագրողների կողմից: Այս կազմակերպությունը պաշտպանում և խթանում է արտահայտվելու ազատության զարգացումը: Նպատակներին հասնելու համար «Գրաքննության ցուցիչը» համագործակցում է տեղական կազմակերպությունների հետ: 2009թ. այն սկսեց ծրագրեր իրականացնել Թունիսում, Աֆղանստանում, Պակիստանում, Իրաքում և Բուրմայում: Այն նաև աջակցում է նոր լրագրողական և գեղարվեստական ֆիլմերի ստեղծմանը և նախաձեռնում է երիտասարդների հետ աշխատանքի ծրագիր:

«Գրաքննության ցուցիչ» կազմակերպության էլեկտրոնային կայքն արտահայտվելու ազատության մասին միջազգային նորությունների ռեսուրս է:

Լրագրողների միջազգային կենտրոն (ԼՄԿ)

http://icfj.org/

ԼՄԿ-ն Կոլումբիայի շրջանի Վաշինգտոն քաղաքում գտնվող, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որն իրականացնում է գործնական ուսուցում լրագրողների համար ավելի քան 176 երկրներում՝ աշխատաժողովների, սեմինարների, կրթաթոշակների և միջազգային փոխանակումների միջոցով: Այն գործարկում է Լրագրողների միջազգային ցանցը՝ IJNet-ը (http://ijnet.org/), որը լրագրողներին հնարավորություն է տալիս մեդիա ուսուցում և այլ աջակցություն ստանալ:

Զանգվածային լրատվամիջոցների հարցերով զբաղվող իրավաբանների միջազգային ընկերակցություն (Ընկերակցություն)

http://www.internationalmedialawyers.org

Ընկերակցությունը զանգվածային լրատվամիջոցների հարցերով զբաղվող իրավաբանների համաշխարհային ցանց է, որը հանդես է գալիս որպես զանգվածային լրատվության միջոցներին առնչվող օրենսդրության, մամուլի ազատության մասին տեղեկատվության, ռազմավարության և փորձի փոխանակման համար նախատեսված տեղեկատվական կենտրոն: Գտնվելով Անգլիայի Օքսֆորդի համալսարանում՝ այն ամբողջ աշխարհում համակարգում է հասարակության շահերը պաշտպանող և հանուն արտահայտվելու

ազատության ամրապնդման գործող իրավաբանների միջև հաղորդակցությունը: Ընկերակցությունը նաև ուսումնական ծրագրեր է իրականացնում զանգվածային լրատվամիջոցների հարցերով զբաղվող իրավաբանների և քաղաքականություն մշակողների համար:

Մամուլի միջազգային ինստիտուտ (ՄՄԻ)

www.freemedia.at

Ավստրիայի Վիեննա քաղաքում ստեղծված այս հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է դեռ 1950թ.: Նպատակն է զարգացնել և պաշտպանել արտահայտվելու ազատությունը: Նրա՝ *«Դեթ ուոչը»* ներկայացնում է այն լրագրողներին և ԶԼՄ-ների աշխատակիցներին, ովքեր իրենց լրագրողական գործունեության պատճառով սպառնալիքների թիրախ են դարձել: ՄՄԻ-ն մանրամասնորեն նկարագրում է այդ անհատ լրագրողների պատմությունները իր՝ *«Մերժված արդարադատության արշավի»* միջոցով: Կազմակերպությունն իրականացնում է անկախ հետազոտական աշխատանք՝ աշխարհում մամուլի ազատության իրավիճակի վերաբերյալ, իսկ ինստիտուտի «Հսկողության ցուցակը» հսկում է այն կառավարություններին, ում պաշտոնական գործողությունները սպառնում են ԶԼՄ-ների անկախությանը:

ՄՄԻ-ն իրավապաշտպան և փաստահավաք առաքելություններ է ուղարկել Բանգլադեշ, Նեպալ, Շրի Լանկա և այլ երկրներ:

Տարեց իրավաբանների միջազգային ծրագիր (ՏԻՄԾ)

http://www.islp.org

Կազմակերպությունը հիմնվել է 2001թ. հունիսին: Այն ուղղորդում է շուտով թոշակի անցնող կամ արդեն թոշակի անցած իրավաբանների հմտությունները՝ ծառայեցնելով դրանք զարգացող աշխարհում առկա իրավական և օրենսդրական խնդիրների լուծմանը, այդ թվում նաև այն խնդիրների, որոնք վերաբերում են մամուլի ազատությանը և տեղեկատվության հասանելիությանը: Ծրագրի կենտրոնական գրասենյակը գտնվում է Նյու Յորքում, սակայն գրասենյակներ ունի նաև Վաշինգտոնում (Կոլումբիայի շրջան) և Փարիզում: ՏԻՄԾ-ի կամավորներն աշխատում են առաջին հերթին Արևելյան Եվրոպայում, Ռուսաստանում և Հնդկաստանում, բայց խմբի մանդատը համաշխարհային է:

Ի թիվս բազմաթիվ այլ ծրագրերի, ՏԻՄԾ-ի իրավաբան կամավորները անց են կացրել խորհրդաժողով, որը հետազոտում էր Չինաստանի դերը համացանցային համաշխարհային նորմեր և չափորոշիչներ հիմնելու հարցում: Ծրագիրն իրականացրել է նաև իրավագիտական ճեպազրույցներ, որտեղ նշվել է, որ Սիերա Լեոնեի՝ զրպարտանքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող օրենքը, խախտում է այդ երկրի սահմանադրությունը: Ծրագիրը նաև համագործակցել է Արտակարգ իրավիճակների լրագրության կենտրոնի հետ՝ օգնելու այդ խմբին բարելավել իր իրավապաշտպան գործունեությունն այն լրագրողների համար, ում զրպարտանքի և նմանատիպ այլ իրավական մեղադրանքներ էին առաջադրվում նախկին Խորհրդային Միության երկրներում: 2008-2009թթ. ՏԻՄԾ-ը խորհրդատվություն է իրականացրել Եմենում տեղեկատվության և ԶԼՄ-ների ազատության մասին օրենքների նախագծերի վերաբերյալ:

Միջազգային հետազոտությունների և փոխանակման խորհուրդ (Այռեքս)

http://www.irex.org/

Այռեքսը հիմնադրվել է 1968թ.: Կոլումբիայի շրջանի Վաշինգտոն քաղաքում տեղակայված միջազգային հասարակական կազմակերպություն է, որն աշխատում է՝ ամրապնդելու ԶԼՄ-ների անկախությունը և բարելավելու քաղաքական միջավայրը լրագրողների համար: Իր գործակցի՝ Ֆրանսիայի Լիոն քաղաքում գտնվող Այռեքս Եվրոպայի հետ միասին (http://www.europe.irex.org), կազմակերպում է մեդիա ուսուցման ծրագրեր և տրամադրում է փորձագիտական խորհրդատվություն տեղական գործընկերներին, որոնք աջակցում և նպաստում են քաղաքացիական հասարակության զարգացմանն ավելի քան 100 երկրներում: Օրինակ, Սլովակիայում և Բուլղարիայում Այռեքսը տեղական խմբերին խրախուսել է պայքարել հանուն ԶԼՄ-ների մասին օրենքների լրամշակման: Այռեքսի *Մեդիայի անկախության ցուցանիշը*, 76 երկրներում գնահատում և քանակական արժեքով ներկայացնում է անկախ ԶԼՄ-ների համար առկա պայմանները:

Բաց հասարակության համալսարանի և Սորոսի հիմնադրամների ցանցը

http://www.soros.org

Այս Յորքում գտնվող այս մասնավոր հիմնադրամը ստեղծվել է 1993թ.՝ ներդրող և բարերար Ջորջ Սորոսի կողմից: Այն տրամադրում է դրամաշնորհներ, որոնց նպատակն է ուժեղացնել քաղաքացիական հասարակությունը: Բաց հասարակության արդարադատության նախաձեռնության միջոցով (ԲՀԱՆ) այն նպաստում է իրավական ոլորտի բարեփոխումների իրականացմանը և դատական հայցեր է ներկայացնում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված մի շարք, այդ թվում նաև՝ տեղեկատվության և արտահայտվելու ազատության գործերով: Կատարում է ուսումնասիրություններ, որոնց թվին է պատկանում նաև տեղեկատվության ազատության պահանջներին կառավարության կողմից տրված արձագանքների 2006թ. կատարված հայտնի ուսումնասիրությունը: Այդ ուսումնասիրությունը եզրակացնում է, որ վերջին տարիներին ընդունված օրենքներն ավելի արդյունավետ են, քան կայացած ժողովրդավարական մի քանի ռեժիմներում գործողները: «Անկախ փորձագիտական ծառայություն»՝ այսպես է ԲՀԱՆ-ը որակում իր դերը *Քլոդն ընդդեմ Չիլիի* գործում: Այդ գործը քննվում էր Մարդու իրավունքների համաամերիկյան դատարանում և հանգեցրեց 2009թ. ապրիլին Չիլիում տեղեկատվության ազատության մասին ակտի ընդունմանը (http://www.soros.org/initiatives/justice/litigation/chile):

Փրայվասի ինթերնեշնլ (ՓԻ)

http://www.privacyinternational.org

Փրայվասի ինթերնեշնլը հիմնվել է 1990թ. 40 երկրներում գործող ավելի քան 100 անձնական կյանքի գաղտնիությամբ զբաղվող փորձագետների և իրավապաշտպան կազմակերպությունների կոալիցիայի կողմից: Այն հետազոտություններ է կատարում և հովանավորում է անձնական կյանքի գաղտնիության սպառնալիքների վերաբերյալ մի շարք ծրագրեր: ՓԻ-ը տեղակայված է Լոնդոնում: Այն հետևում է կառավարության վերահսկողական գործողություններին և ուսումնասիրում է տարբեր երկրների միջև տեղեկատվական հոսքերն ու դրանց հետևանքները: Կազմակերպությունը

հրապարակում է գրքերի և զեկույցների մեծ բազմազանություն՝ ներառյալ ամենամյա միջազգային *«Տեղեկատվության ազատության ուսումնասիրությունը»*: ՓԻ-ը վերանայում է առաջարկվող օրենսդրությունը, մասնավորապես այնպիսի զարգացող ժողովրդավարական երկրներում, ինչպիսին են Ալբանիան, Մոլդովան և Խորվաթիան: Այն նաև ուսումնասիրել է, թե ինչպես են հակաահաբեկչական միջոցներն ազդում մամուլի ազատության և լրագրողների՝ աղբյուրների ինքնությունը չբացահայտելու իրավունքների վրա:

Ռադիո և հեռուստատեսային թվային նորությունների ընկերակցություն

http://www.rtnda.org/

ՌՀԹՆԸ-ը (նախկին Ռադիո և հեռուստատեսային նորությունների մեկնաբանների ընկերակցություն) աշխարհի ամենամեծ մասնագիտական ընկերակցությունն է, որը ծառայում է բացառապես նորություններն էլեկտրոնային միջոցներով հաղորդելու մասնագիտության զարգացմանը: 1946թ. հիմնադրված այս ընկերակցությունը նպաստում է լրագրողական էթիկայի, տեղեկատվության և մամուլի ազատության կայացմանը: Այն պաշտպանում, պայքարում, և երբեմն, դատական հայցեր է ներկայացնում այնպիսի խնդիրների կապակցությամբ, որոնք ազդում են ԱՄՆ-ում և այլուր էլեկտրոնային լրագրության արդյունաբերության վրա: Հիմնադրումից ի վեր ՌՀԹՆԸ-ը հովանավորում է աշխատաժողովներ և ուսումնական ծրագրեր, որոնցից մեկն էլ գերմանական RIAS Լրագրողների փոխանակման ծրագիրն է:

Լրագրողների կոմիտե հանուն մամուլի ազատության (ԼԿՀՄԱ)

http://www.rcfp.org

Վիրջինիա նահանգի Առլինգտոն քաղաքում գտնվող ԼԿՀՄԱ հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1970թ.: Այն ունի 24-ժամյա թեժ գիծ, որն ապահովում է անվճար իրավաբանական և հեռազոտական աջակցություն ԱՄՆ-ում աշխատող յուրաքանչյուր լրագրողի համար: Իրականացնում է լոբբիստական գործունեություն, հանդես է գալիս հանուն մամուլի ազատության և բաց ու թափանցիկ աշխատող կառավարության, ներկայացնում է անկախ փորձագիտական եզրակացություններ և հարուցում է դատական գործեր: ԼԿՀՄԱ-ը նաև հրապարակում է մեդիայի և տեղեկատվության ազատության մասին օրենքին առնչվող իրավական ուղեցույցներ և ձեռնարկներ:

Լրագրողներ առանց սահմանների (Reporters Sans Frontieres [RSF])

http://www.rsf.org/

Գրաքննության օրենքների դեմ պայքարող RSF-ը հիմնադրվել է 1985թ.-ին և աշխատում է՝ բարելավելու լրագրողների անվտանգությունը, հատկապես պատերազմական գոտիներում: Այն ձեռնարկում է փաստահավաք առաքելություններ և պաշտպանում է այն լրագրողներին, ովքեր բանտարկվել կամ հետապնդվում են:

RSF-ի բազմաթիվ հրատարակություններից են մամուլի ազատության մասին հունվարին տպագրվող ամենամյա եզրակացությունը, «Մամուլի ազատությանը սպառնացող գիշատիչների» ցանկը, որը հրապարակվում է Մամուլի ազատության համաշխարհային օրը

(մայիսի 3), և ամեն հոկտեմբերին հայտարարվող *Մամուլի ազատության համաշխարհային ցուցիչը:*

Այս կազմակերպությունը մասնաճյուղեր ունի ինը երկրներում, ինչպես նաև գրասենյակներ Փարիզում, Նյու Յորքում, Տոկիոյում և Վաշինգտոնում (Կոլումբիայի շրջան) և ավելի քան 120 թղթակիցների ցանց այլ երկրներում:

Արհեստավարժ լրագրողների հասարակություն (ԱԼՀ)

http://www.spj.org

Միացյալ Նահանգներում գործող լրագրողների ամենամեծ կամավորական ընկերակցությունը ծավալում է լոբբիստական գործունեություն և պայքարում է հանուն մամուլի ազատության: Այն ներկայացնում է անկախ փորձագիտական եզրակացություններ, հարուցում է դատական գործեր և հանդես է գալիս ԱՄՆ-ում և այլ երկրներում վտանգված լրագրողների անունից: Հազարավոր լրագրողներ կամավոր կերպով ընդունում են ԱԼՀ-ի Էթիկայի կոդեքսը, որը հաճախ անվանում են ԱՄՆ-ում մեդիա էթիկայի ամենահեղինակավոր վարքականոն:

Ուջիմա Ծրագիր

http://www.ujima-project.org

Տվյալների բազաների, փաստաթղթերի և այլ տեղեկատվության իր հավաքածուով 2009թ. սեպտեմբերից Ուջիմա ծրագիրը փորձում է ավելի թափանցիկ դարձնել աֆրիկյան պետությունների կառավարությունների աշխատանքը, հատկապես այն երկրներում, որտեղ չեն գործում տեղեկատվության ազատության մասին օրենքներ: Նրան աջակցում է Մեծ լճերի մեդիա ինստիտուտը (http://www.greatlakesmedia.org/): Այս հասարակական կազմակերպության առաքելությունն է խրախուսել արհեստավարժ և էթիկական բարձր չափանիշներին համապատասխանող լրագրությունն Աֆրիկայի՝ Սահարա անապատից հարավ ընկած հատվածում:

Լրացուցիչ ռեսուրսներ

Բացի վերը նշված կազմակերպություններից և էլեկտրոնային կայքերից, հետևյալ աղբյուրներն առաջարկում են զանգվածային լրատվության միջոցներին առնչվող օրենքների և էթիկայի վերաբերյալ հրատարակումների և այլ ռեսուրսների լայն բազմազանություն.

Առցանց աղբյուրներ

Զանգվածային լրատվամիջոցների էթիկայի միջազգային կենտրոն

http://www.cimethics.org/

- Լրագրողական էթիկայի աղբյուր էջ: Կենտրոնը կազմակերպում է ամենամյա գիտաժողով, ապահովում է ուսուցում և ներկայացումներ, հրատարակում է ամենամյա տեղեկագիր լրագրողական էթիկայի վերաբերյալ:

ԷթիկՆեթ

http://ethicnet.uta.fi/codes_by_country

- Լրագրողական էթիկայի կոդեքսների հավաքածու՝ դասակարգված ըստ երկրների:

ԶԼՄ օրենքների ռեսուրս կենտրոն

http://www.medialaw.org

- Շահույթ չհետապնդող տեղեկատվական կենտրոն, որին աջակցում են մեդիա կազմակերպություններ և իրավաբանական ընկերություններ՝ մոնիթորինգի ենթարկելու և զարգացնելու Առաջին

փոփոխությունից բխող իրավունքների իրացումը զրպարտանքի, անձնական կյանքի գաղտնիության և հարակից իրավական ոլորտներում:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)

http://www.osce.org/resources/

- ԵԱՀԿ ռեսուրսների կայքէջը ներառում է հղումներ «ՋԼՄ-ների ազատություն» թեմայով նյութերին:

«Լրագրության օմբուդսմեն» կազմակերպություն

http://newsombudsmen.org/

- Էլեկտրոնային կայք, որը հիմնված է անկախ, ռեզիդենտ օմբուդսմենի հասկացության վրա, որը լրագրողների ինքնակարգավորման պարզ, սակայն արդյունավետ եղանակ է:

Մեդիա էթիկայի և օրենքների ուսումնասիրության Սիլհա կենտրոն

http://www.silha.umn.edu

- Կենտրոնի առաջնային գործառույթը հետազոտություն կատարելն է այն ոլորտներում, որտեղ զուգամիտվում են իրավական և էթիկական խնդիրները: Կենտրոնը նաև մոնիթորինգի է ենթարկում այն փոփոխությունները, որոնք ի վերջո կարող են հայտնվել օրենքում կամ լրագրողական պրակտիկայում:

ՅՈՒՆԵՍԿՕ

http://unesdoc.unesco.org/ulis/index.shtml

- Փաստաթղթերի և հրապարակումների էլեկտրոնային էջը տալիս է որոնման հնարավորություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի հրապարակումներում:

Նոր գրքերի ընտրանի

Գլասեր Չարլզ Ջեյ (խմբ.) *Միջազգային զրպարտանքի և անձնական կյանքի գաղտնիության ձեռնարկ*, 2-րդ հրատարակություն, Նյու Յորք, Նյու Յորք նահանգ. Բլումբերգ փրես, 2009թ.

Առաջին փոփոխության ձեռնարկ. Առլինգտոն, Վիրջինիա. Լրագրողների կոմիտեն հանուն մամուլի ազատության, 2003թ. http://www.rcfp.org/handbook/index.html

Քիթրոս Ջոն Մայքլ. *Էթիկայի հետագիծը՝ մեդիայի անցյալի, ներկայի և ապագայի տեսակետները*, Ուրբանա, Իլինոյս. Իլինոյսի համալսարան/Հաղորդակցությունների հետազոտությունների ինստիտուտ, 2008թ.

Սթերլինգ, Քրիստոֆեր Էյջ. *Լրագրության հանրագիտարան*, Թաուզանդ Օուքս, Կալիֆորնիա նահանգ. Սեյջ փաբլիքեյշնզ կորպորացիա, 2009թ.

Վայլ Ջոն Ռ., Դեյվիդ Լ. Հադսոն կրտսեր և Դեյվիդ Շուլց (խմբագիրներ). *Առաջին փոփոխության հանրագիտարան*, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, Սի-Ջյու փրես, 2009թ.

Վայսենհաուս, Դորին. *Հոնգ Կոնգի մեդիա օրենքները. ուղեցույց լրագրողների և մեդիա պրոֆեսիոնալների համար*, Հոնգ Կոնգ, Հոնգ Կոնգի համալսարանի հրատարակչություն, 2007թ.

Ուենդել, Քերոլին Ար. *Վիրավորելու, ցնցելու կամ անհանգստացնելու իրավունքը*, Ռեստոն, Վիրջինիա, Մամուլի ազատության համաշխարհային կոմիտե, 2009թ.

ԱՄՆ ՊԵՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՐՈ
http://www.america.gov/publications/books/media_law.html
handbooks@state.gov